9. Мостовский В.Б. Исследование процесса обработки приствольных полос в интенсивных садах вертикальными фрезами и обоснование типов и параметров их рабочих органов. - Кишинев, 1980. - 206 с.
10. Пархоменко Г.Г. Обработка почвы в рядах садов и виноградников. Процессы, устройства. Saarbrücken: LAP LAMBERT Academic Publishing, 2012. - 148 с.

11. Чудак С.В. Исследование и разработка вертикальной фрезы для поверхностной обработки почвы в виноградниках. - Кишинев, 1973. - 149 с.
12. ՀՀ Արտոնագրեր N 2453A, 2010 թ., N 2698A, 2013 թ., N 3024A, 2016 թ., N 2993A, 2016թ., N 3143A, 2017թ., N 3368A, 2020 թ.:
13. Baraldi, G. (1966). Macchine per la lavorazione nel frutteto e Agricole. - Vol. 24. - N 27.
14. Tarverdyan, A.P., Hayrapetyan, H.H. (2019). Kinematic and Dynamic State of the Rotary Crusher Transmission Gear in the Potato Digger. Agriscience and technology, Armenian National Agrarian University, Yerevan, N4 (68).

Պտղատու այգիների պլանետարային հաղորդակով հողամշակ ֆրեզի կինեմատիկական հետազոտություն

Ա.Պ. Թարվերդյան, Ա.Ս. Գրիգորյան, Ա.Վ. Ալթունյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Բանալի բառեր՝ պլանետարային մեխանիզմ, էպիցիկլոիդ, հողամշակ ֆրեզ, դանակի հետագիծ, դանակի արագություն

Ամփոփագիր: Կատարվել է այգիների մերձբնային տարածությունների մշակության մեքենաների դասակարգում և համեմատական գնահատում՝ ըստ ագրոտեխնիկական պահանջների համապատասխանությամբ:

Հաստատվել է, որ այդ պահանջներին համապատասխանում են ուղղաձիգ պտտման առանցքով ֆրեզները: Դրանց կատարելագործման արդյունքում առաջարկվել է արտաքին կառչմամբ պլանետարային մեխանիզմով ֆրեզ-մեքենա, որը ռոտորի փոքր պտույտների դեպքում ապահովում է դանակների սկավառակի մեծ պտուտաթվեր: Կատարվել է փոխանցումային մեխանիզմի կինեմատիկական վերլուծություն, ստացվել են դանակի հետագծի, արագության, արագացման որոշման անալիտիկ արտահայտություններ՝ կախված ռոտորի պտտման հաճախությունից և մեխանիզմի փոխանցման թվից:

Kinematic Study of Orchard Rotary Tiller with a Planetary Drive

A.P. Tarverdyan, A.S. Grigoryan, A.V. Altunyan

Armenian National Agrarian University

Keywords: planetary drive, epicycloid, rotary tiller, knife trajectory, knife speed

Abstract. Classification and comparative assessment of machines for processing the near-trunk zone of orchards regarding their compliance with agrotechnical requirements has been carried out.

It has been established that cutters with a vertical rotation axis meet the mentioned requirements. As a result of their updating, a cutting machine with planetary mechanism with external gearing is recommended, which provides a large rotation number of the knife disk at low rotor speeds. Kinematic analysis of the transmission mechanism has been carried out, analytical expressions have been derived to determine the trajectory, speed, acceleration of the knife depending on the rotor frequency and gear ratio of the mechanism.

Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке МО НК РА в рамках научного проекта № 21APP-2D015.

Принята: 21.07.2022 г.
Рецензирована: 07.09.2022 г.



ՀՏԴ 633:631.674

ԿԱՆԱՀ ԿԵՐԻ ԱՃԵՑՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ՃՈՊԱՆԱՅԻՆ ԶԱՐԵՈՎ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՅՎԱԾԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

Ս.Ե. Մարգարյան *տեխ.գ.դ.*, Ա.Գ. Մազմանյան *տեխ.գ.թ.*, Գ.Յ. Դանիելյան *տեխ.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

smarkaryan1@gmail.com, armmaz@mail.ru, gevorgdanielyan1956@gmail.com

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Քանալի բառեր՝

վիտամին,
ծլեցում,
շարժաբեր,
մետաղաճուպան,
հարկաշար

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հիդրոպոնիկ եղանակով կանաչ կերի արտադրությունում կիրառվող տարբեր տեխնոլոգիաների ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և շահագործվել է ոռոգման մետաղաճուպանային քարշով ավտոմատ համակարգ: Գիտափորձերի և արտադրական փորձարկումների ընթացքում կատարվել են առաջարկվող համակարգի շահագործման ռեժիմների հաշվարկներ, օպտիմալացվել են անհրաժեշտ պարամետրերը, հիմնավորվել են ոռոգման հավասարաչափությունը, արդյունավետությունը, ինչպես նաև ոչ ծախսատարությունը:

Նախաբան

Մսուրային շրջանում գյուղատնտեսական կենդանիների հիմնականում կերակրում են քիչ քանակությամբ վիտամիններ պարունակող չոր կերատեսակներով (խոտ, ծղոտ, քիչ քանակությամբ ֆուրաժային հատիկ), ինչը բացասաբար է անդրադառնում կենդանիների առողջության և մթերատվության վրա: Զանի որ գյուղացիական տնտեսությունների համար երկաթբետոնե ամբարների կառուցումը ծախսատար է, վիտամիններով հարուստ սիլոս և սենած չեն պատրաստում: Ուստի կերաբաժնում վիտամինների անհրաժեշտ քանակությունն ապահովելու նպատակով առաջարկվում է ընտրել համեմատաբար էժան տարբերակ, այն է՝ կազմակերպել կենդանիների համար օգտակար, վիտամիններով հարուստ կանաչ կերի հիդրոպոնիկ արտադրություն (А. Коробов, Г. Арзуманян, 2016, Д.Ш. Авкопашвили, З.Д. Гильман, 1990, А.А. Алиева, 1986, А. Голубков, 2002, А.П. Коробов, С.П. Москаленко, 2006, К.К. Залогин, 2002):

Հայաստանում հիդրոպոնիկ եղանակով կանաչ կերի ար-

տադրությունում հատիկների ծլեցումն իրականացվում է հատուկ պահարաններում և անմիջապես աճեցման հարկաշարերում, իսկ աճեցումը կատարվում է տարբեր եղանակներով: Հաշվի առնելով ոլորտում առկա խնդիրները՝ արտադրական գիտափորձերի ընթացքում մշակել և փորձարկել ենք հատիկների ծլեցման ու կանաչ կերի աճեցման մի քանի եղանակներ: Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել հարթ ծակոտկեն հարկաշարերի վրա հատիկների ծլեցմանը և աճեցմանը:

Նյութը և մեթոդները

Զանի որ կանաչ կերատեսակների արտադրության եղանակները բազմաթիվ են, ուստի մշակվել են հատիկների ծլեցման ու կանաչ կերի աճեցման համապատասխան մեթոդներ (Е.Г. Самойлов, 1987, Н.С. Яковчик, Г.Г. Мордань, 2017, А. Коробов, Г. Арзуманян, 2016):

Կանաչ կերի արտադրական պրոցեսներից կարևորվում են հատկապես խոնավացման եղանակի ճիշտ ընտրությունը և իրականացումը:

Սովորաբար, արտադրական ծավալներով պայմանավորված, խոնավացումը կատարվում է ձեռքի գործիքներով, մեքենայացված և ավտոմատացված եղանակներով: Դրանց սխալ ընտրության դեպքում նվազում է կանաչ կերի բերքատվությունը, ընկնում է որակը, երբեմն՝ երկարաձգվում վեգետացիայի շրջանը:

Միաժամանակ կարևորվում է նաև խոնավացման համակարգի շահագործումը. Նորմայից քիչ խոնավացնելու դեպքում բույսը ծարավ է մնում, աճը դանդաղում է, Նորմայից ավելի խոնավացնելու արդյունքում արմատական համակարգում առաջանում են նեխման պրոցեսներ, կերը որակավորվում է, լուծույթի (ջրի) ծախսը՝ մեծանում:

Մի շարք ուսումնասիրությունների և հետազոտությունների (Ս.Ե. Մարգարյան, 2018, Գ.Ս. Давтян, М.А. Бабаханян, 1977) համաձայն՝ խոնավացման լավագույն եղանակը պահանջվող Նորմայով ճշման ազդեցությամբ փոշիացվող լուծույթի նստեցումն է աճող բույսի վրա: Այս դեպքում բույսն ու դրա արմատները խոնավանում են պահանջվող չափով, և լուծույթի կորուստ գրեթե տեղի չի ունենում:


Խոնավացման նման եղանակ կիրառվում է նաև կանաչ կերի արտադրության արտասահմանյան տեղակայանքներում: Այդպիսի երկու տեղակայանք գործում է նաև Հայաստանում, որոնց արտադրական փորձարկումների արդյունքները դրական են:

Նշված տեղակայանքներում 0,4×0,6 չափերով յուրաքանչյուր արկղի վրա տեղակայված է մեկ սրսկիչ ծայրապանակ: Ճշման ազդեցությամբ դրանից ցայտող լուծույթի կոնական շիթը հավասարաչափ չի խոնավացնում արկղի ամբողջ մակերևույթը: Խոնավացման հավասարաչափությունը կարգավորելու համար ծախսվում է Նորմայից ավելի լուծույթ, միաժամանակ ավելանում է լուծույթի կորուստը: Մյուս թերությունն այդ տեղակայանքների կառուցվածքի բարդությունն է. ծլեցման և աճեցման արկղերը շատ են, սպասարկումը՝ աշխատատար, ուստի տնտեսության պայմաններում հնարավոր չէ դրանք պատրաստել (Նկ. 1):



Նկ. 1. Բալսիովիտի անասնապահական ֆերմայում գործող կանաչ կերի արտադրության տեղակայանքի արկղերի կառուցվածքը և դիրքը:

Նշված թերությունները վերացնելու, ծայրապանակների թիվը կրճատելու և դրանք անխափան շահագործելու նպատակով հաշվարկվել, նախագծվել, պատրաստվել, ինչպես նաև գիտափորձերով օպտիմալացվել են բոլոր անհրաժեշտ պարամետրերն ու շահագործման ռեժիմները: Առաջարկվող Նոր համակարգի կառուցվածքային սխեման ներկայացված է Նկար 2-ում, իսկ ընդհանուր տեսքն աշխատանքի պահին՝ Նկար 3-ում:



Նկ. 2. Կանաչ կերի արտադրության տեղակայանքի խոնավացման համակարգի կառուցվածքային սխեման (կազմվել է հեղինակների կողմից). 1 - բազմափայտության թվբուկ, 2 - մետաղաձուլակ, 3 - ուղղապատի հողովակներ, 4 - լուծույթի մատուցման խողովակ, 5 - մետաղական լար, 6 - մետաղական օղակներ, 7 - լուծույթի փողրակ, 8 - ցնցողատար անիվներ, 9 - անուր, 10 - ցնցողներ, 11 - կոնական շիթեր, 12 - կրող լար, 13 - աճեցվող բույս, 14 - զսպանակ, 15 - ձգող հողովակ, 16 - հարկաշարեր, 17 - ավելորդ լուծույթ, 18 - աշխատանքային օրգան, 19 - շաղափված անցքեր, 20 - առվակներ, 21 - կուտակիչ առվակ, 22 - ռետուկտոր, 23 - փոկային փոխանցում, 24 - էլեկտրաշարժիչ:



Նկ. 3. Կանաչ կերի արտադրության Նոր համակարգի ընդհանուր տեսքն աշխատանքի պահին:

Կանաչ կերի արտադրության առաջարկվող տեղակայանքը բաղկացած է երեք հիմնական հանգույցներից՝ հարկաշարերից, լուծույթի սրկման համակարգից և աշխատանքային օրգաններին շարժում հաղորդող ճոպանաշփական էլեկտրաշարժաբեղից:

Հարկաշարերի կմախքը պատրաստված է մետաղական անկյունակներից և քառանկյուններից, իսկ հարթակները՝ պլաստմասսե թիթեղներից, որոնց երկարությամբ առանձնացված են միջթիթեղային առվակներ: Թիթեղների վրա՝ հարթակների վերևի մակերեսին բացված են ավելորդ լուծույթը հեռացնելու համար նախատեսված անցքեր:

Լուծույթը սրկելու համար անշարժ մետաղական լարերի վրա տեղակայված է սրկող չորս ծայրապանակներով անվավոր հարմարանք: Հարկաշարերի երկարությամբ աշխատանքային օրգանները շարժաբեղով են մետաղաճոպանի օգնությամբ:

Ճոպանաշփական համակարգը բաղկացած է էլեկտրաշարժաբեղից, բազմափաթեղային թմբուկից, ձգող սարքից և մետաղաճոպանից: Ամբողջ աշխատանքն ավտոմատացված է: Թողարկման ռեժիմները տեղակայված են էլեկտրապահարանում, իսկ կանգառի համար նախատեսված անջատիչը՝ հարկաշարի վերջնամասում:

Արդյունքները և վերլուծությունը

Գիտափորձերի և արտադրական փորձարկումների ընթացքում կատարվել են առաջարկվող նոր տեղակայանքի հաշվարկներ, ճշգրտվել են ճոպանային քարշով համակարգի էլեկտրաշարժաբեղի անհրաժեշտ կառուցվածքը և պարամետրերը:

Էլեկտրաշարժաբեղի կառուցվածքը և համապատասխան պարամետրերն ընտրելու համար որոշվել են սրկող ցնցուղներից լուծույթի անհրաժեշտ ելքը, հարկաշարերի երկարությամբ սրկիչների արագությունը և դիմադրության ուժը:

Հարկաշարերի երկարությամբ լուծույթի սրկիչների շարժման արագությունը որոշելու համար նախ մասնագիտական գրականությունից վերցված տվյալների և մեր կողմից կատարված գիտափորձերի արդյունքների հիման վրա ճշգրտվել է լուծույթի պահանջը 1 մ^2 հաշվով՝ ըստ մշակաբույսերի: Գարու համար այն կազմել է մոտավորապես $q_{\text{լ.այ}} = 0,82 \text{ լ/մ}^2$: Այնուհետև որոշվել է միավոր ժամանակում ցնցուղներից դուրս եկող փոշիացած լուծույթի ծավալը. մեկ ցնցուղից 10 վայրկյանում լուծույթի ելքը ($q_{\text{ել.}}$) կազմել է $0,268 \text{ լ}$, չորս ցնցուղներից՝ մոտավորապես $1,1 \text{ լ}$: Մեկ վայրկյանում չորս ցնցուղներից լուծույթի ելքը կազմել է $0,11 \text{ լ/վրկ}$, ցնցուղների ընդգրկման լայնությունը՝ 1 մ :

6 մ երկարությամբ հարկաշարի 6 մ^2 ոռոգվող մակերեսը խոնավացնելու համար պահանջվող լուծույթի ընդհանուր ծավալը (I) որոշվել է հետևյալ բանաձևով.

$$q_{\text{ընդ.}} = b \ell q_{\text{լ.այ}}, \quad (1)$$

որտեղ b -ն չորս ցնցուղների ընդհանուր ընդգրկման լայնու-

թյունն է, $b=1 \text{ մ}$, ℓ -ը՝ հարկաշարի երկարությունը, $\ell=6 \text{ մ}$, $q_{\text{լ.այ}}$ -ն՝ 1 մ^2 վրա աճեցվող բույսերի պահանջը լուծույթի նկատմամբ, $q_{\text{լ.այ}}=0,82 \text{ լ/մ}^2$:

Համապատասխան մեծությունների արժեքները (1) բանաձևում տեղադրելու արդյունքում ստացվել է՝ $q_{\text{ընդ.}}=4,92 \text{ լ}$:

4,92 լ լուծույթը 6 մ երկարությամբ հարկաշարի վրա ցրելու համար սրկիչի (մետաղաճոպանի) շարժման անհրաժեշտ արագությունը որոշվել է հետևյալ բանաձևով.

$$V_u = \frac{\ell}{t} = \frac{\ell q_{\text{ել.}}}{q_{\text{ընդ.}} \cdot t_{\text{վ}}}, \quad (2)$$

որտեղ $t_{\text{վ}}$ -ն չորս ցնցուղներից $0,11 \text{ լ}$ լուծույթի ելքի տևողությունն է, $t_{\text{վ}}=1 \text{ վ}$:

Համապատասխան մեծությունների արժեքները (2) բանաձևում տեղադրելու համաձայն՝ $V_u=0,134 \text{ մ/վ}$:

Էլեկտրաշարժաբեղի փոխանցման թիվը, էլեկտրաշարժիչի հզորությունը և պտուտաթվերը հաշվարկելու համար որոշվել են ճոպանաշփական թմբուկի պտուտաթվերը և սրկիչի քարշային ուժը:

Պտուտաթվերը որոշվել են հետևյալ բանաձևով.

$$n_2 = \frac{30V_u}{\pi \cdot R_2}, \quad (3)$$

որտեղ n_2 -ն ճոպանաշփական թմբուկի պտուտաթվերն են, R_2 -ն՝ թմբուկի շառավիղը, $R_2 = 85 \text{ մմ}$:

Համապատասխան մեծությունների արժեքները (3) բանաձևում տեղադրելու արդյունքում ստացվել է՝ $n_2=0,15$ պտ/վրկ:

Կանաչ կերի աճեցման երկու հարկաշարերում ոռոգող ցնցուղներին տեղափոխող մետաղաճոպանի առավելագույն քարշային ուժը կազմել է՝ $P=82 \text{ կգ-ուժ}$, էլեկտրաշարժաբեղի էլեկտրաշարժիչի պահանջվող հզորությունը՝

$$N_{\text{էլ.}} = \frac{N_{\text{բ.}}}{\eta_{\text{ընդ.}}}, \quad (4)$$

որտեղ $N_{\text{բ.}}$ -ն ճոպանաշփական թմբուկի պահանջվող հզորությունն է, որը որոշվում է հետևյալ արտահայտությամբ.

$$N_{\text{բ.}} = \frac{PV}{102\eta_2}, \quad (5)$$

որտեղ η_2 -ն շփական թմբուկի օ.գ.գ-ն է, $\eta_2=0,72$:

Էլեկտրաշարժաբեղի ընդհանուր օ.գ.գ-ն որոշվել է հետևյալ բանաձևով.

$$\eta_{\text{ընդ.}} = \eta_{\text{փ.}} \cdot \eta_{\text{որդ.}} \cdot \eta_{\text{առ.}}, \quad (6)$$

որտեղ $\eta_{\text{փ.}}$ -ն փոկային փոխանցման օ.գ.գ-ն է, $\eta_{\text{փ.}}=0,87$, $\eta_{\text{որդ.}}$ -ը՝ որոնակային ռեդուկտորի օ.գ.գ-ն, $\eta_{\text{որդ.}}=0,80$, $\eta_{\text{առ.}}$ -ը՝ առանցքակալների օ.գ.գ-ն, $\eta_{\text{առ.}}=0,99$:

Համապատասխան արժեքները նախ (5), (6), ապա (4)


բանաձևերում տեղադրելու արդյունքում որոշվել է էլեկտրաշարժաբերի էլեկտրաշարժիչի պահանջվող հզորությունը՝ $N_{\text{էլ}} = 0,22$ կՎտ:

Կարելի է ընտրել $4AX71A6V3$ էլեկտրաշարժիչը. հզորությունը՝ 0,37 կՎտ, պտուտաթվերը՝ 1000 պտ/ր, ինչպես նաև $7H-M28$ միաստիճան որդնյակային ռեդուկտորը. փոխանցման թիվը՝ 56, սեպային փոկային փոխանցման թիվը՝ 2:

Թեև շփումով աշխատող բազմափայթյթային պարզագույն թմբուկները մյուսների համեմատությամբ ունեն որոշ թերություններ (Ս.Ե. Մարգարյան, 2020), այնուամենայնիվ երաշխավորվում է դրանք կիրառել կանաչ կերի արտադրության՝ ճոպանատար շարժաբերում, քանի որ վերջինս չափերով փոքր է և մեծ հզորություն չի պահանջում: Արդյունքում, բազմակոսային ճոպանատար շարժաբերների համեմատությամբ, ստացվում է կոմպակտ շարժաբերային կայան (նկ. 2): Բացի այդ՝ միաթմբուկ հաղորդակային կայանը հպման ժամանակ չի պահանջում ճշգրիտ կարգավորում, կառուցվածքով պարզ է, ոչ խոշոր: Եթե երկթմբուկ հաղորդակում թմբուկային հենարանների վրա ազդեցություն են գործում ճոպանի ճյուղերի ձգումից առաջացող մեծ ուժեր՝ $S_1 + S_2 + S_3 + \dots + S_n \cos \alpha_k$, ապա միաթմբուկի դեպքում թմբուկի հենարանի (լիսեռի) վրա գործադրվում է ընդամենը $S_{\text{տ}} - S_{\text{ա}}$ ուժը:

Ճոպանատար թմբուկի վրա ճոպանը փաթաթվում է պարուրածն (1-3 գալար): Թմբուկի կորածնության շնորհիվ աշխատանքի ժամանակ գալարները տեղաշարժվում են՝ սահելով դեպի թմբուկի փոքր տրամագիծը:

Բազմագալար ճոպանաշփական թմբուկի հաշվարկային սխեման ներկայացված է նկար 4-ում:



Նկ. 4. Բազմագալար ճոպանաշփական թմբուկի հաշվարկային սխեման (Ս.Ե. Մարգարյան և ըր., 1969):

y_z հարթությունում թմբուկի պրոֆիլը ներկայացնում է՝

$$y = y_0 + f(z), \quad (7)$$

որտեղ y_0 -ն ճոպանատար թմբուկի ամենափոքր շառավիղն է:

Ընդունենք, որ ճոպանը տարրական տեղամասում սեղմում է թմբուկը dR ուժով: Թմբուկի վրա ազդող $dR \sin \alpha$ շոշափող ուժը ձգտում է սահեցնել ճոպանը z առանցքի ուղղությամբ՝ դեպի թմբուկի փոքր տրամագիծը: Սահքին դիմադրում է $f dR \cos \alpha$ ուժը, որտեղ f -ը շփման գործակիցն է:

Ակնհայտ է, որ ճոպանի գալարների սահքը տեղի կունենա հետևյալ պայմանի դեպքում.

$$dR \sin \alpha \geq f dR \cos \alpha:$$

Հաշվի առնելով, որ $dR = S d\varphi$, որտեղ S -ը ճոպանի ձգվածությունն է, φ -ն՝ թմբուկի շրջագծի վրա ընդգրկման անկյունը, ստացվում են ճոպանի շարժման $S \sin \alpha d\varphi$ ուժը և դրան հակառակ ազդող $dF = -f \sin \alpha d\varphi$ շփման ուժը:

Վերջնական ճիգի դեպքում՝

$$dQ = S(\sin \alpha - f \cos \alpha) d\varphi, \quad (8)$$

Ճոպանի գալարների զբաղեցրած տեղամասի լայնության, դրա d տրամագծի և ընդգրկման α անկյան միջև գոյություն ունի հետևյալ կախվածությունը (Ս.Ե. Մարգարյան և ըր., 1969).

$$z = d \cos \alpha \frac{\varphi}{2\pi}, \quad (9)$$

որտեղից՝

$$d\varphi = \frac{2\pi}{d \cos \alpha} dz: \quad (10)$$

Թեթևության α փոփոխական անկյունով թմբուկի համար գործում է հետևյալ կախվածությունը.

$$S = S_{\text{ա}} e^{\int_0^{\varphi} \cos \alpha d\varphi}, \quad (11)$$

որը մասնավոր դեպքում գլանաձև թմբուկների համար վերափոխվում է՝ $S = S_{\text{ա}} e^{af}$:

Վերջինիս համաձայն՝ կարելի է վերափոխել (8) բանաձևը՝ (9) և (10) բանաձևերից տեղադրելով համապատասխան արժեքները՝

$$dQ = \frac{2\pi}{d} S_{\text{ա}} e^{\frac{2\pi f}{d} z} \cdot (\tan \alpha - f) dz: \quad (12)$$

Հաշվի առնելով, որ $\tan \alpha = f'(z)$, z առանցքի ուղղությամբ գործող վերջնական Q ուժը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \int_0^{\varphi} dQ = \frac{2\pi}{d} S_{\text{ա}} \int_{x_1}^{x_2} e^{\frac{2\pi f}{d} z} \cdot [f'(z) - f] dz: \quad (13)$$

Պարաբոլային թմբուկի համար գալարների անշարժության $[f(z) = 2bz]$ պայմանը z առանցքի նկատմամբ ընդունվում է՝

$$Q = \frac{2\pi}{d} S_{\text{պ}} \int_{z_1}^{z_2} e^{\frac{2\pi f}{d} z} \cdot (2bz - f) dz = 0: \quad (14)$$

Թմբուկով փոխանցվող ճիգը կարելի է որոշել ըստ հետևյալ բանաձևի.

$$P_p = S_{\text{պ}} (e^{\frac{2\pi f}{d} z_0} - 1): \quad (15)$$

Նկար 6-ի համաձայն՝ գործնական հաշվարկների համար կարելի է ստանալ $\frac{z_0}{d} \approx n \cos \alpha$, որտեղ n -ը ճոպանի գալարների թիվն է:

Արդյունքում (15) բանաձևը կընդունի հետևյալ տեսքը.

$$P_p = S_{\text{պ}} (e^{2\pi f n \cos \alpha} - 1), \quad (16)$$

իսկ շփման գործակիցը՝ հաստատուն:

Ըստ արտադրական փորձարկումների՝ երկու հարկաշարերի դեպքում մեկ փաթույթը (2π) բավարար է:

Եզրակացություն

Այսպիսով՝ հիդրոպոնիկ եղանակով կանաչ կերի արտադրությունում կիրառվող տարբեր տեխնոլոգիաների ուսումնասիրությունների արդյունքում մշակվել և շահագործվել է ոռոգման մետաղաճոպանային բարձր ավտոմատ համակարգ: Տեսական և գիտափորձական հետազոտություններով օպտիմալացվել են համակարգի անհրաժեշտ պարամետրերը:

Արտադրական փորձարկումների համաձայն՝ ավտոմատացված համակարգն ապահովում է լուծույթի փոշիացման արդյունավետություն, ոռոգման հավասարաչափություն, տնտեսում է լուծույթի ծախսը, բարձրացնում արտադրողականությունը և իջեցնում կերի ինքնարժեքը:

Կանաչ կերի մեծածավալ արտադրության դեպքում առաջարկվում է բազմահարկ հարկաշարերում կիրառել մեկ ընդհանուր էլեկտրահաղորդակով նոր ավտոմատ համակարգը:

Գրականություն

1. Մարգարյան Ս.Ե. Կենսագազային տեղակայանքներ. - Եր.: Մեկնարկ, 2020. - 470 էջ:

2. Մարգարյան Ս.Ե. Հիդրոպոնային կերի անեցումը մեթալային խմորման մթերքների օգտագործումով // Материалы международной научной конференции, по актуальным проблемам развития сельского хозяйства в республике Армения. - Ер.: НАУА, 2018. - С. 306-310.
3. Авкопашвили Д.Ш., Гильман З.Д. Пророщенное зерно в рационах осеменённых свиноматок // Вопросы полноценности кормления сельскохозяйственных животных и качество кормов: сб. науч. тр. - Горки, 1990. - С. 19.
4. Биологические основы использования нетрадиционных кормов в животноводстве: сб. науч. тр. / Под ред. А.А. Алиева. - Том 23. - 1986.
5. Голубков А. Использование гидропонной зелени в птицеводстве и молочном скотоводстве // Животноводство. - 2002. - N 7-8. - С. 12.
6. Давтян Г.С., Бабаханян М.А. Непрерывное гидропоническое производство свежего травяного корма. - Ер.: Изд. АН АрмССР, 1977. - 71 с.
7. Залогин К.К. Повышение воспроизводительной функции хряков при использовании в рационах пророщенного зерна ячменя: автореф. дисс. д-ра ветеринарных наук. 06.02.04. - Белгород, 2002.
8. Коробов А., Арзуманян Г. Гидропонный зеленый корм. - LAP LAMBERT Academic Publishing, 2016. - 72 с.
9. Коробов А.П., Москаленко С.П. Эффективность использования сенажа из упаковки в составе кормосмеси для дойных коров // Аграрный научный журнал. - 2006. - N 2. - С. 18-20.
10. Маркарян С.Е., Оганесян С.В., Худоян Р.В. Теоретические и экспериментальные исследования приводной станции канатной тяги // Труды АрмНИИМЭСХ. - 1969. - Вып. 7. - С. 250-263.
11. Самойлов Е.Г. Гидропонный метод выращивания зеленых кормов и использование их в свиноводстве // Рекомендации Госагропрома СССР по внедрению достижений науки и практики в производство. - М., 1987. - Вып. 7. - С. 29-32.
12. Яковчик Н.С., Мордань Г.Г. Зеленый гидропонный корм – круглый год // Ветеринария и животноводство. - М., 2017. - N 4. - С. 2-7.

Конструкция и расчет параметров системы орошения с канатной тягой для выращивания зеленых кормов в помещении

С.Е. Маркарян, А.Г. Мазманын, Г.А. Даниелян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: *витамины, всхожесть, привод, металлический трос, стеллаж*

Аннотация. В результате исследования различных технологий, применяемых при гидропонном выращивании зеленого корма, была разработана и введена в эксплуатацию система автоматического полива с металлической канатной тягой. В ходе научных экспериментов и производственных испытаний произведены расчеты режимов работы предлагаемой системы, оптимизированы необходимые параметры, обоснованы равномерность и эффективность орошения, а также его экономичность.

The Structure of Cable Traction Irrigation System and Calculation of its Required Parameters for the Green Fodder Growing Production Site

S.E. Margaryan, A.G. Mazmanyany, G.H. Danielyan

Armenian National Agrarian University

Keywords: *vitamin, shoot, drive, steel cable, whatnot*

Abstract. Automated irrigation system with steel cable traction has been developed and operated as a result of investigation of various technologies applied in the production of green fodder via hydroponic method. Throughout the scientific experiments and production testing calculations of operating regimes for the recommended system was conducted, the required parameters were optimized, irrigation uniformity and cost efficiency was justified.

*Ընդունվել է՝ 27.05.2022 թ.
Գրախոսվել է՝ 20.07.2022 թ.*



ՀՏԴ 631.15:634.8

ՀՀ ԽԱՂՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Ե. Ոսկանյան *տ.գ.թ.*, Ա.Յ. Հարությունյան *տ.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ashot.voskan@gmail.com, armanhar@list.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

խաղողագործական
տնտեսություններ,
դասակարգում,
արդյունավետություն,
խնդիրներ,
լուծման ուղիներ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գյուղատնտեսության ճյուղերի, այդ թվում՝ խաղողագործության զարգացման բաղաբաժնայինությունը հիմնականում պայմանավորված է ոլորտում գործող տնտեսությունների դասակարգվածությամբ, դրանց գործունեության վերաբերյալ տեղեկատվության առկայությամբ և բնորոշ խնդիրների վերահսկմամբ:

Ուսումնասիրությունների և կատարված հաշվարկների հիման վրա հորվածում ենք կայացվել են Հայաստանում գործող խաղողագործական տնտեսությունների դասակարգման մոտեցումները, տնտեսական գործունեության վերլուծությունը, փաստացի տնտեսական արդյունավետությունը, առկա խնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիները:

Նախաբան

Գյուղատնտեսական առաջնային արտադրական միավորները, ըստ գործունեության ոլորտների և մի շարք այլ չափանիշների, տարբեր են: Դրանցից յուրաքանչյուրի խնդիրները բացահայտելու և լուծումներ առաջադրելու համար կարևոր նախադրյալներից է վերջիններիս դասակարգման իրականացումը:

Հարկ է նշել, որ արտադրական միավորները, ըստ ընդհանրությունների, դասակարգվում են առանձին խմբերի կամ տեսակների (www.agriinfo.in):

Գյուղատնտեսական արտադրությունն ապահովող միավորները կարող են դասակարգվել ըստ տնտեսությանը պատկանող հողատարածքի, կատարված ներդրումների կամ ստացվող եկամուտների, կիրառվող տեխնիկական միջոցների, արտադրված արտադրանքի իրացվելիության մակարդակի, ապրանքային արտադրանքի կառուցվածքի և այլն (Tamás Kismányoky, et al., 2016):

Օրինակ՝ Մակեդոնիայում գյուղատնտեսական արտադրական միավորները, ըստ տարեկան եկամտի, դասակարգվում են 14 խմբի, որոնցից 1-ինում ներառվում են տարեկան մինչև 1999 եվրո, 14-րդում՝ 300 հազար եվրոյից ավելի եկամուտ ունեցող միավորները: Ըստ տնտեսությունների հողատարածքների զբաղեցրած ընդհանուր մակերեսի՝ դասակարգվում են 7 խմբի՝ մինչև 0,5, 0,5-1,0, 1-3, 3-5, 5-8, 8-10, 10 և ավելի հեկտար հողատարածք ունեցող տնտեսություններ (www.stat.gov.mk):

Եվրոստատի համաձայն՝ խաղողագործական տնտեսությունները դասակարգելիս հիմք են ընդունվում այգու պտղատու կամ ոչ պտղատու լինելը, զբաղեցրած մակերեսը, մասնագիտացման աստիճանը, խաղողի հիմնական սորտը: Ըստ այգու ընդհանուր մակերեսի՝ խաղողագործական տնտեսությունները դասակարգվում են 7 խմբի՝ մինչև 0,10 հա, 0,10-0,49, 0,50-0,99, 1-2,9, 3-4,9, 6,5-9,9, 10 և ավելի հեկտար այգի ունեցող տնտեսություններ (www.ec.europa.eu):

Հայաստանում խաղողագործության ոլորտում աշխատանքների կազմակերպման, միջոցառումների հաջորդականության, խաղողի արժեքի հաշվարկների և ընդհանրապես կառավարելիության արդյունավետությունը համեմատաբար բարձր է: Ընդ որում տնտեսությունների դասակարգումը կարող է առավել նպաստավոր պայմաններ ապահովել պետական աջակցություն, հաշվառում և այլ կանոնակարգումներ իրականացնելիս:

Նյութը և մեթոդները

Հայաստանում ձևավորված խաղողագործական տնտեսությունների տնտեսական գործունեության արդյունավետությունը գնահատելուց առաջ ուսումնասիրվել է տնտեսությունների դասակարգման միջազգային, մասնավորապես եվրոպական փորձը: Դասակարգում կատարելիս հիմք է ընդունվել նաև 2014 թվականին Հայաստանում գյուղատնտեսական համատարած հաշվառման ժամանակ կիրառված մեթոդիկան: Արդյունքում խաղողագործական տնտեսությունները դասակարգվել են 5 խմբի և պայմանականորեն անվանվել գերփոքր, փոքր, միջին, խոշոր և գերխոշոր:

Ուսումնասիրվել են ֆիզիկական անձի կարգավիճակ ունեցող (գյուղացիական) տնտեսությունները, քանի որ դրանք ապահովում են խաղողի համախառն բերքի 98,1 %-ը (Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021):

Կիրառվել են ուսումնասիրության ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ մասնագիտական մեթոդներ: Խաղողագործական տնտեսությունների տնտեսական գործունեության արդյունավետությունը գնահատելու համար ուսումնասիրություններին զուգահեռ կատարվել են նաև հարցումներ: Վերջիններս հիմնականում իրականացվել են առանձին խմբերում ընդգրկված տնտեսություններում՝ խաղողի ինքնարժեքը հաշվարկելու, ինչպես նաև տնտեսական գործունեությանը խոչընդոտող գործոնները բացահայտելու նպատակով: Արդյունքում խաղողի փաստացի ինքնարժեքը հաշվարկվել է ըստ առանձին խաղողագործական տարածաշրջանների և ուսումնասիրվող հինգ խմբերի:

Արդյունքները և վերլուծությունը

Խաղողագործական տնտեսություններն ուսումնասիրվել են ըստ այգու մակերեսի (հա), տարեկան հաշվարկային եկամտի (հազ. դրամ), աշխատանքի և կապիտալ ներդրումների, նորարարական տեխնոլոգիաների կիրառման, ապրանքային արտադրանքի արժեքի կառուցվածքի, առևտրայնացման աստիճանի և այլն: Հնգամակարդակ դասակարգումը կատարվել է տնտեսություններին պատկանող այգետարածքի զբաղեցրած մակերեսի և հաշվարկային եկամուտների հիման վրա (աղ. 1):

Հետխորհրդային ժամանակահատվածում խաղողագործության վարման թերևս հիմնական առանձնահատկությունը՝ այգետարածքների զբաղեցրած փոքր մակերեսը,


պայմանավորված է կազմակերպատնտեսական և կառավարման ոչ ստանդարտ մոտեցումներով: Գերփոքր, այսինքն՝ մինչև 0,1 հա խաղողի այգետարածքներ ունեցող տնտեսությունները բավական մեծ թիվ են կազմում (շուրջ 7850) Արարատյան հարթավայրում և դրա նախալեռնային գոտում: Այդ տնտեսությունները հիմնականում նեղ մասնագիտացված չեն, վարում են մասամբ էքստենսիվ բնատնտեսություն և գրեթե դերակատարություն չունեն խաղողի շուկայում: Բոլոր գոտիներում էլ գերակշռում են միջին և փոքր տնտեսությունները:

Գծապատկեր 1-ում ներկայացված են հիմնական խաղողագործական գոտիների տարբեր խմբերի տնտեսությունների տեղաբաշխվածությունն ըստ զբաղեցրած մակերեսի: Վայոց ձորում փոքր տնտեսությունները կազմում են խաղողի ընդհանուր այգետարածքների 13 %-ը: Թվաքանակի առումով դրանք բավական շատ են Արարատյան հարթավայրում և դրա նախալեռնային գոտում, սակայն կազմում են խաղողի ընդհանուր այգետարածքների ընդամենը 11 %-ը:


Աղյուսակ 1. Խաղողագործական տնտեսությունների թիվն ըստ այգու ընդհանուր մակերեսի և հաշվարկային տարեկան եկամտի*

Տնտեսություններն ըստ դասակարգման	Տնտեսությունների թիվը, միավոր		
	Արարատյան հարթավայր և դրա նախալեռնային գոտի	Վայոց ձորի խաղողագործական գոտի	Գյուխարեն ելյան խաղողագործական գոտի
Գերփոքր (մինչև 0,10 հա այգետարածք և տարեկան մինչև 249 հազ. դրամ հնարավոր եկամուտ)	7850	460	868
Փոքր (0,10-0,49 հա այգետարածք և տարեկան 250-1499 հազ. դրամ եկամուտ)	11420	1261	1708
Միջին (0,5-2,99 հա այգետարածք և տարեկան 1500-7499 հազ. դրամ եկամուտ)	24136	2363	7562
Խոշոր (3,0-9,99 հա այգետարածք և տարեկան 7500-24999 հազ. դրամ եկամուտ)	1601	342	476
Գերխոշոր (10 հա և ավելի այգետարածք, տարեկան 25000 հազ.դրամ և ավելի հնարավոր եկամուտ)	192	12	25

*Կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ սեփական ուսումնասիրությունների և ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքների», 2016:



ԳՃ. 1. Խաղողի այգետարածքների տեղաբաշխվածությունն ըստ խմբային դասակարգման:*



ԳՃ. 2. Խաղողագործական տնտեսությունների դասակարգումն ըստ խաղողի ապրանքայնության:*

*Ազգամիլե են հեղինակների կողմից՝ ըստ սեփական ուսումնասիրությունների և ՀՀ ԱԿԾ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքների», 2016):

Ըստ ընդհանուր զբաղեցրած մակերեսի՝ երեք գոտիներում էլ գերակշռում են միջին խաղողագործական տնտեսությունները: Հյուսիսարևելյան գոտում դրանք կազմում են ընդհանուր ազատարածքների 80 %-ը:

Բոլոր գոտիներում գերիառող տնտեսությունները, ըստ զբաղեցրած ընդհանուր մակերեսի, կազմում են 1-2 %: Դրանք հիմնականում ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաներով հագեցած տնտեսություններ են:

Ըստ խաղողի բերքի ապրանքայնության՝ տնտեսությունները դասակարգվել են 4 խմբի՝ միայն սեփական սպառման, հիմնականում սեփական սպառման, հիմնականում վաճառքի և միայն վաճառքի համար խաղող արտադրողներ (գծ. 2):

Գծապատկեր 2-ի համաձայն՝ գրեթե բոլոր մարզերում բավական մեծ տեսակարար կշիռ են կազմում ներտնտեսային սպառման խաղողագործական տնտեսությունները: Սակայն հարկ է նշել, որ խաղողից պատրաստվող գինին կամ օղին մեղին հաշվով իրագրվում է՝ ապահովելով եկա-

մուտ: Առավել մեծ տեսակարար կշիռ են կազմում այն տնտեսությունները, որոնք հիմնականում վաճառքի նպատակով են զբաղվում խաղողի մշակությամբ:

Այդուսակ 2-ում ներկայացված են ուսումնասիրությունների հիման վրա պայմանականորեն դասակարգված տնտեսությունների արդյունավետության ցուցանիշները:

Քնային գործոնի ազդեցությունը բացառելու համար խաղողագործական տնտեսությունների տնտեսական արդյունավետությունը հաշվարկվել է ըստ խաղողի վաճառքի միջինացված գնի: Տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնական նախադրյալ պետք է դիտարկել խաղողագինեգործական կոոպերատիվների (Ա. Հարությունյան, 2014) և կլաստերների ձևավորումը (Ա. Ոսկանյան և ուրիշ., 2021):

Կոպերացման և կլաստերացման նպատակահարմարությունը որոշելու համար ուսումնասիրվել է ամերիկյան և եվրոպական ժողովուրդները (Rolf A.E. Mueller and Daniel A. Sumner, 2016):

Աղյուսակ 2. Խաղողի արտադրության տնտեսական արդյունավետությունը տարբեր տնտեսություններում (2017-2021 թթ. միջինացված ցուցանիշները)*

Խաղողագործական գոտիներ	Տնտեսություններն ըստ դասակարգման	1 կգ խաղողի ինքնաթիվը, դրամ	1 կգ խաղողի վաճառքի գինը, դրամ	1 կգ խաղողի ապահոված շահույթը կամ վնասը, դրամ	Խաղողի վաճառքի ծավալը, հազ. տ	Խաղողի վաճառքից հնարավոր ընդամենը շահույթը կամ վնասը, մլն դրամ	Շահութա-բերության մակարդակը, %
Արարատյան հարթավայր և դրա Նախալեռնային գոտի	Գերփոքր	148,7	167	18,3	1,7	31,11	12,3
	Փոքր	142,5		24,5	18,8	460,6	17,2
	Միջին	123,9		43,1	116,3	5012,5	34,8
	Խոշոր	122,7		44,3	25,6	1134,1	36,1
	Գերխոշոր	93,4		73,6	8,5	625,6	78,8
Վայոց ձոր	Գերփոքր	156,3	167	10,7	0,1	1,07	6,8
	Փոքր	150,1		16,9	0,6	10,14	11,2
	Միջին	130		37	2,9	107,3	28,5
	Խոշոր	121,8		45,2	0,5	27,12	37,1
	Գերխոշոր	119,2		47,8	0,1	4,78	40,1
Հյուսիսարևելյան գոտի	Գերփոքր	159,1	167	7,9	0,1	0,79	4,9
	Փոքր	154,3		12,7	0,5	6,35	8,2
	Միջին	145,8		21,2	5,1	108,12	14,5
	Խոշոր	128,4		38,6	0,6	23,16	30,1
	Գերխոշոր	125,7		41,3	0,1	4,13	32,8

*Կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ սեփական ուսումնասիրությունների և ՀՀ ՎԿ Տեղեկատվական ամսական գեկույցի, 2020:

Ծանոթություն. խաղողի վաճառքի ծավալները և ընդամենը հաշվարկային շահույթը հաշվարկվել են տվյալ խմբում ընդգրկված բոլոր տնտեսությունների համար:

Եզրակացություն

Ուսումնասիրությունների և կատարված հաշվարկների համաձայն՝ տնտեսական արդյունավետությունը համեմատաբար բարձր է Արարատյան հարթավայրի և դրա Նախալեռնային գոտու խաղողագործական տնտեսություններում, ինչը պայմանավորված է սորտային առանձնահատկություններով, կիրառվող արդի ագրոտեխնիկայով, տնտեսությունների մասնագիտացմամբ և այլն: Տնտեսական արդյունավետության բավական մոտ ցուցանիշներ են գրանցվել գերփոքր և փոքր, միջին և խոշոր տնտեսությունների միջև: Հատկանշական է, որ տնտեսական արդյունավետության տեսանկյունից միջին խաղողագործական տնտեսությունները միջանկյալ դիրք են գրավում գերփոքր, փոքր, խոշոր և գերխոշոր տնտեսությունների շարքում: Ընդ որում՝ տնտեսական բարձր արդյունավետության Նախաղոյալներից մեկը տնտեսությունների մասնագիտացվածությունն է, ինչը հնարավորություն է տալիս գիտականորեն հիմնավորված մեթոդներով իրականացնել ագրոտեխնիկական միջոցառումները, լուծել արտադրանքի իրացման խնդիրները և այլ կազմակերպական հարցեր:

Գերփոքր և փոքր տնտեսությունների համեմատությամբ միջին և խոշոր տնտեսություններում հաշվարկային շահութաբերությունը, ըստ միջինացված ցուցանիշների, շուրջ 2,5 անգամ բարձր է:

Տնտեսական արդյունավետության տեսանկյունից Վայոց ձորի խաղողագործական տնտեսությունները զիջում են Արարատյան հարթավայրի և դրա Նախալեռնային գոտու տնտեսություններին, սակայն Հյուսիսարևելյան գոտու խաղողագործական տնտեսությունների համեմատությամբ գործում են ավելի արդյունավետ: Խմբերում հիմնականում օրինաչափորեն կրկնվում են Արարատյան հարթավայրի և դրա Նախալեռնային գոտու տնտեսություններում գրանցված տնտեսական արդյունավետության տարբերությունները: Ուշագրավ է, որ տնտեսական արդյունավետության ցուցանիշներով մոտ են խոշոր և գերխոշոր տնտեսությունները:

ՀՀ խաղողագործության վարման տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնական ուղիներից է ինտեգրված և կոոպերացված գործելաճի կիրառումը: Առանձին խմբերի տնտեսություններում առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է Նաև ծավալել համագործակցություն:

Գերփոքր և փոքր խաղողագործական տնտեսությունների համար արդյունավետ կլինի Նպատակային սուբսիդավորման և սպառողական կոոպերատիվների ձևավորման պրակտիկայի կիրառումը: Ընդ որում՝ սպառողական կոոպերատիվները պետք է Նպաստեն խաղողի արժեքի բարձրացման օպտիմալացմանը, ինչը մի կողմից հնարավորություն կտա տնտեսություններին մոտիվացվել և

բարձրացնել խաղողի ապրանքայնության մակարդակը, մյուս կողմից վերամշակողները չեն խուսափի համագործակցել փոքր ծավալով խաղող իրացնող բազմաթիվ տնտեսավարողների հետ, քանի որ հնարավորություն է ընձեռվում գործունեություն ծավալել միավորված կողմի հետ և հաստատել պայմանագրային երկկողմ կարգավորիչ հարաբերություններ:

Միջին և խոշոր խաղողագործական տնտեսությունների համար արդյունավետություն կապահովեն սուբսիդավորման ու պետական կարգավորման հասցեական մոտեցումները: Մասնավորապես արտադրական կոոպերացման կիրառումը հնարավորություն կտա արտադրությունը կազմակերպել առավել խոշոր մակերեսներում, բարձրացնել մեքենայացման մակարդակը, ներգրավել լրացուցիչ աշխատուժ և ֆինանսական ռեսուրսներ:

խոշոր տնտեսությունների դեպքում նպատակահարմար է կիրառել պայմանագրային կոոպերացիայի տարբերակը, ինչը հնարավորություն կտա առանձին խաղողագործական և գինեգործական տնտեսություններին համագործակցել, հանդես գալ մեկ միասնական բրենդով, արդյունավետ արտադրական և մարկետինգային գործունեություն ծավալել շուկայում:

խաղողագործական տարածաշրջաններում առաջնային արտադրական միավորների հիմնախնդիրների լուծման և ճյուղի կայուն զարգացման հնարավորությունների ստեղծման տեսանկյունից հեռանկարային կարող է լինել կլաստերացման զարգացումը: Խաղողագինեգործական կլաստեր նախագծելիս որպես միջուկ կարող են հանդես գալ խաղողի մշակությամբ զբաղվող մասնագիտացված ֆերմերային տնտեսությունները, ինչպես նաև առաջատար վերամշակող կազմակերպությունները: Սողելը պետք է ապահովի պետական կառույցների, գիտակրթական հաստատությունների, ներդրումներ կատարողների, միջազգային կազմակերպությունների և ագրարային ոլորտին առնչվող այլ սուբյեկտների ակտիվ ու շահագրգիռ համագործակցություն:

Ներկայացված առաջարկություններից յուրաքանչյուրն առավել խորը գիտական հիմնավորման նպատակով պետք է համակողմանի քննարկվի և գործնականում փորձարկվի: Պետք է հիմք ընդունել, որ ինչպես խաղողագործությունում, այնպես էլ ողջ ագրոպարենային համակարգում միայն բազմաթիվ քաղաքականության իրականացումը կարող է ապահովել արդյունավետ զարգացում:

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017-2021 թվականի հունվար-դեկտեմբերին: Գներ և սակագներ բաժին: Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ ՎԿ, Երևան, 2020:
2. Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները, ՀՀ ՎՎԾ, Երևան, 2016. <https://armstat.am/am/?nid=82&id=1860> (դիտվել է՝ 29.05.2022 թ.):
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք: Գյուղատնտեսություն, 2021. <https://armstat.am/file/doc/99526883.pdf> (դիտվել է՝ 12.06.2022 թ.):
4. Հարությունյան Ա. Գինեգործական կոոպերատիվները որպես Գերմանիայի գինեգործական արդյունաբերության կարևորագույն բաղադրամաս, Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ // Գիտական աշխատանքների ժողովածու. - Գիրք 6. - Եր., 2014. - Էջ 36-50:
5. Ոսկանյան Ա., Մնացականյան Կ., Ղազարյան Մ. Կլաստերիզացիան որպես ՀՀ պտուղ բանջարեղենի արժեշղթայի կատարելագործման միջոց // Հայկական տնտեսագիտական հանդես. - N 1. - Եր., 2021. - Էջ 188-204. <https://arar.sci.am/dlibra/publication/307252/edition/282139/content>.
6. Classification of Farming Systems. My Agriculture Information Bank. <https://agriinfo.in/classification-of-farming-systems-632/> (դիտվել է՝ 29.05.2022 թ.):
7. European Commission Eurostat Directorate E: Sectoral and Regional Statistics Unit E-1: Agriculture and Fisheries, Eurostat Handbook for Structural Statistics on Vineyards (Regulation (EU) No 1337/2011, Annex II) Reference year 2015. https://ec.europa.eu/eurostat/cache/metadata/Annexes/vit_esms_an1.pdf (դիտվել է՝ 29.05.2022 թ.):
8. Rolf, A.E., Mueller and Daniel, A. Sumner (2006). Clusters of Grapes and Wine, Conference Draft, Revised May 22, 2006, Presented at the Third International Wine Business Research Conference Montpellier, France, July 6-8. <https://www.researchgate.net/publication/241283432> (դիտվել է՝ 01.06.2022 թ.):
9. Structure and Typology of Agricultural Holdings, State Statistical Office of the Republic of Macedonia, 2016. https://www.stat.gov.mk/PrikaziPoslednaPublikacija_en.aspx?id=79 (դիտվել է՝ 29.05.2022 թ.):
10. Tamás Kismányoky, Tamás Hermann, Brigitta Tóth, Gergely Tóth, Oihane Fernandez-Ugalde, Minggang Xu, Wang Fei, Thomas Caspari, Zhanguo Bai, Xiaodong Song (2016). Classification of Farming Systems across Europe and China, March. <https://ec.europa.eu/research/participants/documents/downloadPublic?documentIds=080166e5b1171fec&appId=PPGMS> (դիտվել է՝ 29.05.2022 թ.):

Классификация виноградарских хозяйств РА и анализ эффективности их экономической деятельности**А.Е. Восканян, А.Г. Арутюнян***Национальный аграрный университет Армении***Ключевые слова:** *виноградарские хозяйства, классификация, эффективность, проблемы, пути решения*

А н н о т а ц и я . Политика развития отраслей сельского хозяйства, в том числе виноградарства, в основном определяется классификацией действующих в отрасли хозяйств, наличием информации об их деятельности и выделением типичных проблем.

На основании исследований в статье представлены подходы к классификации виноградарских хозяйств Армении, анализ их хозяйственной деятельности, ее фактическая экономическая эффективность, существующие проблемы и возможные пути их решения.

Classification of Viticultural Farms and Analysis of their Economic Efficiency in the RA**A.Ye. Voskanyan, A.H. Harutyunyan***Armenian National Agrarian University***Keywords:** *viticultural farms, classification, efficiency, problems, solution ways*

A b s t r a c t . Policy development in the agricultural branches, including viticulture, is mostly due to the classification of the current farms, availability of information on their activities, as well as to the identification of their specific problems.

Based on the conducted investigations, classification approaches of the current viticultural farms in Armenia, analysis of their economic activities, actual economic efficiency, current problems and their solution ways have been introduced in the article.

*Ընդունվել է՝ 17.06.2022 թ.
Գրախոսվել է՝ 13.07.2022 թ.*



ՐՏԴ 632.9:635.64:631.544

ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԳՐՈՒՆՏՈՒՄ ԿՈՆՖԻԴՈՐԻ ԵՎ ՊԵՐԱՍԻ ԹՈՒՆԱԶԵՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԿԻ ՊՏՈՒՂՆԵՐՈՒՄ

Լ.Յ. Աճեմյան *կ.գ.թ.*, Վ.Ս. Միրզոյան *կ.գ.թ.*, Ն.Կ. Պետրոսյան *կ.գ.թ.**Մենդալթերբի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն*levon.atchemyan.41@mail.ru, varsik_mir@yahoo.com, nelli3591@gmail.com

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

*պեզաս,
կոնֆիդոր,
լուիկ,
թունազերծում,
բերքի որակ,
ջերմատուն*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հետազոտությունները կատարվել են ջերմատան պայմաններում աճեցվող լուիկի պտուղներում կոնֆիդորի և պեզասի թունազերծման արագությունը որոշելու նպատակով:

Փորձնական սրսկումից 3 օր անց լուիկի պտուղներում կոնֆիդորի մնացորդային ընդհանուր քանակությունը ցածր է եղել սահմանված առավելագույն թույլատրելի մակարդակից (0,5 մգ/կգ): Պեզասի թունազերծումը տևել է բավական երկար: Ուստի անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է սահմանել 7 օրից ավելի «սպասման ժամկետ»:

Նախաբան

Կոնֆիդոր (ազդող նյութ՝ իմիդակլոպրիդ) և պեզաս (ազդող նյութ՝ դիաֆենտիուրոն) թունաքիմիկատները մի շարք վնասատուների դեմ պայքարի լավագույն միջոցներից են: Առաջինը բարձր արդյունավետություն ապահովող ներբուսային ազդեցությամբ միջատասպան է, որը ջերմատան պայմաններում կիրառվում է կրծող և ծակող-ծծող վնասատուների (լվիճ, սպիտակաթևիկ, թրիպս և այլն) դեմ: Երկրորդը հատկապես սպիտակաթևիկի դեմ կիրառվող գերարդյունավետ թունաքիմիկատ է, միջատասպան ազդեցություն է գործում նաև լվիճների և տզերի վրա:

Հայտնի է, որ վնակաբույսերում թունաքիմիկատների մնացորդային քանակության պահպանման տևողությունը և բերքի որակական ցուցանիշների վրա ազդեցությունը պայմանավորված են մի շարք արտաձին (էկզոգեն) և ներձին (էնդոգեն) գործոններով՝ միջավայրի պայմաններ, բույսերի սորտային առանձնահատկություններ, զարգացման փուլեր, ֆիզիոլոգիական օրգանիզմի արոցեսների ուղղվա-

ծություն և այլն (A.A. Богдарина, 1961, Г.И. Квеситадзе и др., 2005, Т.П. Побежимова и др., 2019, J.C. Hall, et al., 2001, L.L. Van Eerd, et al., 2003, R.E. Hoagland, et al., 2001, Toshiyuki Katagi, 2014): Ուստի անվտանգ և բարձրորակ բերք ստանալու համար անհրաժեշտ է կոնկրետ միջավայրի պայմաններում որոշել կիրառված թունաքիմիկատների մնացորդային քանակության պահպանման տևողությունը բերքում և ազդեցությունը որակական ցուցանիշների վրա:

Խնդրահարույց է պաշտպանված գրունտում թունաքիմիկատների կիրառումը, քանի որ բերքը հավաքվում է սեղմ ժամկետներում, և արտադրանքի անվտանգության ապահովման տեսանկյունից առաջանում է որոշակի վտանգ:

Հետազոտություններն իրականացվել են լուիկի բերքի հիմնական որակական հատկանիշների վրա կոնֆիդոր և պեզաս թունաքիմիկատների ազդեցությունը որոշելու, ինչպես նաև լուիկի պտուղներում դրանց թունազերծման առանձնահատկություններն ուսումնասիրելու նպատակով:

Նյութը և մեթոդները

Փորձերը կատարվել են Մասիսի տարածաշրջանի Դարա-կերտի ջերմատնային տնտեսությունում մշակվող Մախի-տոս սորտի լուլիկի բույսերի վրա: 35 %-անոց կոնֆիդորի և 25 %-անոց պեգասի լուծույթներով սրսկումների կիրառ-ման նորմաները կազմել են համապատասխանաբար 0,2 և 1,5 լ/հա: Անալիզների համար պտուղների նմուշները վերցվել են սրսկումից 1, 3, 5 և 7 օր անց: Թունաքիմիկատ-ների մնացորդային քանակությունները որոշվել են ինչպես պտուղներում, այնպես էլ դրանց մակերեսին:

Կոնֆիդորի մնացորդային քանակությունը որոշվել է մեր իսկ կողմից մշակված նրբաշերտ քրոմատագրության եղա-նակով (B.C. Мирзоян и др., 2007):

Պտուղներից կոնֆիդորի մնացորդային քանակությունը լուծազատվել է 50 %-անոց ջրային ագետոնի, իսկ վերա-լուծազատվել՝ քլորոֆորմի միջոցով: Նմուշների լուծա-մզվածքները խտացվել են, ակտիվացված ածուխի մի-ջոցով մաքրվել պիգմենտներից և կաթեցվել չեխական արտադրության Սիլուֆոլ UV-254 մակնիշի նրբաշերտ թի-թեղիկների (քրոմատագրության համար նախատեսված) վրա: Շարժուն ֆազ է ծառայել հեքսանի և ագետոնի խառ-նուրդը (1:1): Բծերի հայտնաբերումը կատարվել է բրոմֆենոլի և արծաթի նիտրատի ագետոնային լուծույթի օգնությամբ:

Պեգասի մնացորդային քանակությունը որոշվել է վաղուց կիրառվող նրբաշերտ քրոմատագրության եղանակով (Методические указания, 1991): Զանի որ վերջինս նա-խատեսված է ցիտրուսային բույսերում և բամբակում թու-նաքիմիկատների մնացորդային քանակությունը որոշելու համար, մեր կողմից ենթարկվել է որոշակի փոփոխության: Լուլիկի պտուղներից պեգասի մնացորդային քանակությու-նը լուծազատվել է քլորոֆորմով, ակտիվացված ածուխի միջոցով մաքրվել պիգմենտներից ու կեղտից, ենթարկվել գոլորշիացման և կաթեցվել Սիլուֆոլ UV-254 մակնիշի նրբաշերտ թիթեղիկների վրա: Քրոմատագրությունը կա-տարվել է հեքսանի և քլորոֆորմի խառնուրդով (1:2): Այնու-հետև բծերը հայտնաբերվել են արծաթի նիտրատի և բրոմֆե-նոլային կապույտի ագետոնային լուծույթով, մշակվել նախ կիտրոնաթթվի 2 %-անոց, ապա $KMnO_4$ -ի 0,1 %-անոց լու-ծույթներով և լվացվել թորած ջրով:

Լուլիկի պտուղների որակական ցուցանիշները որոշվել են կենսաքիմիական անալիզների մեթոդներով (А.И. Ермаков и др., 1987): Չոր նյութի պարունակությունը պտուղներում որոշվել է նմուշները թերմոստատում 100-105 °C պայ-մաններում չորացնելու միջոցով (մինչև հաստատուն կշիռ ստանալը), ընդհանուր թթվությունը՝ տիտրմամբ, ասկոր-բինաթթուն (վիտամին C)՝ Մուրի եղանակով, շաքարները՝ Բերտրանի մեթոդով:

Արդյունքները և վերլուծությունը

Լուլիկի պտուղներում կոնֆիդորի և պեգասի թունազերծ-ման դինամիկան ներկայացված է գծապատկերում, իսկ

պտուղների որակական ցուցանիշների վրա դրանց ազդե-ցության տվյալները՝ աղյուսակում:


Գծապատկերի համաձայն՝ լուլիկի բույսերի սրսկումից 1 օր անց պտուղներում հայտնաբերվել է կոնֆիդորի և պեգա-սի մնացորդային գերակշիռ պարունակություն: Կոնֆիդո-րի մնացորդային քանակությունը պտուղներում կազմել է ընդհանուր քանակության ավելի քան 77 %-ը, իսկ պեգա-սինը՝ 65 %-ը:

Սրսկումից հետո առաջիկա 3 օրերի ընթացքում ինչպես պտուղներում, այնպես էլ դրանց մակերեսին տեղի է ունե-ցել թունաքիմիկատների մնացորդային քանակություննե-րի ինտենսիվ թունազերծում, ինչի արդյունքում պտուղնե-րում կոնֆիդորի մնացորդային քանակությունը նվազել է 59, իսկ պեգասինը՝ նույնիսկ 83 %-ով:


Սրսկումից 3 օր անց՝ կոնֆիդորի համար սահմանված «սպասման ժամկետում», լուլիկի պտուղներում թունաքիմի-կատի մնացորդային ընդհանուր քանակությունը կրկնակի և ավելի անգամ ցածր է եղել ԵԱՏՄ միասնական տեխնի-կական կանոնակարգով լուլիկի համար սահմանված առա-վելագույն թույլատրելի մակարդակից (0,5 մգ/կգ): Ստաց-ված տվյալները համապատասխանում են փակ գրունտում 0,025 % ծախսման նորմայի դեպքում լուլիկի պտուղներում իմիդաքլոպրիդի մնացորդային քանակությամբ (Vjolica Vladi, et al., 2014, Mohamed E.I. Badawy, et al., 2019), որը 5 օր հետո նույնպես ցածր է եղել սահմանված առա-վելագույն մակարդակից (0,5 մգ/կգ): Թունաքիմիկատների մնացորդային քանակությունները որոշվել են հեղուկային քրոմատագրության (HPLC-CV) եղանակով: Ուշագրավ է, որ բարձր նորմայի (0,05 %) կիրառման դեպքում իմիդա-քլոպրիդի «սպասման ժամկետը» լուլիկի պտուղներում գե-րազանցել է 7 օրվա սահմանը (Vjolica Vladi, et al., 2014):

Բույսերի սրսկումից հետո 3-7 օրվա ընթացքում պեգասի թունազերծումը պտուղներում դանդաղել է, ինչի հետևան-քով թունաքիմիկատի համար սահմանված «սպասման ժամկետում», այսինքն՝ սրսկումից 7 օր անց, պտուղ-ներում դրա մնացորդային ընդհանուր քանակությունը 0,03 մգ/կգ-ով դեռևս բարձր է եղել առավելագույն թույ-լատրելի մակարդակից (0,05 մգ/կգ):

Կոնֆիդոր



Պեգաս



Գծ. Սրսկումից 1, 3, 5 և 7 օր անց կոնֆիդորի և պեգասի մնացոր-դային քանակությունները (մգ/կգ) լուլիկի պտուղներում և դրանց մակերեսին (կազմվել է հեղինակների կողմից):

Աղյուսակ. Կոնֆիդորի և պեգասի ազդեցությունը լուլիկի պտուղների հիմնական որակական ցուցանիշների վրա*

$\alpha=0,05, n=4$

Տարբերակներ	Չոր նյութ, %, LSD**=0,17	Տիտրվող թթվություն, % (ըստ խնձորաթթվի), LSD=0,02	Վիտամին C, մգ%, LSD=0,41	Շաքարներ, %		
				միաշաքարներ, LSD=0,07	սախարոզ, LSD=0,06	գլյուկոզ
Կոնֆիդոր	6,2	0,55	11,6	2,2	0,03	2,23
Պեգաս	6,3	0,45	10,8	2,4	0,05	2,45
Ստուգիչ	6,3	0,57	9,4	2,1	0,05	2,15

* Կազմվել է հեղինակների կողմից:

** Ամենափոքր էական տարբերություն:

Հարկ է նշել, որ դիաֆենտիուրոնը սրսկումից անմիջապես հետո թեյի տերևներում և կծու պղպեղում արագորեն բայ-բայվում է ու առաջացնում մետաբոլիտներ (Anusha SB, et al., 2019, Yangliu Wu, et al., 2022):

Սրսկումից հետո 3-7 օրերի ընթացքում լուլիկի պտուղներում պեգասի թունազերծման ինտենսիվության նվազումը և «սպասման ժամկետում» նորմայից բարձր պարունակությունը պայմանավորված են բույսերի պաշտպանական նշանակության հատկություններով: Սրսկումից հետո առաջին 1-3 օրերի ընթացքում, երբ բույսերի հյուսվածքներ են ներթափանցում մեծ քանակությամբ թունանյութերի մնացորդներ, բույսերի համար ստեղծվում է սթրեսային իրավիճակ: Ընդ որում՝ որքան բարձր է օտարածին նյութերի (տվյալ դեպքում թունանյութերի) խտությունը, այնքան ավելի ինտենսիվ է սթրեսային ազդեցությունը (Н.Б. Прошина, 2000, Г.И. Квеситадзе и др., 2005, Л.А. Чудинова, Н.В. Орлова, 2006, L.L. Van Eerd, et al., 2003):

Ուշագրավ է, որ բույսերում ակտիվանում են թունանյութերի չեզոքացմանը նպաստող գործոնները (ֆերմենտների, նյութափոխանակության, ֆիզիոլոգիական պրոցեսների ակտիվացում և այլն): Ուստի պատահական չէ, որ սրսկումից հետո առաջիկա 3 օրերի ընթացքում կոնֆիդորի ընդհանուր քանակությունը պտուղներում նվազում է 50 %-ով, իսկ պեգասինը՝ անգամ 75 %-ով: Հետագայում թունանյութերի չեզոքացումը թուլանում է: Այդ պատճառով պեգասի մնացորդային չնչին քանակությունը բավական երկար է պահպանվում լուլիկի պտուղներում:

Փորձերի ընթացքում ստացված տվյալները փաստում են, որ ոչ բոլոր թունաքիմիկատների, այդ թվում՝ կոնֆիդորի և պեգասի թունազերծումն է համապատասխանում փակ գրունտի համար սահմանված «սպասման ժամկետներին»: Ուստի որոշակի վտանգ է առաջանում աճեցվող պտուղների օգտագործման համար:

Մեր կողմից ուսումնասիրվել է նաև կոնֆիդորի և պեգասի ազդեցությունը լուլիկի բերքի հիմնական որակական ցուցանիշների վրա:

Ըստ աղյուսակի տվյալների՝ թունաքիմիկատները էապես չեն ազդում պտուղներում չոր նյութերի և սախարոզի կուտակման վրա: Հատկանշական է, որ դրանք նպաստում են միաշաքարների և վիտամին C-ի քանակության ավելացմանը: Կոնֆիդորով սրսկված լուլիկի բույսերի պտուղներում միաշաքարների քանակությունը ստուգիչ տարբերակի համեմատությամբ բարձր է 1,05, իսկ պեգասով սրսկվածներինը՝ 1,14 անգամ (LSD=0,07): Ստուգիչ տարբերակի համեմատությամբ կոնֆիդորով սրսկված տարբերակում վիտամին C-ի պարունակությունը բարձր է 1,4, պեգասով սրսկված տարբերակում՝ մոտ 2,2 մգ%-ով (LSD=0,41): Պեգասով սրսկված բույսերի պտուղներում տիտրվող թթվությունը ստուգիչից ցածր է 0,12 %-ով (LSD=0,02):

Պատրաստումների ազդեցությամբ լուլիկի պտուղներում շաքարների պարունակության ավելացումը և տիտրվող թթվության նվազումը նպաստում են բերքի որակական ու համային հատկանիշների բարելավմանը:

Ստացված տվյալները վերլուծության են ենթարկվել դիսպերսային անալիզի (Anova) միջոցով՝ 95 % հավաստիությամբ: Հերքվել է գրոյական վարկածը ($P<0,05$, Fobs>Fcr): Հայտնաբերվել է տարբերակների միջև առկա վիճակագրական էական տարբերություն:

Եզրակացություն

Сорт клубники	Вариант	Количество цветков, шт.	Урожай с одного растения, г	Средний вес отдельных плодов, г	Количество вегетативных органов, шт.	Общая зараженность растений, %
Наташа	<i>in vitro</i> контроль	12.3±0.8 10±0.9	253.3±8.1 210±6.9	19.7±2.0 16±1.3	18.0±1.3 14±0.9	22.2±2.1 2.4±1.1
Зенга Зенгана	<i>in vitro</i> контроль	17.7±2.1 12±1.6	473.3±27.7 372±18.1	29.0±1.3 26±1.1	17.0±1.3 12±1.2	21.2±1.2 6.3±2.1
Ред Гонтлет	<i>in vitro</i> контроль	14.3±1.1 10±0.7	444±28.7 360±18.7	32.7±3.4 26±2.4	18.0±1.6 12±0.9	38.3±2.2 12.6±1.1
Женева	<i>in vitro</i> контроль	21.3±1.7 16±1.4	618±15.3 500±17.2	29.0±1.6 24±1.2	15.0±1.6 11±1.3	18.1±1.8 8.6±1.4

*Таблицы составлены авторами.

Затем пробирочные *in vitro* растения, выросшие и укоренившиеся на среде 1/2 МС + 0.5 ИУК, высаживали в вазоны с почвенным субстратом, состоящим из 2 частей биогумуса и 1 части песка. При переносе пробирочных растений в почвенный субстрат отбирали здоровые, крепкие растения с хорошо развитой корневой системой, т. к. более мощные и высокие растения легче выдерживают перенос в почвенные условия. По-

следующая адаптация регенератов проходила в теплице в течение двух месяцев, где проводили визуальный осмотр их состояния и необходимые агротехнические мероприятия. В теплице растения находились до высадки в открытый грунт.

В поле в условиях открытого грунта на этапах цветения и плодоношения проводилось морфобиологи-

ческое изучение регенератов (табл. 3). Полученные результаты показали, что использование саженцев, оздоровленных методом *in vitro*, способствовало увеличению количественных показателей генеративных и вегетативных органов по сравнению с контролем. Так, количество цветков на одном растении увеличилось на 17.2-26.3 %, средний вес отдельных плодов – на 6.4-25.6 %, урожайность растения – на 14.0-23.6 %. Количество вегетативных органов также увеличилось с 19.1 % до 38.9 %, что способствовало получению впоследствии здоровых саженцев.

Плоды клубники и растения в течение вегетационного периода сильно страдают от болезней и вредителей. Наиболее распространенными причинами являются мучнистая роса, серая пятнистость листьев и серая гниль плодов. Результаты показали, что у полученных методом *in vitro* сортов зараженность болезнями составляет всего 2.4-12.6 %, тогда как в контроле – 22.2-38.3 %.

В плодах определялось также количество общего сахара, витамина С и кислотность (табл. 4) (О.Ю. Лобанкова и др., 2014).

Таблица 4. Качественные характеристики плодов клубники*

Сорт	Вариант	Общий сахар, мг %	Витамин С, мг %	Кислотность, мг %
Наташа	<i>in vitro</i> контроль	6.9±1.4 6.4±1.1	7.1±0.4 6.2±0.3	0.86±0.08 1.06±0.11
Зенга-Зенгена	<i>in vitro</i> контроль	6.2±1.3 6.3±0.9	6.8±0.2 6.2±0.3	1.1±0.2 1.04±0.13
Ред Гонтлет	<i>in vitro</i> контроль	7.0±1.4 6.7±0.9	6.7±0.3 6.1±0.2	0.7±0.1 0.94±0.11
Женева	<i>in vitro</i> контроль	6.4±0.9 6.1±0.8	6.5±0.3 7.0±0.2	0.69±0.1 0.93±0.15

*Таблица составлена авторами.

Согласно экспериментам, количество общего сахара, витамина С и кислотность по сравнению с контролем не претерпели существенных изменений.

Закключение

Исследования показали, что, в отличие от сортов клубники, которые размножались традиционным способом, использование оздоровленного и размноженного методом *in vitro* посадочного материала

приводит к снижению уровня поражения болезнями, повышению количества вегетативных и генеративных органов, вследствие чего повышается урожайность, в то время как качественные показатели плодов остаются без изменений. Заболевания, обнаруженные в растениях на местах, являются результатом вторичной инфекции. Поэтому при организации дальнейшего выращивания оздоровленной рассады необходимо учитывать фитосанитарные условия и высаживать ее на некотором расстоянии от полей клубники, выращенной традиционным способом.

Литература

1. Доспехов Б.А. Методика полевого опыта. - М.: Агропромиздат, 1985. - 351 с.
2. Лобанкова О.Ю., Агеев В.В., Есаулко А.Н. и др. Лабораторный практикум по пищевой химии: учебное пособие. - Ставрополь, ФГБОУ ВПО Ставропольский гос. аграрный университет, 2014. - 113 с.
3. Мелян Г.Г., Адамян К.С., Барсегян А.А., Саакян А.Д. Микрклональное размножение мелкоцветковых хризантем сорта Nibro // Материалы XII международной конференции «Нетрадиционное растениеводство, энтомология, экология и здоровье» - г. Алушта. - 9-16 июня, 2003. - N 1. - С. 433-434.
4. Расторгуев С.Л. Культура изолированных тканей и органов в селекции плодовых растений: монография. - Мичуринск: изд-во Мичуринского государственного аграрного университета, 2009. - 170 с.
5. Anuradha, B., Sehrawat, S.K., Poonia, A., Kajla, S., Bhat, S. (2016). Production of Strawberry Plant by *in vitro* Propagation // Res. on Crops. 2016. V. 17. N 3, - pp. 545-549. <https://doi.org/10.5958/2348-7542.2016.00091.7>.
6. Biswas, M.K., Hossain, M., Ahmed, M.B., Roy, U.K., Karim, R., Nehra, R.M., Kartha, N.S., Stushnoff, K.K., Giles, K.L. (1994). Effect of *in vitro* Propagation Methods on Field Performance of Two Strawberry Cultivars // Euphytica, - V. 76. Issue 1-2, - pp. 107-115. <https://doi.org/10.1007/bf00024027>.
7. Biswas, M.K., Hossain, M., Ahmed, M.B., Roy, U.K., Karim, R., Razvy, M.A., Salahin, M., Islam, R. (2007). Multiple Shoots Regeneration of Strawberry under Various Colour Illuminations // American-Eurasian Journal of Scientific Research. V. 2. N 2, - pp. 133-135.
8. Boxus, P. (1974). The Production of Strawberry Plants by *in vitro* Micro Propagation // J. Hort. Sci. 49. Issue 3, - pp. 209-210.
9. Boxus, P. (1983). Commercial Production of Strawberry Plants Produced by Meristem Culture and Micro Propagation // Colloques Scientifiques. Hort. Abstr 53, - pp. 283-322.

10. El Kichaoui, A.Y. (2014). In Vitro, Propagation of Strawberry (*Fragaria × annanasa* Duch.) Through Organogenesis via Runner Tips // *Annals of Plant Sciences*. V. 3. N 03. - pp. 619-627.
11. Jhajhra, S. L.K., Dashora, Singh J., Bhatnagar, P., Kumar, A., Arya, C.K. (2018). Propagation of Strawberry (*Fragaria × ananassa* Duch.) // *International Journal of Current Microbiology and Applied Sciences*. V. 7. N 10, - pp. 3030-3035. <https://doi.org/10.20546/ijcmas.2018.710.353>.
12. Karhu, S., Hakala, K. (2002). Micropropagated Strawberries on the Field. *ISHS Acta Horticulture*. V. 2, - pp. 182.
13. Moradi, K., Otroshy, M., Azimi, M. (2011). Micropropagation of Strawberry by Multiple Shoots Regeneration Tissue Cultures // *Journal of Agricultural Technology*. V. 7. N 6, - pp. 1755-1763.
14. Nehra, N.S., Kartha, K.K., Stushnoff, C., Giles, K.L. (1994). Effect of in vitro Propagation Methods on Field Performance of Two Strawberry Cultivars // *Euphytica*. V. 76, Issue 1-2, - pp. 107-115. <https://doi.org/10.1007/bf00024027>.
15. Swartz, H.J., Galletta, G.J., Zimmerman, R.H. (1981). Field Performance and Phenotypic Stability of Tissue Culture Propagated Strawberries // *J. Amer. Soc. Hort. Sci.* 1981. V. 106, - pp. 667-673.

Բերքատվության բարձրացման նպատակով ելակի մի քանի սորտերի մշակումը կենսատեխնոլոգիական մեթոդներով

Ա.Ս. Վարդանյան, Գ.Հ. Մելյան, Ա.Հ. Բարսեղյան, Ն.Ա. Սահակյան

ՀԱԱՀ Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն

Բանալի բառեր՝ ելակ, կենսատեխնոլոգիա, *in vitro*, առողջացված տնկանյութ, բույսերի աճի կարգավորիչներ

Ամփոփագիր: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ի տարբերություն ելակի՝ ավանդական եղանակով ստացված տնկանյութի, *in vitro* եղանակով առողջացված տնկանյութի օգտագործման դեպքում նվազել է դաշտում բույսերի՝ հիվանդություններով (անկային և այլն) վարակվածության աստիճանը: Միաժամանակ ավելացել է բույսերի վեգետատիվ և գեներատիվ օրգանների թիվը, ինչը նպաստել է բերքատվության զգալի բարձրացմանը: Պտուղների որակական ցուցանիշները մնացել են անփոփոխ:

Cultivation of Some Strawberry Varieties with Biotechnological Methods Aimed at Yield Capacity Increase

A.S. Vardanyan, G.H. Melyan, A.H. Barseghyan, N.A. Sahakyan

Scientific Center of Agrobiotechnology, ANAU branch

Keywords: strawberry, biotechnology, *in vitro*, treated planting material, plant growth regulators

Abstract. The results of the current study showed that unlike traditionally produced strawberry planting materials, application of those treated per *in vitro* method has promoted reduction of plants infection level with various diseases (fungi, etc.). Meanwhile, the number of vegetative and generative organs of plants increased, which entailed to the considerable yield capacity increase. At the same time, the fruits' qualitative indices remained unchanged.

Принята: 12.04.2022 г.
Редактирована: 30.05.2022 г.



ՐՏԴ 636.7:[619:616.993.161.3]

ՇՆԵՐԻ ԼԵՅՇՄԱՆԻՈԶԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՁԵՐՈՒՄ

Գ.Ռ. Ավետիսյան

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին

georgiavetisyan@gmail.com

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

լեյշմանիոզ,
ընդերային,
մաշկային,
շուն,
մկակ,
խմուսաբորմատոգրաֆիկ
հետազոտություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Շների լեյշմանիոզի տարածվածության և սեզոնայնության ուսումնասիրության նպատակով Հայաստանի տարբեր մարզերում իրականացվել են մի շարք հետազոտություններ: Ախտորոշումը կատարվել է շների մոտ նկատվող կլինիկական նշանների, ինչպես նաև լեյշմանիոզով վարակվածությամբ կասկածվող կենդանիներից վերցված արյան նմուշների իմունաբորմատոգրաֆիկ հետազոտության հիման վրա: Հիվանդությունը հայտնաբերվել է բոլոր տարիքային խմբերի շների մոտ:

Առաջարկվում է իրականացնել լեյշմանիոզի վարակի աղբյուրների վերացման և հիվանդության տարածումը կանխարգելող միջոցառումներ:

Նախաբան

Շների լեյշմանիոզը *Leishmania* ընտանիքի *Trypanosomidae* սեռին պատկանող նախակենդանիների կողմից հարուցվող կենդանիների և մարդկանց բնական օջախային տարափոխիկ հիվանդություն է, որն ուղեկցվում է մաշկի, լորձաթաղանթների և ներքին օրգանների ախտահարումով: Գոյություն ունի լեյշմանիոզի երկու հիմնական կլինիկական ձև՝ մաշկային և ընդերային (A. Jazic, et al., 1998, V. Kontos, A. Koutinas, 1993):

Լեյշմանիոզով վարակվում են շները և կրծողները, որոնցից հարուցիչը փոխանցվում է *Phlebotomus* տեսակին պատկանող մլակների միջոցով: Հիվանդ կենդանիներին խայթելու դեպքում մլակների օրգանիզմում հարուցիչը 8-9 ամսվա ընթացքում անցնում է զարգացման որոշակի փուլեր և հետագայում խայթոցների միջոցով փոխանցվում այլ կենդանիների և մարդկանց (S. Ozensoy, et al., 1998, Y. Ozbek, et al., 1995):

Հարկ է նշել, որ մլակների ակտիվության ժամանակահատվածում տաք եղանակներին, լեյշմանիոզի հարուցիչը, խայթոցների միջոցով փոխանցվելով մարդկանց և կենդանիներին, ներթափանցում է լյարդի, փայծաղի, ոսկրածուծի, արյունատար ու ավշային անոթների, ավշային հանգույցների հյուսվածքներ և սկսում բազմանալ ու մալարվել (N. Nuwayri-Salti, et al., 1997, Y. Ozbek, et al., 2000): Լեյշմանիոզի բնական օջախներ են շիւնությունների նկուղները, կրծողների բները, աղբավայրերը և խոնավ անասնազոմերը (H.W. Murray, et al., 2005):

Մաշկային լեյշմանիոզի դեպքում ախտահարվում են կենդանիների դիմային՝ բթի, աչքերի և ականջների շուրջ գտնվող կարճ մազածածկով հատվածները (A. Koutinas, et al., 1998): Ընդերային լեյշմանիոզի դեպքում մաշկի վրա առաջանում են հանգույցներ, որոնք հետագայում վերածվում են չապաքինվող խոցերի: Այդ հատվածներում նկատվում է մազաթափություն, առաջանում են մաշկային բոր

և սպիներ: Հիվանդությունը ծանր ընթացք է ունենում, ուղեկցվում է կենդանու հյուծումով, մարմնի ընդհանուր ջերմաստիճանի բարձրացումով, մաշկը չորանում է և թեփակալում, նկատվում է քթի լորձաթաղանթի ու շաղկապենու բորբոքում, լյարդի, փայծաղի, ոսկրածուծի, ավշային հանգույցների ախտահարումներ, մարսողության խանգարումներ (փորլուծություն, փսխում), սակավարյունություն: Ընդ որում վերջինս կարող է հանգեցնել կենդանու անկման (J. Sarasa, et al., 2002, V. Sideris, et al., 1999):

Հայաստանի կենտրոնական և հարավային մարզերում, որտեղ եղանակը գարնան և ամռան ամիսներին տաք է, ընդերային լեյշմանիոզը լայնորեն տարածված է շների շրջանում:

Նյութը և մեթոդները

Հետազոտությունների նպատակը Հայաստանի Հանրապետության 10 մարզերում (Արարատ, Արմավիր, Կոտայք, Վայոց ձոր, Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ, Լոռի, Շիրակ, Արագածոտն) շների մոտ լեյշմանիոզ հիվանդության տարածվածության ուսումնասիրումն է: Բոլոր հետազոտություններն իրականացվել են «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ում:

Ընդերային լեյշմանիոզով վարակվածությամբ կասկածվող շների մոտ նկատվել են ընկճվածություն, թուլություն, մաշկի թեփակալում, չորություն, ռինիտի և կոնյուկտիվիտի երևույթներ, թոքաբորբ, սակավարյունություն, լյարդի և ավշային հանգույցների ախտահարման նշաններ, փսխում, փորլուծություն, հյուծում: Ծճգրիտ ախտորոշման համար տվյալ կենդանիներից վերցվել են արյան նմուշներ: Հիվանդության ախտորոշման նպատակով կատարվել են շների մոտ ընդերային լեյշմանիոզի հակամարմինների առկայությունը որոշող արագ (Էքսպրես) թեստավորումներ (rK39 (RDTs), IT LEISH, BIO-Rad): Իմունաբրոմատոգրաֆիկ արագ թեստավորումը (rK39) կատարվել է ըստ արտադրողի համապատասխան հրահանգների: Փորձարկման և վերահսկման գծերի կարմիր գունավորման դեպքում գրանցվել է թեստի դրական արդյունք:

Արդյունքները և վերլուծությունը

2021 թ. հունվարից մինչև 2021 թ. դեկտեմբեր ամիսը Հայաստանի 10 մարզերում հետազոտվել է 220 շուն: Հայտնաբերվել է լեյշմանիոզով վարակվածության 28 դեպք:

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ Սյունիքի մարզում հայտնաբերվել է լեյշմանիոզով հիվանդ 5 շուն (18 %), Գեղարքունիքում, Շիրակում՝ 1-ական (4 %), Լոռիում, Տավուշում, Արագածոտնում՝ 2-ական (7 %), Կոտայքում՝ 3 (11 %), Վայոց ձորում, Արարատում, Արմավիրում՝ 4-ական շուն (14 %): Լեյշմանիոզ հիվանդությամբ առավել բաժր վարակվածություն գրանցվել է Սյունիքի, Արարատի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերում, ինչը պայմանավորված է այդ մարզերում համեմատաբար բարձր ջերմաստիճանային ֆոնով:

Աղյուսակ 1. Իմունաբրոմատոգրաֆիկ հետազոտությունների արդյունքները*

Մարզեր	Հետազոտված կենդանիներ	Հայտնաբերված հիվանդ կենդանիներ	Հիվանդացություն, %
Սյունիք	30	5	18
Գեղարքունիք	15	1	4
Շիրակ	15	1	4
Լոռի	25	2	7
Տավուշ	25	2	7
Արագածոտն	15	2	7
Վայոց ձոր	25	4	14
Կոտայք	20	3	11
Արարատ	25	4	14
Արմավիր	25	4	14

Աղյուսակ 2. Լեյշմանիոզով կենդանիների վարակվածության սեզոնայնությունը*

Վարակված կենդանիների ընդհանուր թիվը	Գարնանը հայտնաբերված վարակված կենդանիներ	Վարակվածությունը, %	Ամռանը հայտնաբերված վարակված կենդանիներ	Վարակվածությունը, %	Աշնանը հայտնաբերված վարակված կենդանիներ	Վարակվածությունը, %	Զմռանը հայտնաբերված վարակված կենդանիներ	Վարակվածությունը, %
28	9	32,1	14	50	5	17,8	0	0

*Կազմվել է հեղինակի կողմից:

Աղյուսակ 2-ի համաձայն՝ գարնանը հայտնաբերվել է լեյշմանիոզով վարակված 9 շուն (32,1 %), ամռանը, աշնանը՝ համապատասխանաբար 14 (50 %), 5 (17,8 %) շուն: Ձմռանը վարակված կենդանիներ չեն հայտնաբերվել (0 %): Ստացված տվյալները փաստում են, որ տարվա տաք եղանակներին տեղի է ունեցել առավել ինտենսիվ վարակում, ինչը պայմանավորված է հարուցիչներ փոխանցող մլակների բարձր ակտիվությամբ:

Ըստ աղյուսակ 3-ի՝ 220 հետազոտված շներից 60-ը պատկանել են 1-ին խմբին (3 ամսականից մինչև 1 տարեկան), 100-ը՝ 2-րդ խմբին (1 տարեկանից մինչև 6 տարեկան), 60-ը՝ 3-րդ խմբին (6 տարեկանից բարձր):

Աղյուսակ 3. Լեշմանիոզով վարակվածությունն ըստ տարիքային խմբերի*

Տարիքային խմբեր	Հետազոտված կենդանիներ	Վարակված կենդանիներ	Վարակվածությունը, %
3 ամսականից մինչև 1 տարեկան	60	6	10
1 տարեկանից մինչև 6 տարեկան	100	15	15
6 տարեկանից բարձր	60	7	11,6

*Կազմվել է հեղինակի կողմից:

Հետազոտությունների համաձայն՝ առաջին խմբում գրանցվել է լեշմանիոզ հիվանդության 6 (10 %), երկրորդ խմբում՝ 15 (15 %), իսկ երրորդ խմբում՝ 7 դեպք (11,6 %): Ստացված տվյալներով կարելի է հիմնավորել, որ շների բոլոր տարիքային խմբերը հիվանդանում են լեշմանիոզով:

Եզրակացություն

Հայաստանի տարբեր մարզերում հետազոտությունների արդյունքներով գրանցվել է շների լեշմանիոզի տարածվածության բարձր աստիճան: Հիվանդությունը հայտնաբերվել է բոլոր տարիքային խմբերի մոտ:

Լեշմանիոզով շների առավել բարձր վարակվածություն գրանցվել է Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի և Արմավիրի մարզերում՝ պայմանավորված համեմատաբար բաժր ջերմաստիճանային ֆոնով:

Լեշմանիոզի վարակի աղբյուրների վերացման, ինչպես նաև հիվանդության տարածումը կանխելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- հաշվառել տերեր ունեցող բոլոր շներին և առաջին իսկ հնարավորության դեպքում պատվաստել լեշմանիոզի դեմ,
- ախտորոշման դրական արդյունքի դեպքում շներին ենթարկել Էֆթանազիայի (ծայրահեղ դեպքում կիրառել միջատասպաններով մշակված վզկապներ),
- բնակավայրերում և այլ տարածքներում, որտեղ վերջին տարիներին գրանցվել են լեշմանիոզ հիվանդության դեպքեր, վարակի աղբյուրների հայտնաբերման համար կատարել շների թեստավորում,
- ակտիվացնել թափառող շների դեմ պայքարը,
- մշակել համապատասխան հաշվետվության ձև և պարտավորեցնել շների բուժմամբ զբաղվող անասնաբույժներին ներկայացնել լեշմանիոզով վարակվածության դեպքերի վերաբերյալ հաշվետվություն,

- հիվանդությունը փոխանցող մակների պոպուլյացիան նվազեցնելու նպատակով հնարավորինս վերացնել օրգանական աղբի կուտակումները, մաքուր պահել շների բները և բնակատեղերը, իսկ այն բնակավայրերում, որտեղ գրանցվել են լեշմանիոզով վարակվածության դեպքեր, կատարել երկարատև ազդեցության միջատասպան նյութերով մշակումներ:

Գրականություն

1. Henry, W. Murray, Jonathan, D. Berman, Clive, R. Davies, Nancy, G. Saravia (2005). Advances in Leishmaniasis. Lancet, 366:1561-77. [https://doi.org/10.1016/s0140-6736\(05\)67629-5](https://doi.org/10.1016/s0140-6736(05)67629-5).
2. Jazic, A., Zuko, A., Cankovic, M. (1998). Leishmaniasis in Dogs in the Area of Blagai (Mostar), Bosna-Herzegovina. Giornale Italiano di Medicina Tropicale, Vol 3, 3-4, - pp. 59-60.
3. Kontos, V., Koutinas, A. (1993). Old World Canine Leishmaniasis. The Canine Leishmaniasis. The Compendium of Continuing Education, 15, - pp. 949-959.
4. Koutinas, A., Polizopoulou, Z., Saridomichelakis, M. (1999). Clinical Considerations on Canine Visceral Leishmaniasis in Greece: a Retrospective Study of 158 Cases (1989-1996). J Am Anim Hosp Assoc, 35:376-383. <https://doi.org/10.5326/15473317-35-5-376>.
5. Nuwayri-Salti, N., Nasr, R., Haddad, K. (1997). Canine Leishmaniasis in Northern Lebanon. Ann Trop Med Parasitol. 91:221-222. <https://doi.org/10.1080/00034983.1997.11813133>.
6. Ozbel, Y., Turgay, N., Ozensoy, S. (1995). Epidemiology, Diagnosis and Control of Leishmaniasis in the Mediterranean Region. Ann Trop Med Parasitol, 89 (Suppl 1), - pp. 89-93.
7. Ozbel, Y., Oskam, L., Ozensoy, S., Turgay, N. (2000). A Survey on Canine Leishmaniasis in Western Turkey by Parasite, DNA and Antibody Detection Assays. Acta Tropica 74, - pp. 1-6. [https://doi.org/10.1016/s0001-706x\(99\)00047-9](https://doi.org/10.1016/s0001-706x(99)00047-9).
8. Ozensoy, S., Ozbel, Y., Turgay, N. (1998). Serodiagnosis and Epidemiology of Visceral Leishmaniasis in Turkey. Am J Trop Med Hyg, 59:363-369. <https://doi.org/10.4269/ajtmh.1998.59.363>.
9. Sarasa, J., Zarate, J., Gomez, P., Lucientes, J. (2002). Valuation of Three Technical Serodiagnostics for the Epidemic Study of Leishmania Infantum in the District of Ejea (Zaragoza). Proceedings WSAVA.
10. Sideris, V., Papadopoulou, G., Dotsika, E., and Karagouni, E. (1999). Asymptomatic Canine Leishmaniasis in Greater Athens Area, Greece. European Journal of Epidemiology 6, 15: 271-1999. <https://doi.org/10.1023/a:1007526401175>.

Изучение распространения лейшманиоза собак в регионах РА

Г.Р. Аветисян

Инспекционный орган по безопасности пищевых продуктов Республики Армения

Ключевые слова: лейшманиоз, висцеральный, кожный, собака, москит, иммунохроматографический анализ

Аннотация. С целью изучения распространенности и сезонности собачьего лейшманиоза был проведен ряд исследований в различных регионах Армении. Диагноз был поставлен на основании клинических симптомов у собак, а также результатов иммунохроматографического анализа образцов крови, взятых у животных с подозрением на лейшманиоз. Заболевание было обнаружено во всех возрастных группах.

Рекомендуется осуществлять мероприятия по ликвидации источников заражения лейшманиозом и предотвращению распространения инфекции.

Studying the Prevalence of Dogs' Leishmaniasis in the Regions of the Republic of Armenia

G.R. Avetisyan

Food Safety Inspection Body of the Republic of Armenia

Keywords: leishmaniasis, visceral, cutaneous, dog, sandfly, immunochromatographic testing

Abstract. A number of investigations in different regions of Armenia have been conducted to study prevalence and seasonality of leishmaniasis in dogs. The diagnosis was made on the basis of clinical signs observed in dogs, as well as immunochromatographic examination of blood samples taken from animals suspected of being infected with leishmaniasis. The disease was detected in dogs of all age groups.

It is recommended to implement measures to eliminate the sources of leishmaniasis infection and prevent the spread of the disease.

Ընդունվել է՝ 30.05.2022 թ.
Գրախոսվել է՝ 08.06.2022 թ.



ՀՏԴ 636.592.082

ՀՆԴԿԱՅԱՎԵՐԻ ԱՐՅԱՆ ՊՈԼԻՄՈՐՖ ՄՊԻՏԱԿՈՒՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍԵՌԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՄԱՐԿԵՐՆԵՐ

Մ.Վ. Բադալյան *գ.գ.թ.*, Տ.Բ. Ալոյան, Յու.Գ. Մարմարյան *գ.գ.դ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ս.Ա. Խառատյան

Մենդելիանյան անվան գյուղատնտեսական ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն

badalyan.manvel@mail.ru, tatev.aloyan20@mail.ru, yu.marmaryan@anau.am, satenik.kharatyan@mail.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

հնդկահավ,
հոմոզիգոտ,
հետերոզիգոտ,
գենոտիպ,
սեռ

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Հետազոտությունները փաստում են, որ մայր հնդկահավերի գենոտիպով և գենոտիպերի հանդիպման հաճախականությամբ պայմանավորված՝ սերոլոմ սեռերի թվային հարաբերակցությունը փոփոխվում է: *TfCC CpBC HbBC* և *TfCC Cp- HbBC* գենոտիպերով մայրերից ստացված սերնդի 78 և 69 %-ը կազմում են արուները, *TfAA CpCD HbAB* և *TfBD CpCD HbAA* գենոտիպերով մայրերից ստացված սերնդի 65 %-ը՝ էգերը: *TfAB CpBD HbCC*, *TfBC CpAB HbBD* և *TfCD CpCC HbCD* գենոտիպերով մայրերից ստացված սերնդում արուների և էգերի թիվը հավասար է ($P>0,999$): Ստացված արդյունքները որպես գենետիկական մարկերներ կարող են կիրառվել հնդկահավերի տոհմատեսչիկոն աշխատանքներում:

Նախաբան

Հայտնի է, որ կենդանիների մեծ մասի մոտ միջին հաշվով ծնվում են հավասար թվով արուներ և էգեր, այսինքն՝ սեռերի թվային հարաբերակցությունը կազմում է մոտավորապես 1:1:

Ինչ մեխանիզմով է կարգավորվում սեռերի նման հարաբերակցությունը և ինչպե՞ս կարելի է լուծել սեռերի կարգավորման խնդիրը: Այս հարցերի ճշգրիտ պատասխանը ստացվեց, երբ հնարավոր եղավ ուսումնասիրել բջջի բրոմոսոմային ապարատի կառուցվածքը:

Գոյություն ունեցող կարծիքի համաձայն՝ թռչունների *Z*, *W* և կաթնասունների սեռական բրոմոսոմները հոմոլոգներ չեն, քանի որ առաջացել են տարբեր աուտոսոմային զույգերից: Այսպես՝ թռչունների *Z* բրոմոսոմը պարունակում է

9-րդ բրոմոսոմում առկա բազմաթիվ տեղամասեր, ավելին՝ *Z* բրոմոսոմում բարտեզավորված 24 գեներից 17-ը բացահայտված են 9-րդ հոմոլոգ բրոմոսոմում, և հակառակը՝ 9-րդ բրոմոսոմի *ornitine transcarbamylase* գեն պարունակող մեկ տեղամասը հոմոլոգ է *Z* բրոմոսոմին (L. Buchen, 2010, H. Ellegren, 2000):

Ենթադրվում է, որ թռչունների *W* բրոմոսոմը ձևավորվել է *Z* բրոմոսոմի ինակտիվացիայի և ինվերսիայի արդյունքում: Այդ մասին են վկայում անողնուց թռչունների *Z* և *W* բրոմոսոմներում առկա *ACO1* և *ZOV3* գեներն ու *EEO6* նուկլեոտիդային հաջորդականությունը՝ միկրոսատելիտային ԴՆԹ-ն (T. Ezaz, et al, 2006):

Թռչունների *W* բրոմոսոմը դրսևորվում է ցածր գենետիկական բազմազանությամբ: *W* բրոմոսոմում առկա

Դևթ-ի 60 %-ը բաղկացած է *Xho* տանդեմային կրկնություններից (Y. Itoh, et al, 2011):

Ի տարբերություն կաթնասունների՝ թռչունների էգերը հետերոգամետ են, այսինքն՝ ձևավորում են *Z* և *W* սեռական քրոմոսոմներ պարունակող ձվաբջիջներ, իսկ արուները, որպես հոմոգամետ սեռ, առաջացնում են միայն մեկ տիպի՝ *Z* սեռական քրոմոսոմ պարունակող սպերմատոզոիդներ: Նշանակում է՝ թռչունների մոտ ապագա օրգանիզմի սեռը ձևավորվում է միևնույն բեղմնավորումը՝ դեռևս մայրական օրգանիզմում. այս եղանակը կոչվում է պրոգնամային (Е.Д. Амбросьева, 2005, Л.А. Остерман, 1981, М.Е. Лобашев, 1967): Բնության մեջ հայտնի են դեպքեր, երբ սեռերի թվային հարաբերակցությունը (1:1) տատանվում է այս կամ այն սեռի գերակայությամբ:

Գիտական գրականությունում գյուղատնտեսական կենդանիների և թռչունների սեռերի թվային հարաբերակցության դրսևորման գործում հայրական ու մայրական ժառանգականության դերի վերաբերյալ կարծիքներն իրարամերժ են, և մինչ այժմ կատարված ուսումնասիրությունների արդյունքները հիմնավորված չեն (Մ.Վ. Բադալյան և ուրիշ., 2021):

Չարկ է նշել, որ մեկնելագվող և ժառանգման բազմագենային պայմանավորվածություն ունեցող հատկանիշների դրսևորումը թերի է հետազոտված (М.Е. Лобашев, 1967): Ժամանակակից մոտեցումների համաձայն՝ թռչունների մոտ սեռերի ձևավորումը պայմանավորված է երկու գործոններով՝ *Z* քրոմոսոմի թվով (երկուսի դեպքում առաջանում են արուներ, իսկ մեկի դեպքում՝ էգեր) և *W* քրոմոսոմում տեղակայված՝ սեռը ձևավորող գեներով (S. Nakagawa, 2004):

Սեռերի որոշման հաշվեկշռային տեսության համաձայն՝ *3A:ZZZ* կարիոտիպով թռչուններն անպտուղ արուներ են, իսկ *3A:ZZW* կարիոտիպով թռչունները՝ հերմաֆրոդիտներ, քանի որ վերջիններիս մոտ զարգանում են ինչպես ձվարանները, այնպես էլ ձախ սերմարանը: *3A:ZWW* կարիոտիպով առանձնյակների մոտ ձևավորվում է ձվարանը, սակայն դրանք 16 օրականում մահանում են: Գինանդրոմորֆները, որոնց մարմնի ձախ հատվածը իգական է, իսկ աջը՝ արական, ունենում են *ZZ* կամ *ZO* կարիոտիպ (J.A.M. Graves, 2003, 2013):

Թռչունների սեռերի ձևավորման մոլեկուլային գենետիկական հետազոտությունները փաստում են, որ գոյություն ունեն *Z* և *W* քրոմոսոմներում տեղակայված բազմաթիվ գեներ, որոնք անմիջապես պատասխանատու են սեռի տարբերակման համար: Այսպես՝ *CHD* (*chromodomain-helicase-DNA binding protein*) գենը տեղակայված է *Z* և *W* քրոմոսոմներում (*CHD-Z* և *CHD-W*): Այն քրոմոսոմի կառուցվածքի փոփոխության ժամանակ կարգավորում է տրանսկրիպցիայի երևույթը: Չատկանշական է, որ անողնուց թռչունների մոտ (ջայլամ, էմու, նանդու) *CHD-W* գենը բացակայում է (M. Schmid, et al., 2005):

Avian sex-specific, W-linked գեները տեղակայված են *W*

քրոմոսոմում (բացառությամբ անողնուց թռչունների), պոլիմորֆ են, հայտնի է 40-ից ավելի պատճեն: Այս գեների ակտիվացմամբ կամ պասիվացմամբ է պայմանավորված տվյալ սեռի սեռական գեղձերի ձևավորումը (J. Rutkowska, et al, 2012):

W քրոմոսոմում տեղակայված *FET1* (*female expressed transcript1*) գենը պատասխանատու է բացառապես արուների սեռական գեղձերի զարգացման համար (K.J. Reed, A.H. Sinclair, 2002):

DMRT1 (*DM related transcription factor 1*) գենը տեղակայված է *Z* քրոմոսոմում, պայմանավորում է թռչունների միզասեռական համակարգի ձևավորումը: Չատկանշական է, որ նշված գենի հոմոլոգը հայտնաբերվել է մարդկանց 9-րդ քրոմոսոմում: Ծագումնաբանության առումով այն մոտ է դրոզոֆիլի *dsx* (*double-sex*) և նեմատոդների *mab3* (*male abnormal 3*) գեներին (C.K. Matson, et al., 2011):

Ընդհանուր առմամբ թռչունների սեռերի ձևավորմանը մասնակցում են նաև *AMHSOX9*, *SOX3*, *WT1*, *SF1*, *DAX1* գեները, որոնք օնտոգենեզի սաղմնային փուլում պայմանավորում են սեռերին բնորոշ ֆիզիոլոգիական պրոցեսները և օրգանների ձևավորումն ու զարգացումը (M. Matsuda, 2016):

Մայրերի գենոտիպով պայմանավորված ինչու է փոփոխվում սերնդում սեռերի թվային հարաբերակցությունը հարցադրմանը պատասխանելու և համապատասխան գենետիկական մարկերներ մշակելու նպատակով առաջին անգամ Չայաստանում կատարվել է հնդկահավերի գենոտիպավորում ըստ արյան շիճուկի տրանսֆերինի (*Tf*), ցերուլոպլազմինի (*Cp*) և հեմոգլոբինի (*Hb*) լուկունների:

Խնդիր է դրվել տարբեր գենոտիպերով էգ հնդկահավերից ստացված սերնդի սեռերի թվային հարաբերակցության փորձնական հետազոտությունների արդյունքները կիրառել տոհմասելեկցիոն աշխատանքներում:

Նյութը և մեթոդները

Չետազոտությունները կատարվել են 2009-2011 թվականներին Սյունիքի մարզի Ախլաթյան համայնքի գյուղացիական տնտեսությունում: Փորձերի համար ընտրվել են Սպիտակ լայնակուրծք ցեղի՝ միմյանց հետ ազգակցական կապ չունեցող 31 էգ և 1 արու հնդկահավեր: Փորձնական հետազոտությունների ժամանակ կիրառվել են դասական անասնաբուժական, հիբրիդոլոգիական, պոպուլյացիոն-գենետիկական, կենսաչափական ուսումնասիրությունների մեթոդները: Փորձնական խումբը համալրվել է նմանակների սկզբունքով՝ ըստ տարիքի, սեռի, ցեղին բնորոշ գունավորման, արտակազմվածքի և համակազմվածքի: Ինկուբացումը կատարվել է բնական, մեկ օրական ճտերի սեռը որոշվել ճապոնական եղանակներով (С.В. Косьяненко и др., 2020):

Լաբորատոր հետազոտությունները կատարվել են 2012 թ. Չայաստանի ազգային ագրարային համալսարանի ընդ-

հանուր կենսաբանության ամբիոնի «Գենետիկայի և կենսատեխնոլոգիայի» լաբորատորիայում: Ստացված արդյունքները մշակվել և գենետիկամաթեմատիկական վերլուծության են ենթարկվել 2020 թ.:

Արյունը նմուշառվել է հնդկահավերի թևատակի երակից՝ հել ակտիվատոր պարունակող վակուումային փորձանոթի միջոցով: Հնդկահավերը գենոտիպավորվել են ըստ արյան պոլիմորֆ սպիտակուցների՝ տրանսֆերինի (*Tf*), ցերուլոպլազմինի (*Cp*) և հեմոգլոբինի (*Hb*) լոկուսների, կիրառվել է պոլիակրիլամիդային գել էլեկտրաֆորեզի եղանակը: Արյան շիճուկը և հոմոլիզատը ստացվել են հայտնի մեթոդներով: Էլեկտրաֆորեզն իրականացվել է Դեյվիսի մեթոդով (Л.А. Остерман, 1981), գերմանական արտադրության Biometra ֆիրմայի Multigel-long ֆորեզի ապարատով, 10 %-անոց պոլիակրիլամիդային հելի վրա (աղ. 1):

Աղյուսակ 1. Արյան շիճուկի *Tf*, *Cp* և *Hb* սպիտակուցների էլեկտրաֆորեզի անհրաժեշտ պայմանները*

Սպիտակուցներ	Հել, %	Հելի երկարությունը, սմ	Նմուշի տիտղոս	Բուֆեր		Հոսանքի լարումը, Վ	Ֆորեզի տևողությունը, Ժամ
				հեղալի	էլեկտրոդային		
<i>Tf</i>	10	12	1:2	0.05 M տրիս- <i>HCl</i> , <i>pH</i> =8,8	0.016 M տրիս-գլիցին, <i>pH</i> =8,7	80	3,0
<i>Cp</i>	0	12	1:1	0.18 M տրիս- <i>HCl</i> , <i>pH</i> =8,8	0.016 M տրիս-բորատ, <i>pH</i> =9,0	90	2,5
<i>Hb</i>	10	12	1:1	0.2 M տրիս-ցիտրատ, <i>pH</i> =8,8	0.08 M տրիս-բորատ, <i>pH</i> =8,7	50	3,5

*Կազմվել է հեղինակների կողմից:

Հետազոտությունների արդյունքում ստացված տվյալները ենթարկվել են վիճակագրական վերլուծության. կիրառվել են մի շարք բանաձևեր (E.K. Меркурьева, 1970) և SPSS, Excel համակարգչային ծրագրերը:

Որոշվել են՝

1. Միջին թվաբանականը՝

$$M = \frac{\sum V}{n},$$

որտեղ M -ը միջին թվաբանականն է, V -ն՝ տարբերակները, n -ը՝ տարբերակների թիվը:

2. Միջին բառակուսային շեղումը՝

$$\sigma = \sqrt{\frac{\sum (V - M)^2}{n - 1}},$$

որտեղ σ -ն միջին բառակուսային շեղումն է:

3. Փոփոխականության գործակիցը՝

$$C_v = \frac{\sigma \cdot 100}{M},$$

որտեղ C_v -ն փոփոխականության գործակիցն է:

4. Միջին թվաբանականի սխալը՝

$$m_M = \frac{\sigma}{\sqrt{n}},$$

որտեղ m_M -ը միջին թվաբանականի սխալն է:

5. Հավաստիության չափանիշը՝

$$t_M = \frac{M}{m_M},$$

որտեղ t_M -ը միջին թվաբանականի հավաստիությունն է:

6. Տարբերությունների հավաստիությունը՝

$$t_D = \frac{D}{m_D},$$

որտեղ t_D -ն տարբերությունների հավաստիությունն է, D -ն՝ առավելագույն և նվազագույն տարբերակների տարբերությունը, m_D -ն՝ միջին թվաբանականի սխալի տարբերությունը:

7. Ընդհանուր դիսպերսիան՝

$$C_y = \sum (V - M_0)^2,$$

որտեղ C_y -ն ընդհանուր դիսպերսիան է, M_0 -ն՝ բոլոր համախմբերի ընտրանքների միջին թվաբանականը:

Արդյունքները և վերլուծությունը

Ներկայումս գյուղատնտեսական կենդանիների և թռչունների ընտրասերման աշխատանքներում կիրառվում են նոր գենետիկական մեթոդներ, որոնց հիմքում ընկած են պոլիմորֆ գենետիկական դետերմինացիայի համակարգերը (արյան խմբեր, պոլիմորֆ սպիտակուցներ, սատելիտային ԴՆԹ): Կիրառման պարզությամբ և մատչելիությամբ հատկապես արդիական է սպիտակուցների կենսաքիմիական բազմազանությունը: Բազմաթիվ ուսումնասիրություններով պարզվել է, որ գյուղատնտեսական կենդանիների և թռչունների սպիտակուցների կեսից ավելին պոլիմորֆ է. այն սինթեզող գենն ունի մեկից ավելի ալել: Նման սպիտակուցները ստացել են «կառուցվածքային գենների կենսաքիմիական մարկերներ» անվանումը և լայնորեն կիրառվում են գյուղատնտեսական կենդանիների ու թռչունների գենոտիպավորման և մոլեկուլային կամ մարկերային սելեկցիայում (Дж.И. Беллер, 2018):

Ֆորեգրամի արդյունքների վերլուծությունից ակներև է, որ փորձնական խմբի հնդկահավերի մոտ գենոտիպերի հնարավոր բազմաթիվ զուգորդումներից ձևավորվել են յոթը՝ *TfAA CpCD HbAB*, *TfAB CpBD HbCC*, *TfBC CpAB HbBD*, *TfBD CpCD HbAA*, *TfCC CpBC HbBC*, *TfCC Cp—HbBC*, *TfCD CpCC HbCD*: Դրանցից ստացված սերնդի սեռերի թվային հարաբերակցության արդյունքներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

Ըստ աղյուսակ 2-ի՝ բոլոր 31 էգ հնդկահավերից ստացված սերնդի սեռերի թվային հարաբերակցությունը մոտ է 1:1: Սակայն միաժամանակ, մայրերի գենոտիպով պայմանավորված, այն շեշտակի փոխվում է՝ գերակայություն է ստանում այս կամ այն սեռը: Այսպես՝ *TfAB CpBD HbCC*, *TfBC CpAB HbBD* և *TfCD CpCC HbCD* գենոտիպերով հնդկահավերից միջին հաշվով ստացվել են հավասար թվով արուներ և էգեր: Նշված գենոտիպով հնդկահավերը կազմում են փորձնական խմբի 54 %-ը:

Հետաքրքիր արդյունքներ են գրանցվել *TfCC CpBC HbBC* զուգակցման դեպքում. սերնդի 78 %-ը կազմում են արուները, 22 %-ը՝ էգերը: Նման գենոտիպ են ունեցել փորձնական խմբի հնդկահավերի 10 %-ը:

TfCC Cp—HbBC գենոտիպի դեպքում դարձյալ գերակշռում են արուները՝ կազմելով սերնդի 69 %-ը: Այս գենոտիպի հանդիպման հաճախականությունը, ինչպես նախորդինը, ևս 10 % է:


Չարմանալիորեն պատկերը փոխվում է *TfAA CpCD HbAB* զուգակցությամբ հնդկահավերից ստացված սերնդի մոտ. 65,5 %-ը կազմում են էգերը, իսկ 35,5 %-ը՝ արուները: Նշված գենոտիպի հանդիպման հաճախականությունը 13 % է:

TfBD CpCD HbAA գենոտիպը կրող հնդկահավերի սերն-

դի 65 %-ը կազմում են էգերը: Ընդ որում՝ այս գենոտիպի հանդիպման հաճախականությունը նույնպես 13 % է:

Ստացված սերնդի սեռերի թվային հարաբերակցությամբ պայմանավորված՝ փորձնական խմբի մայրերին կարելի է տարանջատել երեք հիմնական խմբերի.

1. *TfAA CpCD HbAB*, *TfBD CpCD HbAA*, երբ սերնդում գերակշռում են էգերը (65 %):
2. *TfCC CpBC HbBC*, *TfCC Cp—HbBC*, երբ սերնդում գերակշռում են արուները (73,8 %):
3. *TfAB CpBD HbCC*, *TfBC CpAB HbBD*, *TfCD CpCC HbCD*, երբ սերնդում արուների և էգերի թիվը հավասար է (գծ.):



ՊՃ. Տարբեր գենոտիպով հնդկահավերից ստացված մատղաշի սեռերի թվային հարաբերակցությունը (կազմվել է հեղինակների կողմից):

Աղյուսակ 2. Տարբեր գենոտիպով հնդկահավերից ստացված մատղաշի սեռերի թվային հարաբերակցությունը*

Մայրերի գենոտիպերը	n	Սերնդի սեռը	M±m	Միջին բառակուսային շեղումը, σ	Դիսպերսիան, C	Վարիացիայի գործակիցը, CV	t _m
<i>TfAA CpCD HbAB</i>	4	♀	64,5±1,50	3,00	9,00	4,65	43,00
		♂	35,5±1,50	3,00	9,00	8,45	23,66
<i>TfAB CpBD HbCC</i>	5	♀	50,8±1,66	3,70	13,70	7,28	30,60
		♂	49,2±1,66	3,70	13,70	7,52	29,63
<i>TfBC CpAB HbBD</i>	6	♀	49,5±1,31	3,21	10,30	6,48	37,78
		♂	50,5±1,31	3,21	10,30	6,36	38,55
<i>TfBD CpCD HbAA</i>	4	♀	65,25±1,31	2,63	6,92	4,03	49,43
		♂	34,75±1,31	2,63	6,92	7,57	28,81
<i>TfCC CpBC HbBC</i>	3	♀	21,7±1,76	3,06	9,33	14,1	12,33
		♂	78,3±1,76	3,06	9,33	3,87	44,48
<i>TfCC Cp—HbBC</i>	3	♀	30,7±0,33	0,58	0,33	1,91	21,81
		♂	69,3±0,33	0,58	0,33	0,89	21,00
<i>TfCD CpCC HbCD</i>	6	♀	51,3±1,41	3,44	11,87	6,71	31,38
		♂	48,7±1,41	3,44	11,87	2,98	34,54

*Կազմվել է հեղինակների կողմից:

Աղյուսակ 2-ի տվյալների վերլուծությամբ հարց է առաջանում՝ ինչ մեխանիզմով է կարգավորվում սեռերի նման հարաբերակցությունը:

Ակնհայտ է, որ սեռերի հարաբերակցությունը նախ և առաջ պայմանավորված է ծնողների տարիքով, ֆիզիոլոգիական վիճակով, գամետների որակով, կերաբաժնի բնույթով, բուժման մեթոդներով և, իհարկե, ժառանգելիությամբ:

Հետազոտությունների համաձայն՝ օվոգենեզի ժամանակ տարբեր գենոտիպով փորձնական խմբի հնդկահավերի մոտ առաջացել են անհավասար քանակությամբ *Z* և *W* քրոմոսոմ պարունակող գամետներ կամ ձվաբջիջներ:

Հարկ է նշել, հնդկահավերի գենետիկական մարկերների բացահայտումն արդիական խնդիր է, քանի որ մարկերային կամ գենոմային սելեկցիայի արդյունքների կանխատեսումը հիմնականում պայմանավորված է պոպուլյացիաների գենետիկական կառուցվածքով, առանձին լոկուսների, ալելների և տնտեսական արժեքավոր հատկանիշների միջև առկա կապի աստիճանով:

Եզրակացություն

Ըստ հետազոտությունների՝ փորձնական հնդկահավերի գենետիկական զուգակցումները յոթն են՝ *TfAA CpCD HbAB*, *TfAB CpBD HbCC*, *TfBC CpAB HbBD*, *TfBD CpCD HbAA*, *TfCC CpBC HbBC*, *TfCC Cp— HbBC*, *TfCD CpCC HbCD*, որոնց հանդիպման հաճախականությունը համապատասխանաբար կազմում է 0,13, 0,16, 0,19, 0,13, 0,10, 0,10 և 0,19 %:

TfCC CpBC HbBC և *TfCC Cp— HbBC* գենոտիպերով մայրերից ստացված սերնդի՝ համապատասխանաբար 78 և 69 %-ը կազմում են արուները: Այս գենոտիպերի հանդիպման հաճախականությունը 0,1 կամ 10 % է ($P > 0,999$):

TfAA CpCD HbAB և *TfBD CpCD HbAA* գենոտիպերով մայրերից ստացված սերնդում եզերի 65 % գերակշռությամբ պայմանավորված՝ գենոտիպերի հանդիպման հաճախականությունը կազմում է 0,13 կամ 13 % ($P > 0,999$):

TfAB CpBD HbCC, *TfBC CpAB HbBD* և *TfCD CpCC HbCD* գենոտիպերով մայրերից ստացված սերնդում արուների ու եզերի թիվը հավասար է, ինչը փաստում է, որ նշված գենոտիպերի հանդիպման հաճախականությունը բավական բարձր է՝ 54 % ($P > 0,999$):

Գրականություն

1. Բադալյան Մ.Վ., Դիլանյան Վ.Թ., Խառատյան Ս.Ա. Կուսածին և բեղմնավորված ձվից ստացված հնդկահավերի գենետիկական բնութագիրն ըստ արյան շիճուկի որոշ արվիմոֆ սպիտակուցների // Ագրոգիտություն և տեխնոլոգիա. - Եր., 2021. - 1/73. - Էջ 79-83. <https://doi.org/10.52276/25792822-2021.1-79>.

2. Амбросьева Е.Д. Полиморфизм белков крови сельскохозяйственных животных и эффективность использования его в селекционном процессе: Дис. соиск. уч. степ. док. биол. наук. - М.: Россия, 2005.
3. Веллер Дж.И. Геномная селекция животных. - СПб., 2018.
4. Косьяненко С.В., Жогло С.В., Вашкевич Т.Н. Выраженность признаков аутосексности в родительских формах отечественных кроссов яичных кур. Актуальные проблемы интенсивного развития животноводства. - 2020. - С. 30–37.
5. Лобашев М.Е. Генетика. - Ленинград, 1967.
6. Меркурьева Е.К. Биометрия в селекции и генетике сельскохозяйственных животных. - М.: Колос, 1970.
7. Остерман Л.А. Методы исследования белков и нуклеиновых кислот: Электрофорез и ультрацентрифугирование. - М.: Наука, 1981.
8. Buchen, L. (2010). The Fickle Y Chromosome. *Nature*, 463, - pp. 149-152. <https://doi.org/10.1038/463149a>.
9. Ellegren, H. (2000). Evolution of the Avian Sex Chromosomes and their Role in Sex Determination. *Trends Ecol. Evol.*, 15, - pp. 188-192. [https://doi.org/10.1016/s0169-5347\(00\)01821-8](https://doi.org/10.1016/s0169-5347(00)01821-8).
10. Ezaz, T., Stiglec, R., Veyrunes, F., Marshall Graves, J.A. (2006). Relationships between Vertebrate ZW and XY Sex Chromosome Systems. *Curr. Biol.*, 16, R736–R743. <https://doi.org/10.1016/j.cub.2006.08.021>.
11. Graves, J.A.M. (2013). How to Evolve New Vertebrate Sex Determining Genes. *Dev. Dyn.*, 242, - pp. 354-359. <https://doi.org/10.1002/dvdy.23887>.
12. Graves, J.A.M. (2003). Sex and Death in Birds: A Model of Dosage Compensation that Predicts Lethality of Sex Chromosome Aneuploids. *Cytogenet. Genome Res.*, 101, - pp. 278-282. <https://doi.org/10.1159/000074349>.
13. Itoh, Y., Kampf, K., Arnold, A.P. (2011). Possible Differences in the Two Z Chromosomes in Male Chickens and Evolution of MHM Sequences in Galliformes. *Chromosoma*, 120, - pp. 587-598. <https://doi.org/10.1007/s00412-011-0333-x>.
14. Matson, C.K., Murphy, M.W., Sarver, A.L., Griswold, M.D., Bardwell, V.J., Zarkower, D. (2011). DMRT1 Prevents Female Reprogramming in the Postnatal Mammalian Testis. *Nature*, 476, - pp. 101-104. <https://doi.org/10.1038/nature10239>.
15. Matsuda, M., Sakaizumi, M. (2016). Evolution of the Sex-Determining Gene in the Teleostean Genus *Oryzias*. *Gen. Comp. Endocrinol.*, 239, - pp. 80-88. <https://doi.org/10.1016/j.ygcen.2015.10.004>.

16. Nakagawa, S. (2004). Is Avian Sex Determination Unique? Clues from a Warbler and from Chickens. *Trends Genet.*, 20, - pp. 479-480. <https://doi.org/10.1016/j.tig.2004.07.010>.
17. Reed, K.J., Sinclair, A.H. (2002). RETRACTED: FET-1: a Novel W-Linked, Female Specific Gene Up-Regulated in the Embryonic Chicken Ovary. *Gene Expr. Patterns*, 2, - pp. 83-86. [https://doi.org/10.1016/s0925-4773\(02\)00288-5](https://doi.org/10.1016/s0925-4773(02)00288-5).
18. Rutkowska, J., Lagisz, M., Nakagawa, S. (2012). The Long and the Short of Avian W Chromosomes: No Evidence for Gradual W Shortening. *Biol. Lett.*, 8, - pp. 636-638. <https://doi.org/10.1098/rsbl.2012.0083>.
19. Schmid, M., Nanda, I., Burt, D.W. (2005). Second Report on Chicken Genes and Chromosomes. *Cytogenet. Genome Res.*, 109, - pp. 415-479. <https://doi.org/10.1159/000084205>.

Использование полиморфных белков крови индеек как молекулярных маркеров для регуляции образования пола

М.В. Бадалян, Т.Б. Алоян, Ю.Г. Мармарян

Национальный аграрный университет Армении

С.А. Харатян

Научный центр оценки и анализа рисков безопасности пищевых продуктов

Ключевые слова: индейка, гомозиготный, гетерозиготный, генотип, пол

Аннотация. Исследования показали, что соотношение полов в потомстве индеек в зависимости от генотипа и частоты встречаемости генотипов изменяется. Так, в потомстве индеек с генотипами *TfCC CpBC HbBC* и *TfCC Cp- HbBC* 78 и 69 % составили самцы, в потомстве матерей с генотипами *TfAA CpCD HbAB* и *TfBD CpCD HbAA* 65 % самки, а у индеек с генотипами *TfAB CpBD HbCC*, *TfBC CpAB HbBD* и *TfCD CpCC HbCD* в потомстве наблюдалось равное количество самцов и самок ($P>0,999$). Полученные результаты могут быть использованы в качестве генетических маркеров в селекционно-племенной работе с индейками.

Application of Blood Protein Polymorphism in Turkeys as Molecular Markers for the Regulation of Sex Formation

M.V. Badalyan, T.B. Aloyan, Yu.G. Marmaryan

Armenian National Agrarian University

S.A. Kharatyan

Scientific Center for Risks Assessment and Analysis in Food Safety Area

KeyWords: turkey, homozygous, heterozygous, genotype, sex

Abstract. The conducted investigations testify that due to the genotypes and their occurrence frequency in mother turkeys, the numerical sex ratio undergoes certain changes in the generation. Males emerged from the mothers with *TfAA CpCD HbAB* and *TfBD CpCD HbAA* genotypes make up about 78 and 69 %, whereas females produced from the mothers with *TfAA CpCD HbAB* and *TfBD CpCD HbAA* genotypes are 65 %. The number of males and females produced from the mothers with *TfAB CpBD HbCC*, *TfBC CpAB HbBD* and *TfCD CpCC HbCD* genotypes is equal ($P>0,999$). The obtained outcomes can be applied in the turkey breeding activities as genetic markers.

Շնորհակալ եմ 25.05.2022 թ.
Գրախոսվել է՝ 20.06.2022 թ.



ՀՏԴ 636.22/.28[619:616.993.192.65(479.25)]

ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԲԱԲԵՉԻՈՉԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ

Վ.Վ. Գրիգորյան *կ.գ.թ.*, Լ.Ն. Գրիգորյան *ա.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

grigoryanvgv@mail.ru, lianagrigoryan7878@mail.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

բաբեզիոզ,
Տավուշի մարզ,
տավարաբուծություն,
տիգ,
արոտավայր

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Խոշոր եղջերավոր կենդանիների բաբեզիոզի տարածվածության դինամիկան ուսումնասիրվել է տարբեր էկոհամակարգերի պայմաններում: Գարնանը, ամռանը և աշնանը հետազոտության են ենթարկվել 6 ամսականից բարձր տարբեր տարիքային խմբերի կենդանիներ: Պարզվել է, որ հիվանդության տարածմանը հատկապես նպաստում են բարենպաստ բնակլիմայական պայմաններում բազմացող և զարգացող *Rhipicephalus* սեռի տզերը, որոնք Տավուշի մարզի առանձին աշխարհագրական գոտիներում տալիս են մինչև 4 սերունդ ու հասցնում մեծ տնտեսական վնաս: Ուստի գերակա խնդիր է հիվանդության հարուցիչների և արոտավայրային տզերի դեմ գիտականորեն հիմնավորված համալիր բուժկանխարգելիչ միջոցառումների հրատապ մշակումը:

Նախաբան

Հայաստանում անասնաբուծության առաջատար ճյուղերից է տավարաբուծությունը: Տավարը բուծում են կաթ, միս, կաշեի ու մթ ստանալու, առանձին երկրներում՝ նաև որպես աշխատուժ բանեցնելու նպատակով: Հայաստանում անասնազիւսբանակի մասնատման և խոշոր եղջերավոր կենդանիների տոհմասելեցիոն լայնածավալ աշխատանքներ չիրականացնելու արդյունքում կովերի միջին կաթնատվությունը տարիներ շարունակ տատանվում է. 2017 թ. կազմել է 2260, 2018 թ.՝ 2310, 2019 թ.՝ 2365 կգ սահմաններում (www.armstat.am):

Մսի արտադրության նպատակով աճեցվող կենդանիների նախասպանդային զանգվածը չի գերազանցում 320 կգ: Մինչդեռ տավարաբուծության վարման ժամանակակից տեխնոլոգիաները և բարձրմթերատու ցեղերի գենոֆոնդի օգտագործումը հնարավորություն են տալիս ստանալ տարեկան առնվազն 4000 կգ կաթ, իսկ մսի արտադրության համար բավարարված տավարն իրացնել 450 կգ և բարձր կենդանի զանգվածով (Ա.Յ. Ազարյան և ընկ., 2021):

Տավարաբուծության զարգացմանը խոչընդոտում են բազմաթիվ հիվանդություններ, այդ թվում՝ բաբեզիոզը (Մ.Ս. Ակբաև և ընկ., 2004, Մ.Մ. Կոստոմախին, 2009, Յ.Յ. Լազարև, 2008, Ա.Ա. Նեպոկլոնով, Մ.Ա. Սոխոբով, 2005, Ք.Տ. Շաֆիյուլլին, 2005, Մ.Մ.Դ. Րուտ, 1976):

Տավարի բաբեզիոզը ինվազիոն հիվանդություն է, լայնորեն տարածված է Հայաստանի տաթ բնակլիմայական գոտիներում՝ հատկապես Տավուշի մարզում: Հարուցիչ փոխանցողը *Boophilus calcaratus*, երբեմն նաև *Rhipicephalus bursa* և *Haemaphysalis punctata* տզերն են (Ա.Յ. Բուլանկին, 2015, Յ.Մ. Կորենբերգ, 1983, Շ.Օ. Մովսեսյան և ընկ., 2013):

Արոտավայրային տզերի բանակը պայմանավորված է եղանակային պայմաններով, ենթակա է էական տատանումների, իսկ հիվանդության տարածվածության դինամիկան՝ տեսակի բեղունությամբ և էգերի կողմից ներծծված արյան քանակությամբ (Յ.Յ. Կերբաբաև, Ս.Ք. Լյաճա, 2011, Վ.Ն. Բելոզերով, 2001):

Արոտավայրային տզերը բավական կայուն են արտա-

քին միջավայրի անբարենպաստ գործոնների նկատմամբ (B.H. Романенко, 2007, E.M. Addison, R.F. McLaughlin, 1988, F. Dantas-Torres, 2013): Հարուցիչը փոխանցում են հիմնականում տզի հարսնյակներն ու հասուն ձևերը՝ ձվադրման միջոցով, տրանսովարիալ և միջփուլային՝ տրանսֆագային ճանապարհներով (Յ.Б. Кербасаев и др., 2000): Հիվանդությունը փոխանցվում է սերնդետրոնով, այսինքն՝ տզերը հիվանդության հարուցիչներ են կրում ամբողջ կյանքի ընթացքում (П.И. Христиановский и др., 2009):

Նոր ներկրված կենդանիները Էնգոտիկ օջախներում հիվանդանում են բաբեզիոզի ավելի ծանր ձևով, իսկ տեղական տավարի մոտ հիվանդության ախտանիշները կարող են ամենաին էլ չդրսևորվել:

Սովորաբար բաբեզիոզի առաջին դեպքերը գրանցվում են կենդանիներին արոտավայր տանելուց 10-15 օր անց: Տաք շրջաններում տարվա ընթացքում կարող է գրանցվել միևնույն չորս բռնկում, ինչը պայմանավորված է փոխանցող տզերի սերունդների թվով (И.Н. Емельянова, 2002):

Ըստ ներկայումս գործող դասակարգման՝ արոտավայրային տզերի *Boophilus* սեռը *Rhipicephalus* սեռի ենթասեռն է, ուստի *Boophilus calcaratus* տեսակը վերանվանվել է *Rhipicephalus annulatus* (A.A. Guglielmone, et al., 2014):

Նյութը և մեթոդները

Ուսումնասիրությունները կատարվել են 2020-2022 թթ. Տավուշի մարզում: Էկոհամակարգերի համաճարակաբանական հետազոտություններն իրականացվել են հատուկ ցուցումների կիրառմամբ: Խոշոր եղջերավոր կենդանիների բաբեզիոզի տարածվածությունն ուսումնասիրվել է անասնաբուժական ծառայության վիճակագրական տվյալների և սեփական հետազոտությունների հիման վրա:

Բաբեզիոզի ախտորոշման և հիվանդ կենդանիների հետազոտությունների ընթացքում կիրառվել են անասնաբուժական մակաբուծաբանության համընդհանուր մեթոդներ: Հաշվի են առնվել համաճարակաբանական տվյալները, ախտանիշները, ախտաբանաանատոմիական փոփոխությունները: Արյան նմուշները վերցվել են կենդանիների ծայրամասային՝ ականջի կամ պոչի արյան անոթներից և հետազոտվել լաբորատոր պայմաններում. ներկվել են ըստ Դոմանովսկու և դիտվել մանրադիտակի մեծ խոշորացմամբ՝ իմերսիոն համակարգով (90X): Նմուշառված կենդանիների մոտ նկատվել են բացահայտ ախտանիշներ: Մինչ այդ բաբեզիոզի նկատմամբ յուրահատուկ բուժում չի իրականացվել:

Խոշոր եղջերավոր կենդանիների բաբեզիոզի տարածվածության դինամիկան ուսումնասիրվել է տարբեր էկոհամակարգերի պայմաններում: Գարնանը, ամռանը և աշնանը հետազոտության են ենթարկվել 6 ամսականից բարձր տարբեր տարիքային խմբերի կենդանիներ:

Արդյունքները և վերլուծությունը

Տավուշի մարզում հանդիպում են աշխարհագրական հար-

թավայրային, անտառային, ենթալպյան և ալպյան գոտիականությունները:

Հարթավայրային գոտին գտնվում է ծովի մակերևույթից 750-850 մ, անտառային գոտին՝ 850-2000 մ, ենթալպյան գոտին՝ 2000-2200 մ, ալպյան գոտին՝ 2200-2900 մ բարձրությունների վրա: Բնակլիմայական պայմանները նպաստավոր են հողվածոտանիների, այդ թվում՝ արոտավայրային տզերի զարգացման համար, որոնք բազմաբանակ և բազմատեսակ են հատկապես հարթավայրային ու անտառային գոտիներում:

Ըստ աղյուսակ 1-ի՝ կենդանիների տզակրությունը հարթավայրային գոտում կազմում է 100 %, անտառային, ենթալպյան, ալպյան գոտիներում՝ համապատասխանաբար 86,6-100, 66,6-100, 53,3-100 %: Բազմակի ուսումնասիրությունների համաձայն՝ ծովի մակերևույթից գոտիականության բարձրացմանը զուգընթաց տզակրության էքստենսիվությունն ու ինտենսիվությունը նվազում են:

Հարկ է նշել, որ բաբեզիոզը բնաօջախային հիվանդություն է: Հարուցիչ բնական օջախներ են տզերով վարակված տարածքները: Ուշագրավ է, որ տզակրության ինտենսիվությունը տարբեր է մեկ կենդանու մոտ կարող է հայտնաբերվել մեկից մինչև մի քանի հարյուր տիզ (նկ. 1):

Աղյուսակ 1. Տավուշի մարզում խոշոր եղջերավոր կենդանիների տարբեր տարիքային խմբերի վարակվածությունը իբրտային տզերով*

Կենդանիների տարիքը	Միոռոմբոլին վերջնականորեն զոհոսածոտը	Վարակված են		Մշտաբնակիկությունը միջին ինտենսիվությամբ
		Կենդանի	%	
Հարթավայրային գոտի				
Մինչև 1 տարեկան	15	15	100	106,1
1-3 տարեկան	15	15	100	162,2
4-6 տարեկան	15	15	100	203,3
6 տարեկանից բարձր	15	15	100	194,6
Անտառային գոտի				
Մինչև 1 տարեկան	15	13	86,6	88,7
1-3 տարեկան	15	14	93,3	145,4
4-6 տարեկան	15	15	100	193,2
6 տարեկանից բարձր	15	15	100	186,4
Ենթալպյան գոտի				
Մինչև 1 տարեկան	15	10	66,6	64,1
1-3 տարեկան	15	15	100	122,6
4-6 տարեկան	15	15	100	118,4
6 տարեկանից բարձր	15	15	100	89,3
Ալպյան գոտի				
Մինչև 1 տարեկան	15	8	53,3	22,4
1-3 տարեկան	15	14	93,3	81,5
4-6 տարեկան	15	15	100	94,2
6 տարեկանից բարձր	15	15	100	51,6


* Կազմվել է հեղինակների կողմից:



Նկ. 1. Բազմաթիվ տզերով վարակված կով:



Նկ. 2. Բաբեզիոզով հիվանդ կովի դեղնած սպիտակուցային թաղանթով աչք:



Նկ. 3. Բաբեզիոզի հարուցիչներով ախտահարված էրիթրոցիտներ:

Աղյուսակ 2. Հայտնաբերված տզերի բանակն ըստ գոտիների*

n=100

Գոտիականությունը	Կենդանիների վրա հայտնաբերված արոտավայրային տզերի բանակն ըստ սեռի, %				
	<i>Ixodes</i>	<i>Rhipicephalus</i>	<i>Haemaphysalis</i>	<i>Hyalomma</i>	<i>Dermacentor</i>
Հարթավայրային	2	79	1	11	7
Անտառային	10	64	6	2	18
Ենթալպյան	14	40	16	0	30
Ալպյան	25	8	22	0	45

*Կազմվել է հեղինակների կողմից:

Յուրաքանչյուր գոտում կենդանիներից հավաքվել է 100-ական տիգ: Հայտնաբերվել են հինգ սեռի՝ *Ixodes*, *Rhipicephalus*, *Haemaphysalis*, *Hyalomma*, *Dermacentor* տզեր: Աղյուսակ 2-ի համաձայն՝ առավել տարածված են *Rhipicephalus* սեռի տզերը, որոնց բանակը տարբեր աշխարհագրական գոտիներում տատանվում է 8-79 %-ի սահմանում: Ամենից քիչ տարածվածը *Hyalomma* սեռի տզերն են՝ մինչև 11%: *Ixodes*, *Haemaphysalis*, *Dermacentor* սեռերի տզերի տարածվածությունը համապատասխանաբար կազմում է 2-25, 2-11, 7-45 %:

Ըստ հետազոտությունների՝ հարթավայրային գոտում գրանցվել են հիվանդության 4, անտառային գոտում՝ 3, ենթալպյան գոտում՝ 1 բռնկումներ, իսկ ալպյան գոտում բաբեզիոզ հիվանդություն չի հայտնաբերվել: Հատկապես է, որ հիվանդության տարածումը պայմանավորված է տզերի բեղունությամբ, զարգացման ցիկլի տևողությամբ, ինչպես նաև տվյալ գոտիականության ջերմային ռեժիմի փոփոխականությամբ, ինչը զգալիորեն ազդում է տզերի կենսունակության վրա: Բաբեզիոզով հիվանդ կենդանիների մոտ նկատվում է ջերմաստիճանի բարձրացում, մարսողական և սրտանոթային համակարգերի գործունեության խանգարում, հեմոգլոբինուրիա, տեսանելի լորձաթաղանթների դեղնություն (Նկ. 2) և կաթնատվության

նվազում, որը տևում է մինչև 20 օր և ավելի: Կենդանիների օրգանիզմում հարուցիչները տեղակայվում են էրիթրոցիտներում, զարգանում են, բազմանում և, բայթայելով դրանք, թափանցում նոր էրիթրոցիտների մեջ (Նկ. 3):

Եզրակացություն

Տավուշի մարզի յուրաքանչյուր աշխարհագրական գոտում բնորոշ ֆաունան և ֆլորան նպաստավոր պայմաններ են ստեղծում բազմաթիվ հիվանդությունների, այդ թվում՝ բաբեզիոզի հարուցիչների փոխանցողների զարգացման ու բազմացման համար:

Բաբեզիոզի լայնորեն տարածվածությունը Տավուշի մարզում պայմանավորված է բարենպաստ բնակլիմայական պայմաններով, արոտավայրային տզերի բեղունությամբ: Հատկապես տարածված են *Rhipicephalus* սեռի տզերը, որոնք մարզի առանձին աշխարհագրական գոտիներում տալիս են մինչև չորս սերունդ և հասնում հսկայածավալ տնտեսական վնաս: Ուստի գերակա խնդիր է գիտականորեն հիմնավորված համալիր բուժկանխարգելիչ միջոցառումների հրատապ մշակումը:

Բուժիչ միջոցառումներն իրականացվում են հարուցիչների ոչնչացման, իսկ կանխարգելիչ միջոցառումները՝ արոտավայրային տզերի դեմ պայքարի նպատակով:

Գրականություն

1. Азарян А.В. и др. Экономика Армении. - Ер., 2021:
2. Акбаев М.Ш. и др. Методы борьбы с гнусом и иксодовыми клещами в хозяйствах Рязанской области // Ветеринария. - 2004. - N 10. - С. 29-31.
3. Буланкин А.Б. Фауна и экология клещей семейства Ixodidae, средства и методы защиты животных от иксодовых клещей в Московской области: Автореферат. - М., 2015. - 22 с.
4. Емельянова И.Н. К изучению влияния температуры на иксодового клеща *Hyalomma marginatum* Koch, 1844 // Экология, биоразнообразие и значение кровососущих насекомых и клещей экосистем России. - Великий Новгород, 2002. - С. 139-140.

5. Кербабаяев, Э.Б. и др. Эпизоотическая ситуация по пироплазмидозам и борьба с их переносчиками // Ветеринария. - 2000. - N 6. - С. 10-13.
6. Кербабаяев Э.Б., Цушба Ц.Р. Иксодофауна республики Абхазия и сопредельных территорий // Российский паразитологический журнал. - 2011. - N 1. - С. 18-26.
7. Коренберг Э.И. Что такое природный очаг. - М., 1983. - 64 с.
8. Костомахин Н.М. Скотоводство. - СПб., 2009. - 432 с.
9. Лазарев В.В. Пироплазмидозы жвачных животных // Ветеринария Кубани. - 2008. - N 2. - С. 28-31.
10. Мовсисян С.О. и др. Формирование паразитофауны овец в условиях содержания на ограниченных пастбищных территориях предгорной зоны Армении // Российский паразитологический журнал. - 2013. - N 1. - С. 16-23.
11. Непоклонов А.А., Прохорова И.А. Современные средства борьбы с паразитарными болезнями крупного рогатого скота // Ветеринария. - 2005. - N 4. - С. 25-27.
12. Романенко В.Н. Экологические основы этологии пастбищных иксодовых клещей (*Parasitiformes, Ixodidae*) при поиске и нападении на прокормителей // Вестник Томского государственного университета. - 2007. - N 298. - С. 224-228.
13. Сафиуллин Р.Т. Комплексный подход к борьбе с паразитарными болезнями жвачных животных // Ветеринария. - 2005. - N 4. - С. 20-22.
14. Христиановский П.И. и др., Рекомендации по выявлению природных очагов пироплазмозов животных // Российский паразитологический журнал. - 2009. - N 1. - С. 109-115.
15. Addison, E.M., McLaughlin, R.F. (1988). Growth and Development of Winter Tick, *Dermacentor albipictus*, on moose, *Alces alces* // J. Parasitol. - V. 74. - N 5, - pp. 670-678. <https://doi.org/10.2307/3282188>.
16. Belozero, V.N. (2001). Regeneration of Limbs and Sensory Organs in Ixodid Ticks (Acari, Ixodoidea, Ixodidae and Argasidae) // Experimental and Applied Acarology, - V. 32, - N 3, - pp. 129-142.
17. Dantas-Torres, F. (2013). Morphological and Genetic Diversity of *Rhipicephalus sanguineus* sensu lato from the New and Old Worlds / F. Dantas-Torres, M.S. Latrofa, G. Annoscia // Parasites & Vectors. - Vol. 6. - N 1, - pp. 213. <https://doi.org/10.1186/1756-3305-6-213>.
18. Guglielmone, A.A., et al. (2014). The Hard Ticks of the World // Springer Science. - Dordrecht, - N 1, - 738 p.
19. Route, H.M.D. (1976). The Tick Fever Parasites of Cattle / Proc. R. Soc. Queens. - Vol. 87, - pp. 5.
20. www.armstat.am. Հայաստանի վիճակագրական տարեգիրք (դիտվել է՝ 03.06.2022 թ.).

Распространение babesиоза крупного рогатого скота в Тавушской области

В.В. Григорян, Л.Г. Григорян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: babesиоз, Тавушская область, скотоводство, клещ, пастбище

Аннотация. Изучена динамика распространения babesиоза крупного рогатого скота в различных экосистемах. Весной, летом и осенью были обследованы животные разных возрастных групп старше 6 месяцев. Установлено, что распространению болезни особенно способствуют размножающиеся и развивающиеся в благоприятных климатических условиях клещи рода *Rhipicephalus*, которые в отдельных географических поясах Тавушской области дают до 4 поколений потомства и наносят большой экономический ущерб. Поэтому первоочередной задачей является срочная разработка научно обоснованных комплексных профилактических мероприятий.

Prevalence of Bovine Babesiosis in the Tavush Region

V.V. Grigoryan, L.H. Grigoryan

Armenian National Agrarian University

Keywords: babesiosis, Tavush, cattle farming, tick, pasture

Abstract. The dynamics of the bovine babesiosis prevalence has been studied in conditions of various ecosystems. In spring, summer and autumn animals of different age groups over 6 months old have been investigated. It has turned out that the spread of the disease is particularly promoted by the ticks of *Rhipicephalus* genus propagated in favorable climatic conditions, which produce up to 4 generations in individual geographic zones of the Tavush region and cause huge economic damages. Thus, the development of scientifically justified complex therapeutic and preventive measures against the disease pathogens and pasture ticks is a priority issue.

Ընդունվել է՝ 27.06.2022 թ.
Գրախոսվել է՝ 13.07.2022 թ.

ՀՏԴ 636.4:619:616.985:579.841.94

ԽՈՉԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ԱՏՐՈՖԻԿ ՌԻՆԻՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՅ ՈՐՈՇ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ա.Ռ. Հակոբյան *ա.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

akobian.anush@yandex.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

վարակիչ ատրոֆիկ ռինիտ,
թթախեցիների հետաճ,
զանգի դիմային մասի
ոսկորների ձևափոխություն,
խոզաբուժական տնտեսություն,
Bordetella bronchiseptica,
դերմոնեկրոտոքսին

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Խոզերի ատրոֆիկ ռինիտը ներկայումս տարածված է ՀՀ Արմավիրի և Կոտայքի մարզերի որոշ խոզաբուծական տնտեսություններում: Հետազոտությունների համաձայն՝ հիվանդության նկատմամբ ընկալունակ են բոլոր ցեղատեսակների և սեռատարիքային խմբերի խոզերը, սակայն բնորոշ կլինիկական ախտանշանները դրսևորվում են 3-5 ամսական բույսեր մատուցելի մոտ:

Հայաստանում հիվանդության տարածմանը նպաստում են խոզաբուծական տնտեսությունների միջև տնտեսական կապերը: Անապահով խոզաբուծական տնտեսությունների առողջացումը, ինչպես նաև հարուցիչի հետագա տարածումը կանխող միջոցառումները իրականացվել են հիվանդության կանխարգելման և պայթարի միջոցառումների հրահանգի համաձայն: Բուժման նպատակով կիրառվել է Սուլֆապիրիմ 48-ԲՏ պատրաստուկը:

Նախաբան

Վերջին տարիներին խոզաբուծական տնտեսություններում տարածված հիվանդություններից առանձնակի ուշադրություն է դարձվում վիրուսային հիվանդություններին՝ աֆրիկյան և դասական ժանտախտներին: Վերջիններս այսօր էլ համաճարակավտանգ են և սեմինարների, կոնֆերանսների, գիտաժողովների, գիտական հրապարակումների քննարկման առարկան են: Հարկ է նշել, որ մանրէական ծագման մի շարք վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքում զգալիորեն նվազում է խոզաբուծության շահութաբերությունը:

Հայաստանում անասնապահական տնտեսությունների մասնավորեցմամբ, ինչպես նաև դրանցում անասնաբուծական ծառայության իսպառ բացակայությամբ պայմա-

նավորված՝ մի շարք հիվանդություններ ոչ միայն պաշտոնապես չեն արձանագրվում, այլև չեն ախտորոշվում: Այդ հիվանդությունների շարքին է դասվում խոզերի վարակիչ ատրոֆիկ ռինիտը, որը շնչառական ուղիների քրոնիկ ընթացքով հիվանդություն է, բնորոշվում է լորձաթաղանթների շճաթարախային բորբոքումով, թթախեցիների հետաճով և զանգի դիմային մասի ոսկորների ձևափոխությամբ:

Խոզերի վարակիչ ատրոֆիկ ռինիտը ներկայումս տարածված է Արմավիրի և Կոտայքի մարզերի որոշ խոզաբուծական տնտեսություններում: Հիվանդության հետևանքով առաջացած անկումները մեծաթիվ չեն (7-10 %), սակայն հիվանդ խոզերի աճը կերակրման միևնույն պայմաններում դանդաղում է. 6-8 ամսականում քաշաճը կազմում է 60-70 %, ինչը տնտեսական վնաս է հասցնում

տնտեսությանը: Պայթարի միջոցառումների բացակայության դեպքում համաճարակը տնտեսություններում կարող է շարունակվել մի քանի տարի (Н.Н. Алтыхов, 1990, И.А. Бакулов, 1987, Б.Ф. Бессарабов и др., 2007):

Չարկ է նշել, որ նախատրամադրող գործոնների առկայությունը և խոզաբուծական տնտեսությունների միջև տնտեսական կապերը նպաստում են հիվանդության տարածմանը: Ուստի խնդիր է դրվել Էջմիածնի տարածաշրջանի որոշ խոզաբուծական տնտեսություններում իրականացվող հետազոտությունների միջոցով ուսումնասիրել և պարզել ատրոֆիկ ռինիտի առաջացման պատճառներն ու տարածվածությունը:

Նյութը և մեթոդները

Հետազոտություններն իրականացվել են 2021 թվականի ապրիլ-մայիս ամիսներին: Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի և Կոտայքի մարզի մասնավոր խոզաբուծական տնտեսություններն ունեն մային ուղղվածություն, զբաղվում են լանդրաս, դյուրոկ, կարմալ, պետրեն և այլ ցեղատեսակների տարբեր սեռատարիքային խմբերի 400-500 գլուխ խոզերի բուծմամբ, երբեմն էլ՝ տոհմային նշանակության կենդանիների վաճառքով: Սերմավորումը կատարվում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական եղանակով: Շնից առաջ հղի խոզամայրերով մայրանոցի համալրումն իրականացվում է երեք օրվա ընթացքում:

Հետազոտությունների ընթացքում մայրանոցի յուրաքանչյուր սեկտորում տեղաբաշխվել է 20 խոզամայր: Մայրերից խոնկորների անջատումը նախատեսվել է միջինը կյանքի 30-րդ օրը: Ի տարբերություն մայրերից անջատված խոնկորների և բոման ենթակա մատղաշի պահվածքի պայմանների՝ խոզամայրերի համար նախատեսված տարածքները գտնվել են բավականին լավ սանիտարական վիճակում: Փոքր տարածքներում մեծ գլխաքանակի դեպքում նկատվել է սանիտարական վիճակի վատթարացում: Գրանցվել է միևնույն սեռատարիքային խմբի խոնկորների կենդանի զանգվածի բավական մեծ տարբերություն, որոշ դեպքերում անգամ ծայրահեղ հյուժվածություն:

Տնտեսություններում իրականացվել են կարմրախտի, խոզերի դասական ժանտախտի, կոլիբակտերիոզի, պաստերելյոզի, սալմոնելյոզի, դիպլոկոկային սեպտիցեմիայի, լեպտոսպիրոզի դեմ պատվաստումներ:

Լաբորատոր հետազոտությունները կատարվել են ՀԱԱՀ Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոնում: Հետազոտության են ենթարկվել ատրոֆիկ ռինիտին բնորոշ կլինիկական ախտանիշներով հիվանդ խոզերը: Կիրառվել են հետազոտության համաճարակաբանական, կլինիկական, ախտաբանաանատոմիական և լաբորատոր եղանակներ: Լաբորատոր ախտորոշման համար ախտաբանական նյութ է ծառայել բնորոշ կլինիկական ախտանիշներով հիվանդ 25 գլուխ խոզերի քթի խոռոչի պարունակյալը, որից անմիջապես անասնաշենքի պայմաններում

պատրաստվել են թուրքներ: Էջմիածնի տարածաշրջանի, ինչպես նաև Կոտայքի մարզի խոզաբուծական տնտեսություններից ախտաբանական նյութը նմուշառվել է ըստ սեռատարիքային խմբերի՝ խոզամայրեր, ծծկեր խոնկորներ և 100-150 օրական բոման մատղաշ: Յուրաքանչյուր խմբից վերցվել է 3-5 նմուշ: Ընդհանուր ախտաբանական նյութը կազմել է 50 նմուշ: Մանրաբանական հետազոտության նպատակով բամբակե խծուծներով վերցված ախտաբանական նյութը պահածոյացվել է մանրէազերծ ֆիզիոլոգիական լուծույթում: Հետազոտություններն իրականացվել են ընդունված մանրաբանական եղանակներով, կիրառվել են համապատասխան միջավայրեր և ռեակտիվներ: Ախտաբանական նյութից ցանքս է կատարվել սովորական սննդային միջավայրերում՝ ՄՊԲ և ՄՊԱ (рН=7,2): ՄՊԲ-ում 48-ժամյա աճեցվածքային պայմաններում հիվանդության հարուցիչն առաջացրել է միջավայրի հավասարաչափ պղտորություն, որից հետո փորձանոթի հատակին գոյացել է նստվածք, և ձևավորվել է ներպատային օղակ: ՄՊԱ-ում նույն ժամանակամիջոցում առաջացել են 2-3 մմ տրամագծով փայլուն, սպիտակամոխրավուն, աննշան արտափրկված գաղութներ: Ինչպես ախտաբանական նյութից, այնպես էլ մաքուր աճեցվածքներից պատրաստված թուրքները ներկվել են ըստ Գրամի (А.Ф. Кузнецов, 2002, А.С. Лабинская, 2010, Б.Ф. Шыряк, 2001):

Bordetella bronchiseptica հարուցիչը 1,5-2x0,4-0,5 մկմ մեծությամբ, մեկական կամ զույգերով, հազվադեպ շղթաձև դասավորությամբ, անշարժ, գրամ-բացասական, սպոր և պատիճ չառաջացնող օվալաձև մանրէ է: Ունի բարդ հակածնային կազմություն. ներառում է *O* ջերմակայուն, *K* և *H* ջերմասնկայուն հակածինները: *OI* և *KI* հակածիններն ընդհանուր են հարուցիչ բոլոր տարատեսակների համար: Մանրէի ախտածնային հատկությունները պայմանավորված են մաշկը մեռուկացնող արտա- և ներթույների ազդեցությամբ, ինչպես նաև լիպոպոլիսախարիդային համալիրով: *K* հակածինը շնչառական ուղիների լորձաթաղանթների նկատմամբ ցուցաբերում է կաշրդական հատկություն:

Bordetella bronchiseptica հարուցիչը (նկ. 1) հետազոտված նմուշներից միայն 20-ում է հայտնաբերվել (И.А. Бакулов, 1987, В.Г. Владимиров и др., 1999, Д.И. Скороумов и др., 1999):

Բուժման նպատակով կիրառվել են Սուլֆապրիմ 48 ԲՏ պատրաստուկը և *A*, *D* վիտամիններ (ներմկանային), ինչպես նաև կատարվել է խոնկորների քթի խոռոչի լվացում դոքսիցիլինի կախուկով:

Տնտեսությունում իրականացված բուժկանխարգելիչ միջոցառումների արդյունքում սպանդի է ենթարկվել 91 գլուխ կենդանի:

Արդյունքները և վերլուծությունը

2021 թ. Արմավիրի մարզի խոզաբուծական տնտեսությունում իրականացված կլինիկական հետազոտությամբ

հայտնաբերվել են ատրոֆիկ ռինիտին բնորոշ կլինիկական ախտանիշներով կենդանիներ: 2-3 շաբաթական ծծկեր խոճկորների մոտ նկատվել են անհանգստություն, ախորժակի անկում: Հիվանդ խոճկորները փռչում էին, փնչացնում, դուռնը բռնում կերամաններին և պատերին: Որոշ կենդանիների մոտ նաև նկատվել է փորլուծություն: Կղանքը դեղնամոխրավուն էր, առանց նեխային հոտի (В.Г. Гавриш, 2003, П.П. Достоевский и др., 1990, П.П. Достоевский, П.И. Вербицкий, 2004, А.А. Кузнецова и др., 2019):

Բուժման ենթակա մատղաշ կենդանիների մի մասի մոտ քթի խոռոչից հոսում էր շճային, իսկ մյուս մասի մոտ՝ շճաթարախային էքսուդատ, առկա էր արյունահոսություն: Գլխի դիմային մասի միակողմանի ձևախախտման և անկանոն ատամնաստվածքի հետևանքով վերին ծնոտը ծոված էր աջ կամ ձախ: Վերին և ստորին ծնոտների երկարությունների տարբերությունը կազմում էր մոտ 1-3 սմ, անգամ ծնոտների փակված վիճակում որոշ չափով տեսանելի էր լեզուն (սկ. 2): Հիվանդ խոճկորների մեծ մասի մոտ քթի մաշկը դեղին հետին հատվածում ծալքավորված էր, քիթը՝ վեր ցցված (մոպսանման), ինչը հիմնականում քթի խոռոչների երկկողմանի ախտահարման հետևանք է (սկ. 3):

Հարկ է նշել, որ ախտաբանաանատոմիական փոփոխությունների առաջացումը և համապատասխան կլինիկական ախտանիշների դրսևորումը պայմանավորված են հիվանդության հարուցիչ կողմից արտադրվող թույնի՝ դերմոնեկրոտոքսինի ազդեցությամբ:

Միաժամանակ կերի ընդունման ֆունկցիայի խանգարման հետևանքով դանդաղել է խոճկորների աճը և զարգացումը: Միևնույն սեռատարիքային խմբի բուժման մատղաշի կենդանի զանգվածի առավելագույն տարբերությունը կազմել է 25 կգ: 3-5 ամսական մատղաշի 20 %-ի մոտ նկատվել է կոպերի այտուցվածություն, արցունքափոսություն, աչքերի շուրջը, հատկապես ստորին հատվածներում՝ մուգ բծեր (И.И. Лукашов, 1954, В.А. Пиотрович, 2012, П.И. Прилукин, 1970, Р.Ф. Сосов, 1974):

Ըստ համաճարակաբանական հետազոտությունների՝ տնտեսությունում հիվանդության առաջին դեպքերը գրանցվել են Կոտայքի մարզի մասնավոր խոզաբուծական տնտեսություններից մեկից հղի խոզամայրեր ներմու-

ծելուց հետո: Զանի որ խոզերի ատրոֆիկ ռինիտը քրոնիկ ընթացքով, դանդաղ զարգացող հիվանդություն է, ուստի բնորոշ կլինիկական ախտանիշները կենդանիների մոտ ի հայտ են եկել 7-8 ամիս անց:

Տնտեսությունում կարանտինային բաժանմունքի բացակայության պատճառով նոր ներմուծված հղի խոզամայրերն անմիջապես խառնվել են ընդհանուր գլխաբանակին: Լինելով մանրեակիր՝ ներմուծված կենդանիները նպաստել են հիվանդության առաջացմանը և հետագա տարածմանը:


Սպանդի ենթարկված կենդանիների մոտ հիվանդության քրոնիկ ընթացքի հետևանքով առկա են եղել քթի ոսկորների ծովածություն, վերին ծնոտի բարակավուն ոսկորներ, քթի միջնապատի և խեցիների լորձաթաղանթների ախտահարում, որոշ դեպքերում՝ թոքերի կատարային բորբոքումից ընդհուպ մինչև թարախային բորբոքում (սկ. 4) (О.В. Якушева, 1964):

Ատրոֆիկ ռինիտի նկատմամբ անապահով խոզաբուծական տնտեսությունների առողջացումն իրականացվում է երկու հիմնական եղանակով:

Առաջին եղանակի դեպքում անապահով տնտեսության ամբողջ գլխաբանակը ենթարկվում է հարկադիր սպանդի, եթե հիվանդությունը կրում է զանգվածային բնույթ՝ ընդգրկելով գլխաբանակի ավելի քան 50 %-ը: Վարակագրծման միջոցառումներ են իրականացվում ինչպես տնտեսության ներսում, այնպես էլ հարակից տարածքում, որից հետո տնտեսությունը համալրվում է առողջ գլխաբանակով:

Երկրորդ եղանակի դեպքում անապահով տնտեսության խոզերը բաժանվում են երեք խմբի: Առաջին խմբում ներառվում են ակնհայտ կլինիկական ախտանիշներով հիվանդ կենդանիները, այդ թվում՝ վարակակիր խոզամայրերն իրենց խոճկորներով: Կյո կենդանիները մեկուսացվում են ընդհանուր գլխաբանակից և ենթարկվում սպանդի կամ բուժվում են՝ հետագայում սպանդի հանձնելու նպատակով:

Երկրորդ խմբում ընդգրկված պայմանական առողջ կենդանիները հիվանդության վաղ ախտորոշման նպատակով 5-6 օր ընդմիջումով ենթարկվում են կլինիկական զննման, հատկապես ուշադրություն է դարձվում ծնոտների զարգացմանը: Հիվանդները մեկուսացվում են, ենթարկվում սպանդի կամ բուժվում:




Նկ. 1. Մանրաբանական հետազոտությամբ հայտնաբերված *Bordetella bronchiseptica* հարուցիչը:



Նկ. 2. Գլխի դիմային մասի միակողմանի ձևախախտումով խոճկոր:



Նկ. 3. Վեր ցցված (մոպսանման) քթով խոճկոր:



Նկ. 4. Հիվանդության քրոնիկ ընթացքի հետևանքով ախտահարված թոքեր:

երրորդ խմբում ներառվում են առողջ կենդանիները, որոնց վարակումից պաշտպանելու համար անցկացվում են համապատասխան միջոցառումներ:

Տնտեսությունը համարվում է առողջացած, եթե մեկ տարվա ընթացքում իրականացված եռակի մանրէաբանական հետազոտության արդյունքները բացասական են, չեն հայտնաբերվել հիվանդության դեպքեր, և խոզամայրերից երկու ծնի ընթացքում ստացվել են առողջ խոնկորներ (Ս.Լ. Գրիգորյան, 2002, А.А. Кузнецова и др., 2019, П.И. Притулин, 1970, Р.Ф. Сосов, 1974):

Տնտեսության առողջացումը մեր կողմից իրականացվել է երկրորդ եղանակով:

Բնորոշ կլինիկական ախտանիշներով հիվանդ կենդանիները մեկուսացվել են և ենթարկվել սպանդի: Խոզամայրերն իրենց ծծկեր խոնկորներով առանձնացվել են, իսկ մյուս սեռատարիքային խմբի կենդանիները մեկուսացվել են և հետագայում սպանդի հանձնելու նպատակով բուժվել: Հաշվի առնելով, որ հիվանդության հարուցիչը գրամ-բացասական է, կիրառվել է Սուլֆապրիմ 48 ԲՏ պատրաստուկը՝ օրը երկու անգամ, 12 ժամ ընդմիջումով, կերի հետ խառնած վիճակում՝ 0,04 գ/կգ կենդանի զանգվածի հաշվով: Բուժման տևողությունը կազմել է հինգ օր: Խոնկորներին երկու օրը մեկ անգամ ներարկվել են *A* և *D* վիտամիններ՝ ներմկանային, 100 ԱՄ/կգ զանգվածի հաշվով: Բացի այդ՝ խոնկորների բթի խոռոչը լվացվել է դոքսիցիկլինի կախուկով (1 գ դոքսիցիկլինը խառնվել է 30-35 գ 20 %-անոց գլիցերինի ջրային լուծույթին):

Տնտեսության ողջ գլխաբանակը տեղափոխվել է ամառային ճամբարային պահվածքի: Անասնաշենքում կատարվել են մեխանիկական մաքրման, 2 %-անոց կծու նատրիումի լուծույթով ախտահանության, ինչպես նաև կրծողների ոչնչացման (դերատիգացիա) և միջատազերծման (դեզինսեկցիա) աշխատանքներ:

Եզրակացություն

Համաճարակաբանական, կլինիկական, ախտաբանաանատոմիական և լաբորատոր հետազոտությունների համաձայն՝ խոզերի ատրոֆիկ ռինիտը ներկայումս տարածված է Հայաստանի որոշ խոզաբուծական տնտեսություններում: Հիվանդության առաջացմանը նպաստել են տնտեսությունների սանիտարական վատ պայմանները, կենդանիների ոչ լիարժեք կերակրումը, խիտ պահվածքը, տեղափոխումների հետևանքով առաջացած սթրեսները, կերատեսակներում հանքային նյութերի՝ առաջին հերթին կրածին և ֆոսֆորական աղերի, *A* և *D* վիտամինների անբավարար քանակությունը և այլ գործոններ:

Հիվանդության նկատմամբ ընկալունակ են բոլոր սեռատարիքային խմբերի կենդանիները, սակայն առավել հաճախ հիվանդանում է մատղաշը: Լիատարիք կենդանիները հիմնականում մանրէակիր են:

Հայաստանում հիվանդության տարածմանը նպաստել են

խոզաբուծական տնտեսությունների միջև տնտեսական կապերը, փոխադրամիջոցների ընդհանուր օգտագործումը, հիվանդության նկատմամբ անապահով տնտեսություններից հիվանդ, հիվանդության զաղտնի շրջանում գտնվող, ինչպես նաև մանրէակիր կենդանիների ներմուծումը, նոր ներմուծված կենդանիների համար կարանտինային բաժանմունքի բացակայությունը, տնտեսությունում կենդանիների ոչ ճիշտ վերախմբավորումը և այլն:

Անապահով խոզաբուծական տնտեսությունների առողջացումը, ինչպես նաև հարուցիչ հետագա տարածումը կանխող միջոցառումները իրականացվել են հիվանդության կանխարգելման և պայքարի միջոցառումների հրահանգի համաձայն (В.П. Шишков, 2020): Բուժման նպատակով կիրառվել է Սուլֆապրիմ 48-ԲՏ պատրաստուկը: Խոնկորների բթի խոռոչը լվացումը կատարվել է դոքսիցիկլինի կախուկով:

Գրականություն

1. Գրիգորյան Ս.Լ. Գյուղատնտեսական կենդանիների համաճարակաբանություն և ինֆեկցիոն հիվանդություններ. - Եր.: Աստղիկ, 2002. - 641 էջ:
2. Алтухов Н.Н. Краткий справочник ветеринарного врача. - М.: Агропромиздат, 1990. - 574 с.
3. Бакулов И.А. Эпизоотология с микробиологией. - М.: Агропромиздат, 1987. - 247 с.
4. Бессарабов Б.Ф. и др. Инфекционные болезни животных / Под ред. А.А. Сидорчука. - М.: Колос, 2007. - 671 с.
5. Владимиров В.Г. и др. Медицинские лабораторные технологии. - Т. 2. - СПб.: Интермедика, 1999. - 285 с.
6. Гавриш В.Г. Справочник ветеринарного врача. - 4 изд. - Ростов-на-Дону: Феникс, 2003. - 576 с.
7. Достоевский П.П. и др. Справочник ветеринарного врача. - К.: Урожай, 1990. - 784 с.
8. Кузнецова А.А. и др. Атрофический ринит в свиноводстве / А.А. Кузнецова, В.В. Яценюк, Т.И. Лоренгель. - Текст: непосредственный // Молодой ученый. - 2019. - N 5 (243). - 80 с.
9. Кузнецов А.Ф. Справочник ветеринарного врача. - М.: Лань, 2002. - С. 896.
10. Лабинская А.С. Микробиология с техникой микробиологических исследований. - М.: Медицина. 2010. - 479 с.
11. Лукашов И.И. Эпизоотология и клиника инфекционного атрофического ринита у поросят // Ветеринария. - 1954. - N 4. - С. 32.
12. Пиотрович В.А. Инфекционный атрофический ринит свиней // Прибыльное свиноводство. - 2012. - N 4 (10). - С. 28-30.

13. Притулин П.И. Инфекционный атрофический ринит, в кн.: Болезни свиней (сост. Ф.М. Орлов). - 3 изд. - М., 1970. - 207 с.
14. Сосов Р.Ф. Инфекционный атрофический ринит, в кн.: Эпизоотология. - 2 изд. - М., 1974. - 120 с.
15. Скородумов Д.И. и др. Микробиологическая диагностика бактериальных болезней животных. - М.: Изограф, 1999. - С. 23.
16. Шишков В.П. Основы ветеринарного законодательства. - Т. 4. - Болезни свиней. - Ставрополь, 2020. - 312 с.
17. Шуляк Б.ф. Грамотрицательные бактерии. - М.: Олита, 2001. - 45 с.
18. Якушева О.В. Патологоанатомические изменения при инфекционном атрофическом рините у естественно больных и экспериментально зараженных поросят: автореф. дисс. канд. вет. наук. - М., 1964. - 39 с.
19. Достоевский П.П., Вербицкий П.И. Довідник лікаря ветеринарної медицини. - К.: Урожай, 2004. - 1280 с.

Распространенность инфекционного атрофического ринита свиней в некоторых регионах РА и меры борьбы с ним

А.Р. Акопян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: *инфекционный атрофический ринит, атрофия носовых раковин, деформация костей лицевой части черепа, свиноводческое хозяйство, Bordetella bronchiseptica, дермoneкротоксин*

Аннотация. Атрофический ринит свиней в настоящее время широко распространен в некоторых свиноводческих хозяйствах Армавирской и Котайкской областей РА. Согласно исследованиям, к заболеванию восприимчивы свиньи всех пород и половозрастных групп, но типичные клинические симптомы проявляются у подсвинков на 3-5-месячном откорме.

Распространению болезни в Армении способствуют экономические связи между свиноводческими фермами. Оздоровление неблагополучных свиноводческих хозяйств, а также мероприятия по предотвращению дальнейшего распространения возбудителя заболевания проводились согласно директиве о мерах профилактики и борьбы с болезнями. Для лечения использовали препарат "Сульфатрим 48-БТ".

Prevalence of Swine Atrophic Rhinitis in Some Regions of Armenia and its Control Measures

A.R. Hakobyan

Armenian National Agrarian University

Keywords: *infectious atrophic rhinitis, turbinate atrophy, deformation in the bones of skull facial part, pig breeding, Bordetella bronchiseptica, dermonecrotxin*

Abstract. Currently, the atrophic rhinitis of pigs is registered in some pig breeding farms of the Armavir and Kotayk regions. According to investigations swines of all breed and sex-age groups are susceptible to the disease but the inherent symptoms are manifested in the 3-5-month-old fattened gilts.

In Armenia the spread of the mentioned disease is promoted by the disposing factors and economic relationships between pig breeding farms. Rehabilitation of insecure pig breeding farms, as well as measures to prevent the further spread of the pathogen, were carried out in accordance with the directive on measures for the prevention and control of diseases. Sulfaprim 48-BT preparation was used for treatment.

*Ընդունվել է՝ 24.06.2022 թ.
Գրախոսվել է՝ 03.08.2022 թ.*



ՀՏԴ 636.7:616

ՇՆԵՐԻ ՆԵՖՐԻՏԻ ԲՈՒԺՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

Կ.Ա. Սուքիասյան *ա.գ.թ.*, Ա.Յու. Աբովյան *ա.գ.թ.*, Է.Ա. Նիկողոսյան *ա.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ի.Վ. Խաչատրյան

ՀԱԱՀ անասնաբուժական կլինիկա

karinesukiasyan58@gmail.com, arevabovyan@yahoo.com, erik-nik69@yandex.ru, ida-1997@mail.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

նեֆրիտ,
ուրեմիա,
երիկամային
անբավարարություն,
երիկամային այտուցներ,
ցիպրինոլ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հետազոտություններն իրականացվել են շների նեֆրիտի բուժման արդյունավետ եղանակ մշակելու նպատակով: Կլինիկական, արյունաբանական և արյան կենսաքիմիական ցուցանիշների, մեզի հետազոտման արդյունքների հիման վրա ախտորոշում կատարելուց հետո բուժումը կազմակերպվել է ըստ համապատասխան սխեմաների: Ցիպրինոլ 500, ֆուրոսեմիդ, գալափիտ, տավեգիլ դեղամիջոցների համակցված կիրառումը հակամանրեական, միզամուղ, իմունախթանիչ, հակահիստամինային ազդեցությամբ ապահովել է շների նեֆրիտի բուժման բարձր արդյունավետություն:

Նախաբան

Ըստ գիտականների՝ կենդանիների մոտ զարգացող երիկամային հիվանդությունները կազմում են ներքին ոչ վարակիչ հիվանդությունների 7-30 %-ը: Շների երիկամային հիվանդությունները լայնորեն տարածված են Հայաստանում: Ընդ որում՝ առավել տարածված է շների նեֆրիտը, որն ուղեկցվում է երիկամների մալպիգյան կծիկների և պարենխիմայի բորբոքումով (Ե.Մ. Անոխին, 1987, Է.Գ. Гликина, 2008., G.F. Grauer, 2005): Հիվանդանում են հիմնականում շարպեյ և կոկեր սպանիել ցեղատեսակի տարիքով մեծ շները: Հիվանդությունն արտահայտվում է կենդանիների ախորժակի անկումով, ընկճվածությամբ, երիկամային այտուցներով և ցավազգացությամբ, գոտկային հատվածը շոշափելու կամ բախելու ժամանակ առաջացող անհանգստությամբ, սրտանոթային, երիկամային և շնչառական անբավարարությամբ, տարբեր օրգան-համակարգերում կանգային երևույթներով, ուրեմիայով, սակավամիզությամբ (օլիգուրիա), մարմնի ջերմաստիճանի

բարձրացումով, մեզի տեսակարար կշռի փոփոխությամբ, դրանում սպիտակուցի, էրիթրոցիտների, լեյկոցիտների, արյան մանրէների առկայությամբ, հիպոպրոտեինեմիայի, ազոտեմիայի, թունավորման նշաններով, աղաքրային և նյութափոխանակության խանգարումներով, նույնիսկ հանգեցնում է կենդանիների անկման (Գ.Գ. Щербаков и др., 2009, Н.В. Данилевская, 2000, Г.Г. Щербаков, С.В. Старченков, 1996, X.Г. Ниманд, П.Ф. Сутер, 2001):

Նեֆրիտի առաջացման հիմնական պատճառները վարակիչ (գիշատիչների ժանտախտ, շների վիրուսային հեպատիտ, պարավիրուսային էնտերիտ, լեպտոսպիրոզ, կոլիբակտերիոզ և այլն) և մակաբուծային (վիսցերալ լեյշմանիոզ) հիվանդությունների բարդացումներն են, ինչպես նաև թունավորումները, մրսածությունն ու երիկամային վնասվածքները: Մի շարք գիտնականների կարծիքով նեֆրիտը զարգանում է ինչպես հիվանդությունների հարուցիչների և դրանց արտադրած թույների, այնպես էլ կենդանիների օրգանիզմում առաջացած ալերգիկ ռեակցիայի

հետևանքով (А.В. Санин и др., 2007, А.Д. Белов и др., 1990, А.В. Лебедев и др., 2000, С.С. Липницкий, 1996, А.Н. Елисеев, 1998, J.A. Whitworth, J.R. Lawrence, 2000):

Շների նեֆրիտի բուժման և կանխարգելման նպատակով իրականացվել են բազմաթիվ աշխատանքներ, մշակվել բուժման մի շարք եղանակներ: Հարկ է նշել, որ այսօր էլ այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են. մշակվում են նորագույն, առավել արդյունավետ եղանակներ:

Նյութը և մեթոդները

Հետազոտություններն իրականացվել են 2021-2022 թվականներին: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի թերապիայի, վիրաբուժության և ծննդագիտության ամբիոնի լաբորատորիայում, ինչպես նաև անասնաբուժական կլինիկայում հետազոտվել է նեֆրիտով հիվանդ տարբեր ցեղատեսակների և սեռի 3-4 տարեկան 10 շուն (միջինը՝ 3-10 կգ): Կենդանիներն ընտրվել են համանմանության սկզբունքով, խմբերը կազմվել են ըստ տարիքային և սեռային առանձնահատկությունների: Ախտորոշումը կատարվել է անամնեստիկ տվյալների, հիվանդությանը բնորոշ ախտանիշների, կլինիկական, արյունաբանական և արյան կենսաքիմիական ցուցանիշների, մեզի հետազոտման արդյունքների հիման վրա:

Արյան ձևաբանական հետազոտությունների համար արյունառումը կատարվել է ճաճանչային երակից: Որոշվել են էրիթրոցիտների, լեյկոցիտների, հեմոգլոբինի քանակությունը, ԷՆԱ-ն (էրիթրոցիտների ռատեցման արագություն) և լեյկոբանաձևը: Էրիթրոցիտների և լեյկոցիտների քանակությունը հաշվարկվել է Գոյանսի ցանցի, հեմոգլոբինինը՝ Սալիի հեմոգլոբինամետրի միջոցով, ԷՆԱ-ն որոշվել է ըստ Պանչենկովի, իսկ լեյկոբանաձևը՝ Շիլնիգի եղանակով:

Շները ենթարկվել են ամնեսոյա կլինիկական հետազոտությունների, ուսումնասիրվել է հիվանդության զարգացման դինամիկան, գնահատվել է կենդանիների ընդհանուր վիճակը, որոշվել են մարմնի ջերմաստիճանը, անոթազարկը և շնչառության հաճախականությունը:

Արյան մեջ սպիտակուցի պարունակությունը որոշվել է ռեֆրակտոմետրիկ եղանակով, շիճուկի սպիտակուցային ֆրակցիաները՝ էլեկտրաֆորեզի միջոցով, մնացորդային ազոտի քանակությունը՝ հիպոբրոմիտային եղանակով, միզանյութինը՝ Նեալերի ռեակցիայի միջոցով, մեզում սպիտակուցի պարունակությունը՝ կոլորիմետրիկ եղանակով: Կատարվել է նաև մեզի ֆիզիկաքիմիական և մանրադիտակային հետազոտություն: Հիվանդ կենդանիները ենթարկվել են երիկամների ուլտրաձայնային հետազոտության:

Հետազոտական աշխատանքների սկզբում ելակետային ցուցանիշների որոշման համանմանության սկզբունքով առանձնացվել է նեֆրիտով հիվանդ տարբեր ցեղատեսակների ու սեռի 3-4 տարեկան 10 շուն և բաժանվել երկու խմբի:

Առաջին՝ ստուգիչ խումբը բուժվել է ավանդական եղանա-

կով. հակամանրեական լայն ազդեցությամբ դեղամիջոց է նշանակվել ամպիոքս-նատրիում պատրաստուկը (օրական երկու անգամ, 0,5-ական գրամ, ներմկանային), իսկ որպես միզամուղ՝ հիպոտիազիդ (օրական մեկ անգամ, 25 մգ հաբ):

Երկրորդ՝ փորձնական խումբը բուժվել է մեր կողմից մշակված եղանակով. որպես հակամանրեական լայն ազդեցությամբ դեղամիջոց՝ կիրառվել է ցիպրինոլ 500 (5-15 մգ/կգ, օրական մեկ անգամ, ներերակային՝ կաթիլային եղանակով ներմուծվել է դանդաղ), որպես միզամուղ՝ 5 %-անոց ֆուրոսեմիդ (0,5-1 մլ/10 կգ, օրական մեկ անգամ, ներմկանային), որպես իմունախթանիչ՝ գալալիտ (2-5 մգ/կգ, օրական երկու անգամ, ներմկանային), որպես հակահիստամինային պատրաստուկ՝ տավեգիլի 1 %-անոց լուծույթ (0,02 մգ/կգ, օրական մեկ անգամ, ներերակային):

Մեզում առկա միկրոօրգանիզմների մանրէաբանական կազմը որոշելու նպատակով նմուշառված մեզից 0,1 մլ միկրոօրգանիզմների միջոցով ներմուծվել է սննդային միջավայր (արյունային ագար) պարունակող Պետրիի թասիկների մեջ:

Նախքան ցանքսը նմուշները լավ միախառնվել են: Խառնուրդը սննդային միջավայրի վրա տարածվել է ուղղահայաց և հորիզոնական ուղղություններով: Այնուհետև սննդային միջավայրերով Պետրիի թասիկները տեղադրվել են թերմոստատում, 37 °C պայմաններում, իսկ 24 ժամ անց՝ սև թղթի վրա՝ շրջելով կափարիչով ներքև: Կատարվել են առաջացած գաղութների ուսումնասիրություն և հաշվարկ: Կլոր հարթ եզրերով, փաված, լորձային սպիտակ գաղութներից պատրաստված և Գրամի եղանակով ներկված մանրէաբանական բույներում հայտնաբերվել են մանուշակագույն դիպլո- և ստրեպտոկոկեր, իսկ թափանցիկ, մանր ցողի կաթիլներ հիշեցնող գաղութներից պատրաստված բույներում երկբևեռ, կոկանման կարմիր ցուպիկներ: Միաժամանակ հայտնաբերվել են *E. Coli*, *Enterobacter spp.*, *Klebsiella spp.*, *P. aeruginosa*, *P. vulgaris*, *S. Aureus*, նկատվել է պաստերելաների, սալմոնելաների գաղութների աճ:

Հակաբիոտիկների նկատմամբ մանրէների զգայունությունը որոշելու նպատակով մանրէազերծ սննդային միջավայրի մակերեսին՝ Պետրիի թասիկի տարբեր կողմերում տեղադրվել են հակաբիոտիկներ (գենտամիցին, ամպիցիլին, ամոքսիցիլին, ցեֆտրիաքսոն, ցիպրինոլ, նորֆլոքսացին) պարունակող թղթե սկավառակներ: Մանրէազերծ մածկաթիակի միջոցով նոսրացված նմուշը սննդային միջավայրի մակերեսին տարածելու միջոցով կատարվել է ցանքս: Այնուհետև սննդային միջավայրը տեղադրվել է թերմոստատում և 24 ժամ պահվել 37 °C պայմաններում: Հակաբիոտիկների նկատմամբ զգայունության աստիճանը որոշվել է սկավառակների շուրջը գոյացած մանրէական աճի կասեցման գոտու մակերեսի չափերով (սմ): Որքան մեծ է կասեցման գոտին, այնքան զգայուն են տվյալ մանրէական տեսակները: Փորձարկված դեղամիջոցներից ցեֆտրիաքսոնը գոյացրել է 0,8 սմ, իսկ ցիպրինոլը՝ 1,8 սմ մանրէական աճի կասեցման գոտի: Մյուս հակաբիոտիկների դեպքում գոյացել է մանրէական աճի կասեցման աննշան գոտի: Դեղորայքային բարձր ազդեցության շնորհիվ ցիպրինոլն ընտրվել

Է որպես առավել արդյունավետ հակամանրէական պատրաստուկ:

Ցիպրինոլ պատրաստուկը պատկանում է հակաբիոտիկների ֆտորիսինոլոնային խմբին, 1 մլ ինֆուզիոն լուծույթ է, ակտիվ նյութը՝ 2 մգ ցիպրոֆլոքսացին, օժանդակ նյութերը՝ Նատրիումի լակտատ, Նատրիումի քլորիդ, աղաթթու, ներարկման ջուր:

Դեղաբանական ազդեցությունը: Ցիպրոֆլոքսացինի նկատմամբ զգայուն են՝

- գրամբացասական բակտերիաները (*Haemophilus spp.*, *Pseudomonas aeruginosa*, *Moraxella catarrhalis*, *Aeromonas spp.*, *Pasteurella multocida*, *Plesiomonas shigelloides*, *Campylobacter jejuni*, *Neisseria spp.*),
- գրամբացասական աերոբ բակտերիաները, Էստերոբակտերիաները (*Escherichia coli*, *Salmonella spp.*, *Shigella spp.*, *Citrobacter spp.*, *Klebsiella spp.*, *Enterobacter spp.*, *Proteus mirabilis*, *Proteus vulgaris*, *Serratia marcescens*, *Hafnia alvei*, *Edwardsiella tarda*, *Providencia spp.*, *Morganella morganii*, *Vibrio spp.*, *Yersinia spp.*),
- գրամդրական միկրոօրգանիզմները (*Staphylococcus spp.* (*S. aureus*, *S. haemolyticus*, *S. hominis*, *S. saprophyticus*), *Streptococcus spp.* (*St. pyogenes*, *St. agalactiae*),
- որոշ ներքջային հարուցիչներ (*Legionella pneumophila*, *Brucella spp.*, *Chlamydia trachomatis*, *Listeria monocytogenes*, *Mycobacterium tuberculosis*, *Mycobacterium kansasii*, *Mycobacterium avium-intracellulare*):

Ցուցումներ.

- շնչառական ուղիների ինֆեկցիաներ՝ թոքաբորբ, սուր բրոնխիտ և բրոնխ բրոնխիտի սրացում,
- ականջի, կոկորդի և քթի ինֆեկցիաներ,
- երիկամների և միզուղիների ինֆեկցիաներ՝ ստորին, վերին միզուղիների ոչ բարդ և բարդ վարակներ (ուրետրիտ, ցիստիտ, Նեֆրիտ, պիելոնեֆրիտ),
- կոնքի և սեռական օրգանների ինֆեկցիաներ՝ էպիդիդիմիտ, պրոստատիտ, սալպինգիտ, Էնդոմետրիտ,
- որովայնի օրգանների ինֆեկցիաներ՝ թարախակույտ, խուլեցիստիտ, խուլանգիտ,
- մաշկի և փափուկ հյուսվածքների ինֆեկցիաներ՝ վարակված խոցեր, վերքեր և այրվածքներ, թարախակույտեր, ֆլեգմոններ, արտաքին լսողական անցքի վարակներ,
- հենաշարժական ապարատի ինֆեկցիաներ՝ օստեոմիելիտ, սեպտիկ արթրիտ:

Արդյունքները և վերլուծությունը

Ուսումնասիրությունների ընթացքում Նեֆրիտով հիվանդ շների ախտորոշումը, լաբորատոր կլինիկական հետազոտությունները, բուժումը և խնամքը (կուրացիա) կատարվել են կլինիկայի պայմաններում:

Հիվանդ կենդանիները կլինիկա են բերվել հիվանդության զարգացման տարբեր ժամանակահատվածներում: Կլի-

նիկական զննման ժամանակ հիմնականում գրանցվել է ենթաշերմային տենդ, տախիկարդիա, առիթմիա, ծանր և մակերեսային շնչառություն, տեսանելի լորձաթաղանթների գունատություն, օլիգուրիա, ցավազգաց և դժվար միզարտազատում: Պառկած կամ կանգնած վիճակում շների մեջքը եղել է կորացած, գոտկային հատվածի խորը շոշափումն ուղեկցվել է խիստ ցավազգացությամբ և անհանգստությամբ (Պաստերնացկու դրական ախտանիշ): Կուպերի, ազդրերի, որովայնի ստորին պատի հատվածներում նկատվել են այտուցներ: Գրեթե բոլոր դեպքերում շների մոտ բացակայում էր ախորժակը, առկա էր անհագ ծարավ, փսխում, փորլուծություն, ընկճվածություն, հյուծվածություն, մեզը կարմիր էր և պղտոր: Ըստ անամնեստիկ տվյալների՝ հիմնականում հետազոտված բոլոր կենդանիները պատվաստված էին, մեծ մասը ժամանակին ենթարկվել էր պլանային ճիճվաթափության:

Հիվանդության ախտորոշումից հետո շների բուժումը կազմակերպվել է համապատասխան սխեմաներով: Նեֆրիտով հիվանդ և բուժման ընթացքում գտնվող կենդանիների կլինիկական, արյունաբանական, արյան կենսաքիմիական և մեզի հետազոտությունների արդյունքները ներկայացված են աղյուսակներ 1-5-ում:

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ Նեֆրիտով հիվանդ շների կլինիկական ցուցանիշները զգալի փոփոխությունների են ենթարկվել: Բոլոր կենդանիների մոտ հիվանդության սկզբում գրանցվել էր մարմնի ջերմաստիճանի բարձրացում, անոթազարկի արագացում, առիթմիա, ծանր շնչառություն, շնչառություն: Իսկ բուժման ընթացքում նշված ցուցանիշները կարգավորվել են: Այսպես, եթե մինչև բուժումը մարմնի ջերմաստիճանը 40 °C էր, անոթազարկը՝ 120 զարկ/րոպե, շնչառությունը՝ 26 շնչ. շարժում/րոպե, ապա ավանդական եղանակով բուժման 7-րդ օրն այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 39,9 °C,

100 զարկ/րոպե, 22 շնչ. շարժում/րոպե, իսկ մեր կողմից առաջարկվող եղանակով բուժման 7-րդ օրը՝ 38,8 °C, 90 զարկ/րոպե, շնչառությունը՝ 18 շնչ. շարժում/րոպե:

Ուշագրավ է, որ առաջարկվող դեղամիջոցների համադրությամբ բուժված շների կլինիկական նշանների բարելավում է գրանցվել բուժման 2-րդ օրվանից սկսած: Երկրորդ խմբի կենդանիները բուժման 4-5-րդ օրերին բավական ակտիվ էին, շարժվում էին առանց դժվարության, ունեին լավ ախորժակ, աշխույժ էին, փսխումը, փորլուծը և գոտկային հատվածի ցավազգացությունը դադարել էին, կուպերի, որովայնի, ենթածնոտային հատվածներում այտուցները վերացել էին, միզարտազատումը կարգավորվել էր, մեզը դեղնավուն էր, թափանցիկ, սրտի աշխատանքը և շնչառությունը բնականոն էին: Մինչդեռ ավանդական եղանակով բուժվող շների մոտ հիվանդության որոշ նշաններ դեռ պահպանվել էին: Մասնավորապես ախորժակը գրեթե բացակայում էր, գոտկային հատվածում առկա էր թույլ ցավազգացություն, կուպերի, ենթածնոտային, որովայնի ստորին պատի հատվածներում այտուցները փոքրացել էին, բայց դեռ պահպանվում էին:

Աղյուսակ 1. Նեֆրիտով հիվանդ շների կլինիկական ցուցանիշները բուժման ընթացքում*

Ցուցանիշներ	Նորմա	Միջև բուժումը	1-ին խումբ				2-րդ խումբ			
			2-րդ օր	4-րդ օր	6-րդ օր	8-րդ օր	2-րդ օր	4-րդ օր	6-րդ օր	8-րդ օր
Մարմնի ջերմաստիճան, °C	38,5-39	41,0±3,25	40,9±2,15	40,5±2,19	39,9±1,46	39,6±1,14	39,9±3,28	39,6±2,25	39,0±1,45	38,8±1,14
Անոթազարկ, ցարկ/րոպե	90-110	140±3,42	130±3,14	125±2,25	119±1,81	100±1,52	110±3,44	100±2,56	100±2,54	90±2,12
Շնչառություն, շնչ. շարժում/ րոպե	16-18	45±4,25	40±4,11	35±4,24	29±4,18	25±4,17	35±3,18	28±3,05	20±3,02	17±2,52

Աղյուսակ 2. Շների արյունաբանական ցուցանիշները բուժումից առաջ և բուժման ընթացքում*

Ցուցանիշներ	Նորմա	Միջև բուժումը	Բուժման ընթացքում							
			1-ին խումբ				2-րդ խումբ			
			1-ին օր	3-րդ օր	5-րդ օր	7-րդ օր	1-ին օր	3-րդ օր	5-րդ օր	7-րդ օր
Էրիթրոցիտներ ·10 ¹² /լ	5,5-8,5	4,9±0,40	5,2±0,38	5,8±0,34	6,3±0,32	6,8±0,31	5,9±0,34	6,6±0,30	7,8±0,29	9,0±0,25
Հեմոգլոբին, գ/լ	120-180	62±0,45	63±0,35	64±0,32	64±0,30	65±0,29	70±0,33	72±0,25	81±0,19	9,1±0,11
ԷՆԱ, մմ/ժ	0-13	40±0,29	32±0,20	25±0,15	10±0,11	8±0,10	37±0,25	25±0,23	8±0,14	7±0,11
Լեյկոցիտներ ·10 ⁹ /լ	6-17	17,2±0,55	16,1±0,53	14,7±0,41	13,5±0,40	11,7±0,42	14,8±0,40	11,7±0,39	8,9±0,25	6,4±0,29

Աղյուսակ 3. Շների լեյկոբանաձևը բուժումից առաջ և բուժման ընթացքում*

Ցուցանիշներ	Նորմա	Միջև բուժումը	Բուժման ընթացքում							
			1-ին խումբ				2-րդ խումբ			
			1-ին օր	3-րդ օր	5-րդ օր	7-րդ օր	1-ին օր	3-րդ օր	5-րդ օր	7-րդ օր
Նեյտրոֆիլներ, %	60-77	80±0,24	79±0,15	78±0,16	64±0,61	64±0,13	77±0,26	74±0,15	69±0,15	66±0,13
Լիմֆոցիտներ, %	12-30	27±0,12	20±0,14	16±0,13	47±0,13	44±0,10	22±0,17	28±0,15	31±0,14	34±0,13
Մոնոցիտներ, %	3-10	1±0,21	1±0,24	1±0,19	2±0,11	6±0,12	1±0,14	3±0,16	2±0,13	2±0,14
Էոզիլոֆիլներ, %	2-10	7±0,15	6±0,13	4±0,14	4±0,11	3±0,12	4±0,11	2±0,10	1±0,11	1±0,12
Բազոֆիլներ, %	0-2	10±0,36	7±0,25	4±0,19	3±0,14	8±0,11	5±0,26	3±0,25	1±0,15	1±0,15

*Կազմվել են հեղինակների կողմից:

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալների համաձայն՝ Նեֆրիտն ընթանում է սակավարյունությամբ, հիվանդ շների մոտ նվազել է Էրիթրոցիտների, հեմոգլոբինի, ավելացել՝ Լեյկոցիտների քանակությունը, Էրիկամների բորբոքումով պայմանավորված՝ բարձրացել է ԷՆԱ-ն, նկատվում է Լեյկոցիտոզ:

Առաջարկվող դեղամիջոցների համադրությամբ բուժվող կենդանիների մոտ արյունաբանական ցուցանիշների կարգավորում նկատվել է բուժման 1-ին օրվանից: Բուժման 5-7-րդ օրերին շները ոչ միայն եղել են արդեն կլինիկապես ապաքինված, այլև արյունաբանական ցուցանիշներում նկատվել է Էրիթրոցիտների և հեմոգլոբինի քանակության ավելացում, Լեյկոցիտների քանակության և ԷՆԱ-ի նվազում: Այսպես, եթե միջև բուժումը Էրիթրոցիտների քանակությունը կազմում էր $4,9 \cdot 10^{12}/լ$, հեմոգլոբինին՝ 62 գ/լ, Լեյկոցիտներին՝ $17,2 \cdot 10^9$ գ/լ, ԷՆԱ-ն՝ 10 մմ/ժ, ապա ավանդական եղանակով բուժման 7-րդ օրը համապատաս-

խանաբար գրանցվել են հետևյալ ցուցանիշները՝ $6,8 \cdot 10^{12}/լ$, 65 գ/լ, $11,7 \cdot 10^9$ գ/լ, 5 մմ/ժ, իսկ առաջարկվող եղանակով բուժման 7-րդ օրը՝ $9,0 \cdot 10^{12}/լ$, 9,1 գ/լ, $6,4 \cdot 10^9$ գ/լ, 3 մմ/ժ, ինչը փաստում է, որ բուժման առաջարկվող եղանակն ավելի արդյունավետ է:

Ըստ աղյուսակ 3-ում ամփոփված լեյկոբանաձևի փոփոխությունների՝ երկրորդ խմբի կենդանիներն ապաքինվել են արագ և լիարժեք: Եթե միջև բուժումը Նեյտրոֆիլները կազմում էին 80 %, լիմֆոցիտները՝ 27, մոնոցիտները՝ 1, Էոզիլոֆիլները՝ 7, բազոֆիլները՝ 10 %, ապա ավանդական եղանակով բուժման 7-րդ օրն այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 66, 44, 6, 3, 8 %, իսկ առաջարկվող դեղամիջոցներով բուժման 7-րդ օրը՝ 65, 34, 2, 1, 1 %:

Լեյկոբանաձևում ցուցանիշների բարելավում նկատվել է երկրորդ խմբի կենդանիների բուժման 3-րդ օրվանից: Գրանցվել է մոնոցիտների և Էոզիլոֆիլների քանակության նվազում, Լեյկոպոքիլը կարգավորվել է:

Աղյուսակ 4. Նեֆրիտով հիվանդ շների արյան կենսաքիմիական ցուցանիշները բուժումից առաջ և բուժման ընթացքում*

Ցուցանիշներ	Նորմա	Միջև բուժումը	Բուժման ընթացքում							
			1-ին խումբ				2-րդ խումբ			
			1-ին օր	3-րդ օր	5-րդ օր	7-րդ օր	1-ին օր	3-րդ օր	5-րդ օր	7-րդ օր
Ընդհանուր սպիտակուց, գ/լ	55-75	28,5±0,24	31,1±0,22	33,8±0,23	35,3±0,21	39,3±0,19	34,2±0,24	38,6±0,21	47,8±0,18	48,0±0,19
Ալբումիններ, գ/լ	22-39	14±0,32	16±0,34	18±0,36	22±0,29	25±0,29	22±0,30	28±0,27	35±0,24	39,1±0,25
Միզանյութ, մմոլ/լ	3,5-9,2	23,7±0,43	21,4±0,39	19,2±0,35	15,4±0,36	11,6±0,43	20,7±0,25	13,4±0,23	9,5±0,21	8,0±0,24
Գլյուկոզներ, գ/լ	30-36	58,49±5,54	56±4,41	54±4,11	50±3,32	48±2,99	50±4,47	46±4,32	44±3,29	40±3,27
Կրեատինին, մկմոլ/լ	40-130	205,5±2,58	198±2,40	176±2,42	150,5±2,32	148±2,24	188±2,25	150±2,31	125±2,21	120±2,11
pH	7,31-7,42	15±0,27	13±0,24	12±0,22	10±0,20	9±0,19	10±0,15	8±0,17	7±0,14	7±0,11

Աղյուսակ 5. Նեֆրիտով հիվանդ շների մեզի հետազոտման ցուցանիշները բուժումից առաջ և բուժումից հետո*

Ցուցանիշներ	Նորմա	Միջև բուժումը	Բուժման ընթացքում	
			1-խումբ, բուժման 7-րդ օր	2-խումբ, բուժման 7-րդ օր
Գույնը	Դեղին	Մուգ կարմիր	Կարմրադեղնավուն	Ծղոտագույն
Թափանցիկությունը	Թափանցիկ	Ոչ թափանցիկ	Անշնան թափանցիկ	Թափանցիկ
Խտությունը, մգ/լ	1,015-1,050	1,060	1,040	1,010
Սպիտակուց, մգ/լ	0-30	50	10	5
Էրիթրոցիտներ, հատ	0	30	10	4
Լեյկոցիտներ, հատ	0	25	8	5
Լորձ	Բացակայում է	Չգալիորեն արտահայտված	Թույլ արտահայտված	Բացակայում է
Գլանիկներ, հատ	0	15	9	3
Ուրոբիլինոգեն որակական ռեակցիա	0	0	0	0
Գլյուկոզա, մմոլ/լ	0	0	0	0
Բիլիռուբին, որակական ռեակցիա	0	0	0	0
Երիկամային էպիթելային բջիջներ, հատ	0	15	8	3
Տափակ էպիթելային բջիջներ, հատ	0	0	0	0
Կետոնային մարմիններ, մմոլ/լ	0	0	0	0
pH	5,0-7,0	10	8	5

*Կազմվել են հեղինակների կողմից:

Առաջին խմբում ներառված շների լեյկոբանաձևում մոնոցիտներն ի հայտ են եկել բուժման 6-7-րդ օրը, իսկ միջայր՝ 4-5-րդ օրերին գրանցվել է ակնհայտ նեյտրոպենիա՝ արյան մեջ նեյտրոֆիլների քանակի նվազում և լիմֆոցիտոզ: Հարկ է նշել, որ վերջինս պայմանավորված է զարգացող իմունադեպրեսիվ վիճակով, որը նկատվում է ավանդական եղանակով բուժման 4-5-րդ օրը, զգալիորեն վտանգում է հիվանդ, թույլ օրգանիզմը և նպաստում ինֆեկցիաների զարգացմանը: Նմանատիպ երևույթ առաջարկվող եղանակով բուժման դեպքում չի առաջանում:

Աղյուսակ 4-ում ներկայացված արյան կենսաքիմիական տվյալների համաձայն՝ նեֆրիտով հիվանդ շների արյան մեջ բարձր էր միզանյութի և կրեատինինի պարունակությունը՝ համապատասխանաբար 23,7 և 205,5 մմոլ /լ, pH-ը՝ 15,

գլյուկոզիների քանակությունը՝ 58 գ/լ, ընդհանուր սպիտակուցի և ալբումինների քանակությունը՝ նորմայից ցածր էր՝ համապատասխանաբար 28,5 և 14 գ/լ: Ավանդական եղանակով բուժվող առաջին խմբի կենդանիների արյան կենսաքիմիական ցուցանիշները կարգավորվել են դանդաղ՝ սկսած բուժման 5-րդ օրվանից: Բուժման 7-րդ օրն ընդհանուր սպիտակուցը կազմել է 39,3 գ/լ, ալբումինները՝ 25 գ/լ, միզանյութը՝ 11,6 մմոլ/լ, գլյուկոզները՝ 48 գ/լ, կրեատինինը՝ 148 մկմոլ/լ, pH-ը՝ 9: Առաջարկվող եղանակով բուժվող երկրորդ խմբի կենդանիների արյան կենսաքիմիական ցուցանիշները կարգավորվել են բուժման 3-րդ օրվանից և 5-րդ օրը գրեթե համապատասխանել են նորմային: Բուժման ավարտին ընդհանուր սպիտակուցը կազմել է 48,0 գ/լ, ալբումինները՝ 39,1 գ/լ, միզանյութը՝ 8,0 մմոլ/լ, գլյուկոզները՝ 40 գ/լ, կրեատինինը՝ 120 մկմոլ/լ, pH-ը՝ 7:

Ըստ աղյուսակ 5-ի՝ նեֆրիտով հիվանդ շների մեզը մուգ կարմիր է, ոչ թափանցիկ, բարձր խտությամբ՝ 1,060, պարունակում է մինչև 50 մգ/լ սպիտակուց, երիկամային էպիթելային բջիջներ՝ 15, գլանիկներ՝ 15, էրիթրոցիտներ՝ 30, pH-ը բարձր է՝ 10:

Ավանդական եղանակով բուժման ավարտին պահպանվել են կենդանիների մեզի կարմրադեղնավուն գույնը, կիսաթափանցիկությունը, խտությունը նորմայի սահմանում չէ՝ 1,040, սպիտակուցը կազմել է 10 մգ/լ, էրիթրոցիտները՝ 10, երիկամային էպիթելային բջիջները՝ 8, գլանիկները՝ 8, pH-ը նորմայից բարձր է՝ 8: Առաջարկվող եղանակով բուժման ավարտին մեզը ծղոտագույն էր, ամբողջովին թափանցիկ, խտությունը նորմայի սահմանում էր՝ 1,010, սպիտակուցը կազմել է 5 մգ/լ, pH-ը՝ 5, նկատվել են եզակի էրիթրոցիտներ՝ 4, գլանիկներ՝ 3, երիկամային էպիթելային բջիջներ՝ 3:

Եզրակացություն

Այսպիսով՝ շների նեֆրիտը բավականին տարածված հիվանդություն է: Առաջանում է հիմնականում երիկամների վնասվածքների, վարակիչ, մակաբուծային (ինվազիոն) հիվանդությունների, թունավորումների բարդացումների և գերմրսածության հետևանքով: Ըստ կլինիկական, լաբորատոր հետազոտությունների՝ նեֆրիտի ժամանակ արյան մեջ զգալիորեն նվազում է էրիթրոցիտների, հեմոգլոբինի և ալբումինների քանակությունը, նկատվում է լեյկոցիտների, գլոբուլինների քանակության և հեմատոկրիտի աճ, ավելանում է ազոտի և միզանյութի պարունակությունը, բարձրանում է էՆԱ-ն: Մեզի մեջ ավելանում է սպիտակուցի քանակությունը, տեղի է ունենում ֆիզիկական և քիմիական հատկությունների փոփոխություն: Հիվանդությունն ընթանում է կենդանիների ընկճվածությամբ, ախորժակի անկումով, առաջանում են փսխում, փորլուծ, սրտի աշխատանքի և շնչառության խանգարում, երիկամային այտուցներ, գոտկատեղի ցավազգացություն, դժվար և ցավոտ միզարտազատում: Միաժամանակ դժվարանում են կենդանիների շարժումները, բարդ դեպքերում նկատվում է նյարդային համակարգի ախտահարում:

Մեր կողմից առաջարկվող սխեմայով՝ ցիպրինոլ 500-ի, ֆուրոսեմիդի 5 %-անոց լուծույթի, գալավիտ և տավեգիլ պատրաստուկների համակցված կիրառմամբ բուժման արդեն իսկ 3-րդ օրը գրանցվել են ակնհայտ փոփոխություններ՝ ախորժակի, ինքնազգացողության լավացում, փսխման, փորլուծի թուլացում, սրտի և շնչառության արագ կարգավորում: Իսկ 3-րդ օրվանից սկսած՝ վերականգնվել է նորմալ միզարտազատումը, վերացել են երիկամային այտուցները, գոտկային հատվածի ցավազգացությունը, էրիթրոցիտների քանակությունն ավելացել է, լեյկոցիտներինը՝ նվազել, կարգավորվել են հեմոգլոբինի քանակությունը, արյան կենսաքիմիական ցուցանիշները և էՆԱ-ն:

Առաջարկվող դեղամիջոցներն ապահովել են շների

նեֆրիտի բուժման բարձր արդյունավետություն, ինչը պայմանավորված է ցիպրինոլի հակամանրեական ուժեղ ազդեցությամբ, գալավիտ պատրաստուկի իմունախթանիչ, տավեգիլի հակահիստամինային հատկություններով, ինչպես նաև ֆուրոսեմիդի 5 %-անոց լուծույթի միզամուղ (դիուրետիկ) ներգործությամբ:

Հիմք ընդունելով հետազոտությունների արդյունքները՝ առաջարկում ենք.

- շների նեֆրիտը բուժել ժամանակին և լիարժեք,
- կատարել կլինիկական, արյան ձևաբանական և կենսաքիմիական, մեզի բակտերիոլոգիական, ֆիզիկա-քիմիական և մանրադիտակային, երիկամների ուլտրա-ձայնային մանրակրկիտ հետազոտություններ,
- վարակիչ, մակաբուծային հիվանդությունների և թունավորումների բարդացումը կանխարգելել դրանք ժամանակին ախտորոշելով ու բուժելով,
- բարելավել կենդանիների խնամքի և պահվածքի պայմանները, խուսափել ցուրտ եղանակներին դրանց երկարատև դրսում պահելուց, բացառել գերմրսածությունը,
- կիրառել դիետոթերապիա, կերաբաժնից հանել անորակ, ժամկետանց և փչացած կերատեսակները, կերակրել հնարավորինս հանքային նյութեր չպարունակող, դյուրամարս կերատեսակներով, տալ սենյակային ջերմաստիճանի մաքուր ջուր, սահմանափակել ջրի և կերակրի աղի քանակությունը,
- շներին զերծ պահել թունաքիմիկատներից, բույր, պարկելատեղը պահել չոր և մաքուր վիճակում:

Գրականություն

1. Анохин Б.М. Внутренние незаразные болезни сельскохозяйственных животных. - М., 1987. - 415 с.
2. Белов А.Д. и др. Болезни собак. Справочник / А.Д. Белов, Е.П. Данилов, И.И. Дукур и др. - М.: Агропромиздат, 1990. - 368 с.
3. Гликина Е.Г. Болезни собак и их лечение. - М., 2008. - С. 65-66.
4. Данилевская Н.В. Справочник ветеринарного терапевта. - СПб.: Лань, 2000. - 384 с.
5. Елисеев А.Н. Болезни собак. - М.: Росагропромиздат, 1998.
6. Лебедев А.В. и др. Незаразные болезни собак и кошек / А.В. Лебедев, С.В. Старченков, С.Н. Хохрин, Г.Г. Щербаков. - СПб.: ГИОРД, 2000. - 296 с.
7. Липницкий С.С. и др. Справочник по болезням домашних и экзотических животных. - Минск: Ураджай, 1996. - С. 264-269.
8. Ниманд Х.Г., Сутер П.Ф. Болезни собак. - М.: Аквариум, 2001.

9. Санин А.В. и др. Ветеринарный справочник традиционных и нетрадиционных методов лечения собак / А.В. Санин, А.В. Липин, Е.В. Зинченко. - М., 2007. болезни собак и кошек. - СПб.: Агропромиздат, 1996. - 128 с.
10. Щербаков Г.Г. и др. Справочник ветеринарного терапевта: Учебное пособие / Г.Г. Щербаков, Н.В. Данилевская, С.В. Старченков. - СПб-М-К: Лань, 2009. - С. 105.
11. Щербаков Г.Г., Старченков С.В. Незаразные
12. Grauer, G.F. Canine Glomerulonephritis: New Thoughts on Proteinuria and Treatment.
13. Small Anim, J. (2005). Pract. 46, - pp. 467-478.
14. Whitworth, J.A., Lawrence, J.R. (2000). Guide to Nephrology. - M.: Medicine.

Новый метод лечения нефрита у собак

К.А. Сукиасян, А.Ю. Абовян, Э.А. Никогосян

Национальный аграрный университет Армении

И.В. Хачатрян

Ветеринарная клиника НАУА

Ключевые слова: нефрит, уремия, почечная недостаточность, почечные отеки, "Ципринол"

Аннотация. Исследования были проведены с целью разработки эффективного метода лечения нефрита у собак. После постановки диагноза на основании клинических, гематологических и биохимических показателей крови и результатов анализа мочи было проведено лечение по соответствующим схемам. Совместное применение препаратов "Ципринол 500", "Фуросемид", "Галавит", "Тавегил" с противомикробным, мочегонным, иммуностимулирующим, антигистаминным действием обеспечило высокую эффективность при лечении нефрита у собак.

A New Method for the Treatment of Dogs' Nephritis

K.A. Sukiasyan, A.Yu. Abovyan, E.A. Nikoghosyan

Armenian National Agrarian University

I.V. Khachatryan

ANAU Veterinary Clinic

Keywords: nephritis, uremia, renal failure, renal edema, cyprinol

Abstract. The research has been conducted with the aim of developing efficient way for nephritis treatment in dogs. After making diagnosis based on the results of clinical, hematological and blood biochemical indices, as well as those of urine research, the treatment was organized per appropriate patterns. The combined application of cyprinol-500, furosemide, galavit and tavegil with antibacterial, diuretic, immuno-stimulating, antihistamine effect, has ensured high therapeutic efficiency in the treatment of dogs' nephritis.

*Ընդունվել է՝ 30.05.2022 թ.
Գրախոսվել է՝ 21.06.2022 թ.*



ՀՏԴ 619:618.19-002

ԳԱՂՏՆԻ ՄԱՍՏԻՏԻ ԲՈՒԺՈՒՄԸ ԿԱՊՈՒՅՑ ՅՈՂԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Ա.Վ. Վարդանյան *ա.գ.դ.*, Կ.Ա. Սուքիասյան *ա.գ.թ.*, Է.Ա. Նիկողոսյան *ա.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ժ.Ս. Մելքոնյան *կ.գ.թ.*

ՀԱՀ անասնաբուժության և անասնաբուժական-սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոն

albert.vardanyan.52@mail.ru, karinesukiasyan58@gmail.com, erik-nik69@yandex.ru, zhanna.smelkonyan1@gmail.com

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բանալի բառեր՝

գաղտնի մաստիս,
կապույտ յող,
սոմատիկ բջիջներ,
կալիֆորնիական թեստ,
կոլ

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հետազոտություններն իրականացվել են Հայաստանի չորս մարզերում՝ անասնապահական տարբեր տնտեսություններում գաղտնի մաստիսով հիվանդ կովեր հայտնաբերելու և առաջարկվող Նոր եղանակով՝ կապույտ յողի կիրառմամբ բուժելու նպատակով: Գաղտնի մաստիսն ախտորոշվել է կալիֆորնիական թեստի միջոցով: Հետազոտված 127 գլուխ կովերից 48-ի մոտ (37,7 %) հայտնաբերվել է գաղտնի մաստիս: Ստուգիչ խմբի կենդանիները բուժվել են էֆիկուր պատրաստուկով, փորձնական խմբինը՝ կապույտ յողով: Ազդող Նյութերի շնորհիվ կապույտ յողն ապահովել է բարձր արդյունավետություն՝ արագացնելով բուժումը 2-3 օրով:

Նախաբան

Կաթնագեղձի բորբոքումը բազմապատճառային հիվանդություն է, որը զարգանում է կովի կաթնագեղձի, ինչպես նաև ամբողջ օրգանիզմի վրա մեխանիկական, քիմիական, կենսաբանական, սթրեսային գործոնների ազդեցությամբ: Մաստիսները հիմնականում զարգանում են պտուկի խողովակի միջով կրծի պարենխիմա ախտածին միկրոֆլորայի ներթափանցման հետևանքով: Միաժամանակ մաստիսների առաջացմանը նպաստում են պտուկի սեղմակի թուլացումը, անկանոն, ինչպես նաև ոչ լիարժեք կիթը, երբ կաթը կաթնագեղձից դուրս է բերվում ոչ ամբողջությամբ, իսկ կթող ապարատը հանելուց հետո մոտ կես ժամ պտկային խողովակը բաց է մնում (Б.Л. Белкин и др., 2015, В.П. Иванюк и др., 2017):

Մեծ անասնապահական համալիրներում մաստիսների առաջացումը պայմանավորված է մեքենայացված կթի,

կովերի խնամքի և պահվածքի սանիտարահիգիենիկ կանոնների խախտմամբ, կրծի ոչ լիարժեք խնամքով, գերսառեցմամբ, ինչպես նաև ոչ բալանսավորված կերակրմամբ (Е.В. Ильинский и др., 1995, Г.А. Ларионов и др., 2015):

Մաստիսներ առաջացնող ախտածին հարուցիչները կուրծ են ներթափանցում հեմատոգեն, լիմֆոգեն և գալակտոգեն ուղիներով: Հիմնական՝ գալակտոգեն ուղու միջոցով ախտածին մանրէները պտկային խողովակի միջով կուրծ են ներթափանցում շրջակա միջավայրից՝ հատակից, ջրից, ցամաքից: Հեմատոգեն ուղիով հիվանդության հարուցիչները կուրծ են ներթափանցում լյարդից, սեռական և այլ օրգաններից, եթե դրանցում առկա են բորբոքային երևույթներ: Մաստիս է զարգանում նաև լեպտոսպիրոզի, բրուցելյոզի, տուբերկուլյոզի և այլ ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ: Լիմֆոգեն ուղիով ախտածին հարուցիչները ներթափանցում են կրծի և մաշկի ավշային անոթների վնասվածության դեպքում:

Ըստ բազմաթիվ հետազոտությունների՝ մասսիստով հիվանդ կովերի կրծից անջատվել են ավելի քան 120 տեսակ ախտածին միկրոօրգանիզմներ: Սակայն հարկ է նշել, որ մասսիստների զարգացմանը հիմնականում նպաստում են ստաֆիլոկոկերը, ստրեպտոկոկերը, ավելի հազվադեպ՝ աղիքային ցուպիկների խմբին պատկանող միկրոօրգանիզմները (М.А. Ткачев, Л.В. Ткачева, 2006, В.П. Иванюк и др., 2011):

Ուշագրավ է, որ մասսիստներ են առաջացնում հատկապես *Str. agalacticae*, *Str. uberis*, *Staph. aureus*, *Staph. epidermidis*, *Str. dysgalacticae*, *E. coli*, *Str. pneumoniae*, *Corynebacterium piogenes*, *Ps. aueruginosa* ախտածին միկրոօրգանիզմները: Անբարենպաստ գործոնների ազդեցությամբ կաթնագեղձում խանգարվում է ավելոլային կաթի արտազատումը կաթնային խողովակների և կրծի ցիստեռնի մեջ, տեղի են ունենում կաթի կանգ (լակտոստազ), կրծի արյան և ավշային շրջանառության, կաթնագեղձի հյուսվածքների սնուցման խանգարումներ, բարձրանում են կրծի ներհյուսվածքային ճնշումը, արյունատար անոթների թափանցելիությունը, առաջանում է էքսուդատային, զարգանում են բորբոքային օջախներ, ընդ որում՝ էքսուդատը պարունակում է մեծ քանակությամբ սպիտակուցներ և արյան ձևավոր տարրեր: Կրծի հյուսվածքների այտուցվածությամբ որոշվում է՝ մասսիստը կլինիկական է, թե՛ գաղտնի (О.Б. Филиппова, Е.И. Кийко, 2015):

Կլինիկական և գաղտնի մասսիստների ժամանակ տեղի են ունենում ոչ միայն կրծի ինտերստիցիալ հյուսվածքի, այլև պարենխիմալի սեկրետոր փոփոխություններ: Դրանց նպաստում են կրծի ինտերստիցիալ հյուսվածքից բորբոքային պրոցեսի տարածումը և ավելոլներում, կաթնային խողովակներում ու ցիստեռնում զարգացումը: Բորբոքային պրոցես կարող է առաջանալ նաև անմիջապես ցիստեռնում, խողովակներում և ավելոլներում:

Կաթի միջազգային ֆեդերացիայի տվյալների համաձայն՝ կլինիկական մասսիստով հիվանդանում են կովերի 2, գաղտնի ձևով՝ 50 %-ը: Ըստ բազմաթիվ հետազոտությունների՝ գաղտնի մասսիստը 33,8 % հավանականությամբ վերածվում է կլինիկականի: Մասսիստի երկու ձևերի դեպքում էլ տեղի է ունենում կրծի ախտահարված հատվածների հետաճ, նվազում է կովերի կաթնատվությունը, դրանք դառնում են տնտեսապես ոչ պիտանի: Մասսիստների հաճախականություն է գրանցվում աշնանը և ձմռանը: Բնական դիմադրողականության անկման, տարբեր ապարատների միջոցով իրականացվող կթի պատճառով հիվանդանում են հատկապես լիատարիք կովերը (Е.Н. Сквородин, Н.В. Гребенёкова, 2006):

Կովերի մոտ մասսիստ կարող է առաջանալ արտադրական ցանկացած փուլում՝ կթվադադարի և լակտացիայի շրջաններում, ծննդաբերությունից հետո: Կլինիկական կամ գաղտնի մասսիստի առաջացումը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից հիմնականը կովերի օրգանիզմի դիմադրողականության անկումն է: Նպաստավոր գործոններ են նաև կուրծ ներթափանցած մանրէների քանակը, վիրուլենտությունը, ախտածնությունը, հիվանդությունը զարգացնող ախտածին ազդեցությունների ինտենսիվությունը և տևողությունը (А.П. Студенцов и др., 2007):

Մասսիստների տնտեսական վնասը պայմանավորված է կաթնատու կովերի մթերատվության, կաթի և կաթնամթերքի որակի նվազմամբ, բարձրարժեք կենդանիների վաղաժամ խոտանմամբ, հիվանդության ախտորոշման և բուժման մեծ ծախսերով, տարբեր հիվանդությունների հետևանքով մատղաշի զգալի անկումներով, կովերի դժվար բեղմնավորմամբ, սեռական ցիկլի խանգարումով (Н.И. Полянцева, 2015):

Նյութը և մեթոդները

Հետազոտություններն իրականացվել են ՀՀ Արարատի, Կոտայքի, Շիրակի, Լոռու մարզերի ֆերմերային տնտեսություններում: Խնդիր է դրվել հայտնաբերել անասնապահական տարբեր տնտեսություններում գաղտնի մասսիստով հիվանդ կովեր և բուժել մեր կողմից առաջարկվող Նոր եղանակով՝ կիրառելով կապույտ յոդ: Հետազոտվել է կովկասյան գորշ և սիմենթալ ցեղերի 127 գլուխ կով, որոնցից 48-ի մոտ հայտնաբերվել է գաղտնի մասսիստ: Ախտորոշումը կատարվել է կովերից վերցված կաթի նմուշներում սոմատիկ բջիջների հաշվարկի միջոցով՝ թեստային եղանակով: Կիրառվել է կալիֆորնիական թեստ, որի ակտիվ նյութերն են սորբինաթթվի աղը և Նատրիումի ավկանոլ սուլֆատը: Կաթի հետազոտման նպատակով օգտագործվել են չորս փոսիկներով հատուկ թիթեղներ. յուրաքանչյուր փոսիկի մեջ լցվել է կրծի համապատասխան քառորդից վերցված 2-3 մլ կաթ և ավելացվել 2-3 մլ կալիֆորնիական թեստ: Փոսիկների պարունակությունը խառնվել է փայտիկով, ռեակցիան կարդացվել է 10 վայրկյան անց: Միատարր, առանց մակարդուկների, կապույտ կամ գորշ գույնի հեղուկ խառնուրդի դեպքում դիտվել է բացասական, խառնուրդի թանձրացման դեպքում՝ թույլ դրական, թանձր, գելի նմանվող խառնուրդի դեպքում՝ դրական, իսկ պնդացած, որոշակի ձև ստացած գելի դեպքում՝ ուժեղ դրական ռեակցիա:

Տնտեսության անվանումը, հետազոտման ամիսը, ամսաթիվը, կենդանու համարը և կաթի նմուշների ռեակցիաները գրանցվել են հատուկ մատյանում:

Հիվանդ կենդանիները բաժանվել են երկու՝ ստուգիչ և փորձնական խմբերի: Յուրաքանչյուր խմբում ներառվել է 15 գլուխ կով: Բուժումը տևել է 7 օր:

Առաջին՝ ստուգիչ խմբի կովերը բուժվել են էֆիկուր պատրաստուկով, որը ներարկվել է ենթամաշկային եղանակով՝ 1 մլ 50 կգ զանգվածի հաշվով:

Երկրորդ՝ փորձնական խմբի կովերը բուժվել են կապույտ յոդի (ամփոփոյին) լուծույթով, որը կիրառվել է հետևյալ կարգով.

1. 200 մլ կապույտ յոդը լուծվել է 200 մլ ջրում և կենդանիներին տրվել օրական մեկ անգամ:
2. 50 մլ կապույտ յոդը լուծվել է 50 մլ ջրում, ստացված խառնուրդը նախօրոք տաքացվել է մինչև 35 °C և ներադրվել են եղանակով ներմուծվել կրծի հիվանդ քա-

ռորդ մասի մեջ: Խառնուրդի ներմուծումից առաջ փա-
տահարված բառորդ մասի պտուկը մշակվել է հականե-
խիչ լուծույթով, կապույտ յոդը ներմուծվել է պտկային
կաթետրի միջոցով:

3. Ախտահարված բառորդն արտաքինից մշակվել է կա-
պույտ յոդով:

Կապույտ յոդի ազդող նյութերն են յոդը և կալիումի յոդի-
դը, օժանդակ նյութերը՝ թորած ջուրը և կարտոֆիլի օս-
լան: Որպես բարձրարդյունավետ դեղամիջոց՝ կապույտ
յոդը ներառում է բարձր պոլիմերների և յոդի մոլեկուլներ:
Չարկ է նշել, որ յոդը լիովին կորցնում է թունավոր հատ-
կությունները, սակայն ամբողջությամբ պահպանում է
ակտիվությունը որպես միկրոտարր և հականեխիչ միջոց:
Այն բուժկանխարգելիչ արդյունավետ միջոց է յոդի ան-
բավարարության, տարբեր միկրոօրգանիզմների կողմից
հարուցված հիվանդությունների, ինչպես նաև աթերոսկլե-
րոզի դեպքում: Միաժամանակ գործում է հակավիրուսա-
յին, հակամանրէական, հակասնկային, հանգստացնող
ազդեցություն, նվազեցնում է արյան մեջ պարունակվող
խոլեստերինի մակարդակը, բարելավում իմունիտետը:
Կապույտ յոդը նաև ունի ախտահանիչ, մանրէասպան և
պատող հատկություն, նպաստում է այրվածքների բուժ-
մանը, օրգանիզմի համար անվնաս է:

Ցուցումներ: Կապույտ յոդը կարելի է օգտագործել դիզեն-
տերիայի, կոլիտի, փորլուծության, աղիների մեթերիզմի,
ֆարինգիտի, ռինիտի, սինուսիտի, բրոնխիտի, թոքաբոր-
քի, տուբերկուլյոզի, մաշկի ախտահարումների, այրվածք-
ների, վերքերի, մաշկային, բերանի խոռոչի խոցերի, պարո-
դոնտոզի, կոնյուկտիվիտի, հեպատիտի, ծնդագիտական
հիվանդությունների, ենթաստամոքսային գեղձի ախտա-
հարումների, ստամոքսի և տասներկուամատնյա աղիքի
խոցերի, սալմոնելոզի, դիսբակտերիոզի, սնկային վարակ-
ների, նյարդային համակարգի գրգռվածության բուժման
նպատակով:

Հակացուցումներ: Կապույտ յոդը չի կարելի օգտագործել
վահանաձև գեղձի բորբոքման ժամանակ, իսկ դրա գործու-

նեության խանգարման, վերջինիս նպաստող հիվանդու-
թյունների դեպքում (թրոմբոֆլեբիտ, ուռուցքաբանական,
սրտանոթային հիվանդություններ) պետք է կիրառել նվա-
զագույն չափաբաժիններով՝ անասնաբույժի ցուցումով:

Արդյունքները և վերլուծությունը

Բուժման արդյունավետությունը որոշելու նպատակով բուժ-
ման ընթացքում և բուժումից հետո կաթը ստուգվել է կալի-
ֆորնիական թեստի միջոցով: Բուժումից առաջ և բուժումից
հետո որոշվել են նաև գաղտնի մաստիտով հիվանդ կենդա-
նիների արյունաբանական ցուցանիշները՝ էրիթրոցիտների
և լեյկոցիտների քանակը, հեմոգլոբինի պարունակությունը,
ԷՆԱ-ն, լեյկոցիտային բանաձևը: Ըստ աղյուսակ 1-ի տվյալ-
ների՝ Արարատի մարզում հետազոտված 40 գլուխ կովերից
գաղտնի մաստիտով հիվանդ էր 17-ը (42,5 %), Կոտայքի
մարզում՝ 35-ից 13-ը (37,1 %), Շիրակի մարզում՝ 25-ից 9-ը
(36,0 %), Լոռու մարզում 27-ից 9-ը (33,3 %): Բոլոր մարզե-
րում ընդհանուր հետազոտվել է 127 գլուխ կով, գաղտնի
մաստիտ է հայտնաբերվել 48-ի մոտ, ինչը կազմում է հետա-
զոտված կենդանիների 37,7 %-ը:

Աղյուսակ 1. Գաղտնի մաստիտով հիվանդ կովերի գլխա-
բանակն ըստ մարզերի*

Մարզեր	Հետազոտված կովերի գլխաբանակը	Գաղտնի մաստիտով հիվանդ կովերի գլխաբանակը	Հիվան- դացույթ- յունը, %
Արարատ	40	17	42,5
Կոտայք	35	13	37,1
Շիրակ	25	9	36,0
Լոռի	27	9	33,3
Ընդամենը հետազոտվել է	127	48	37,7

Աղյուսակ 2. Գաղտնի մաստիտով հիվանդ կովերի արյունաբանական ցուցանիշները*

Արյունաբանական ցուցանիշներ	Մինչև բուժումը	Էֆիկուր պատրաստուկի կիրառմամբ բուժումից հետո	Կապույտ յոդի կիրառմամբ բուժումից հետո	Նորմա
Էրիթրոցիտներ, 1012 լ	6,27±0,34	6,73±0,21	5,85±0,25	5-7,5
Լեյկոցիտներ, 109 լ	15,28±0,44	13,24±0,17	6,88±0,22	4,5-12
Էոզինոֆիլներ, %	7±0,15	5±0,12	4±0,11	3-8
Լիմֆոցիտներ, %	64±0,31	50±0,22	48±0,24	40-65
Նեյտրոֆիլներ, %	30±0,45	35±0,32	31±0,34	22-41
Բազոֆիլներ, %	2±0,12	1±0,07	1±0,09	0-2
Մոնոցիտներ, %	7±0,14	6±0,07	4±0,05	2-7
Հեմոգլոբին, գ/լ	99,6±0,41	104±0,26	82±0,24	90-130
ԷՆԱ, մմ/ժամ	10±0,25	6±0,29	2±0,32	0,5-1,5

*Կազմվել է հեղինակների կողմից:

Աղյուսակ 2-ի տվյալների համաձայն՝ ստուգիչ և փորձնական խմբերի կովերի արյան բոլոր ցուցանիշները եղել են ֆիզիոլոգիական նորմայի սահմաններում: Հարկ է նշել, որ մաստիտով հիվանդ կովերի լեյկոցիտների ընդհանուր քանակի աճը և ԷՆԱ-ի արագացումը կարգավորվել են բուժման ընթացքում:

Բուժում իրականացնելիս հիվանդ կենդանիներից կրկնակի վերցրած կաթի նմուշները հետազոտվել են թեստային եղանակով՝ կալիֆորնիական թեստի միջոցով:

Ստուգիչ խմբի կենդանիների բուժման նպատակով Էֆիկուր պատրաստուկի կիրառմամբ կաթի կոնսիստենցիան և գույնը վերականգնվել են բուժման 6-7-րդ օրը: Փորձնական խմբի կենդանիների բուժման նպատակով ներքին (խմելու համար ջրային լուծույթի ձևով), ներպտկային և արտաքին (ախտահարված հատվածի մշակման) եղանակներով կիրառվել է կապույտ յոդ: Արդյունքում կաթի կոնսիստենցիան և գույնը վերականգնվել են բուժման 4-5-րդ օրը, ինչը վկայում է, որ կապույտ յոդի կիրառումը գաղտնի մաստիտի բուժումն արագացնում է առնվազն 2-3 օրով:

Եզրակացություն

Գաղտնի մաստիտի բուժման՝ մեր կողմից առաջարկվող եղանակը՝ կապույտ յոդի լուծույթի ներքին, ներպտկային և արտաքին կիրառումն ազդող նյութերի հակամանրէական, հակավիրուսային, հակասնկային և իմունիտետը խթանող հատկությունների շնորհիվ ապահովել է բարձր արդյունավետություն: Հարկ է նշել, որ այն մատչելի է, և ֆինանսական մեծ ծախսեր չեն պահանջվում:

Գաղտնի մաստիտի կանխարգելման համար անհրաժեշտ է պահպանել կենդանիների խնամքի սանիտարահիգիենիկ պայմանները, կարգավորել սննդակարգը, խուսափել կրծի վնասվածքներից, կանխել այն ինֆեկցիոն և ծննդագիտական հիվանդությունները, որոնք կարող են առաջացնել մաստիտ: Կլինիկական և գաղտնի մաստիտների վաղաժամ ախտորոշման ու արդյունավետ բուժման նպատակով միաժամանակ պետք է պարբերաբար իրականացնել կենդանիների կլինիկական հետազոտություններ և կաթի նմուշի թեստային ստուգումներ:

Գրականություն

1. Белкин Б.Л., Комаров В.Ю., Андреев В.Б. Мастит коров: Монография. - LAP LAMBERT Academic Publishing, 2015. - 113 с.
2. Иванюк В.П. и др. Краткий справочник противомикробных и противопаразитарных средств в ветеринарной медицине / В.П. Иванюк, Е.А. Кривоушкина, Г.Н. Бобкова. - Брянск: изд. Брянский ГАУ, 2017. - 272 с.
3. Иванюк В.П. и др. Фармакотерапия акушерских и гинекологических заболеваний у сельскохозяйственных животных: Учебное пособие / В.П. Иванюк, Л.Ю. Нестерова, О.В. Ильина, М.Н. Германенко. - Луганск, 2011. - 90 с.
4. Ильинский Е.В. и др. Усовершенствование лечебных мероприятий при мастите у коров / Е.В. Ильинский, А.Н. Трошин, О.В. Котова // Труды Кубанского государственного аграрного университета. - 1995. - N 349. - С. 53-56.
5. Ларионов Г.А. и др. Поражение вымени коров при субклиническом мастите / Г.А. Ларионов, Л.М. Вязова, О.Н. Дмитриева // Проблемы ветеринарной санитарии, гигиены и экологии. - 2015. - N 2 (14). - С. 62-66. <https://doi.org/10.15389/agrobiology.2017.6.1279rus>.
6. Полянцева Н.И. Ветеринарное акушерство, гинекология и биотехника размножения. - М.: Лань, 2015. - 480 с.
7. Студенцов А.П. и др. Ветеринарное акушерство и гинекология: Учебник / А.П. Студенцов, В.С. Шипилов, Л.Г. Субботина. - М.: Агропромиздат, 2007. - 512 с.
8. Сковородин Е.Н., Гребенькова Н.В. Справочник по воспроизводству крупного рогатого скота. - Уфа, 2006. - 87 с.
9. Ткачев М.А., Ткачева Л.В. Диагностика, терапия и профилактика акушерско-гинекологических болезней у коров: Учебно-методическое пособие. - Брянск: Изд. Брянская ГСХА, 2006. - 23 с.
10. Филиппова О.Б., Кийко Е.И. Мастит вымени коров и рентабельность молочного производства // Инновации в сельском хозяйстве. - 2015. - N 3 (13). - С. 275-279.

Лечение скрытого мастита с применением синего йода

А.В. Варданян, К.А. Сукиасян, Э.А. Никогосян

Национальный аграрный университет Армении

Ж.С. Мелконян

Исследовательский центр ветеринарии и ветеринарно-санитарной экспертизы НАУА

Ключевые слова: *скрытый мастит, синий йод, соматические клетки, калифорнийский тест, корова*

Аннотация. Исследование проводилось в различных животноводческих хозяйствах в 4 областях Армении с целью выявления болеющих скрытым маститом коров и их лечения новым методом с использованием синего йода. Скрытый мастит был диагностирован посредством калифорнийского теста. Из 127 голов обследованных животных у 48 (37.7 %) был обнаружен скрытый мастит. Контрольную группу лечили препаратом эфигур, опытную – синим йодом. Благодаря действующим веществам синий йод обеспечил высокую эффективность, ускорив лечение на 2-3 дня.

Treatment of Latent Mastitis Using Blue Iodine

A.V. Vardanyan, K.A. Sukiasyan, E.A. Nikoghosyan

Armenian National Agrarian University

Zh.S. Melkonyan

Research Center for Veterinary Medicine and Veterinary Sanitary Examination, ANAU

Keywords: *latent mastitis, blue iodine, somatic cells, Californian test, cow*

Abstract. The investigations have been conducted in four regions of Armenia to detect the cows diseased with latent mastitis in different livestock farms and to treat them through the new recommended method by using blue iodine. The latent mastitis has been diagnosed by means of Californian test. Out of 127 heads of researched animal latent mastitis was detected in 48 stocks (37.7 %). The animals of control group were treated with Eficur drug and those of experimental group – with blue iodine. Due to the active agents, blue iodine has provided high efficiency speeding up the treatment by 2-3 days.

*Ընդունվել է՝ 30.05.2022 թ.
Գրախոսվել է՝ 06.06.2022 թ.*



ՀՏԴ 663.915.22

ԴԱՌԸ ՇՈԿՈԼԱԴԻ ՀԱՐՍԱԶՑՈՒՄԸ ՄԱՆԴԱՅԻՆ ՄԱՆՐԱԹԵԼԵՐՈՎ

Ն.Գ. Հովհաննիսյան *տեխ.գ.թ.*, Ի.Ս. Խաչատրյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

narinehovhannisyan1984@mail.ru, izaxachatryan27@mail.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

դառը շոկոլադ,
ցորենի սննդային թեփ,
սննդային մանրաթելեր,
ֆունկցիոնալ սննդամթերք,
ֆունկցիոնալ բաղադրիչ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Շոկոլադագործությունում նոր տեսականու արտադրության տեխնոլոգիաների մշակումը պայմանավորված է շոկոլայի պահանջարկով: Խնդիր է դրվել ստանալ սննդային մանրաթելերով հարստացված դառը շոկոլադ: Որպես ֆունկցիոնալ բաղադրիչ կիրառվել է ցորենի սննդային թեփ, որը պարունակում է մեծ քանակությամբ արժեքավոր նյութեր և սննդային մանրաթելեր: Վերջիններս կարևոր նշանակություն ունեն մարդու օրգանիզմի բնականոն կենսագործունեության համար:

Նախաբան

Սննդամթերքի շոկոլայում տարեցտարի ավելանում են սպառողական ապրանքատեսակների ծավալները: Ներմուծման ավելացմամբ պայմանավորված ընդլայնվել է նաև դրանց տեսականին: Շուկա են մուտք գործել նոր որակական հատկանիշներով (ցածր կալորիականություն և յուղայնություն, բուսական ծագման սպիտակուցի պարունակություն և այլն) արտադրատեսակներ (M.A. Wells, 2009):

Հարկ է նշել, որ սննդամթերքի արտադրությունում կիրառվում են սննդային հավելումներ (խտացուցիչներ, էմուլսարարներ, համի բարելավիչներ, կոնսերվանտներ և այլն), որոնք զգալիորեն փոխում են արտադրատեսակների պատրաստման տեխնոլոգիան (Յ.Մ. Матюхина, 2017):

Սննդամթերքի քիմիական կազմը, սննդային արժեքը, գույնը, համը, հոտը և մյուս հատկությունները պայմանավորված են ջրի, հանքանյութերի, ածխաջրերի, ճարպերի, սպիտակուցների, վիտամինների, ֆերմենտների, օրգանական թթուների, դաբաղանյութերի, գլիկոզիդների, համային և գունային միացությունների, ֆիտոնցիդների, ալկալոիդների պարունակությամբ ու քանակական հարաբերակցությամբ (Յ.Մ. Матюхина, 2017, В.С. Колодязная, 1999):

Ուշագրավ է, որ շոկոլադի արտադրությունում դինամիկ փոփոխությունները պայմանավորված են բնակչության շրջանում շոկոլադի պահանջարկով: Տարիներ շարունակ ընդհանուր ընկալումն այն էր, որ արտադրատեսակների հագեցվածությամբ պայմանավորված շոկոլադի սպառման շուկան բավականին լճացել է: Սակայն վերջին տարիներին խոշոր շուկաներում նկատվում են փոփոխություններ. աճում է պրեմիում կարգի շոկոլադի գրավչությունը, ավելանում օրգանական, առանց շաքարի, մուգ և կակաոյի բարձր պարունակությամբ շոկոլադի պահանջարկը (E.O. Afoakwa, 2016):

Շոկոլադային զանգվածը պարունակում է շաքար, կակաոյի փոշի և յուղ, կաթնային ճարպ, էմուլսարարներ և այլ հավելումներ: Ըստ ձևավորված կարծիքի՝ այն պինդ է, միջդեռ իրականում հեղուկ է. պինդ զանգվածով շոկոլադային արտադրատեսակը ստացվում է մշակման արդյունքում: Շոկոլադի վերջնական համը և համակազմությունը պայմանավորված են կիրառված բաղադրիչներով (G. Talbot, 2009):

Սննդարար հավելումների շնորհիվ շոկոլադը ձեռք է բերում մի շարք օգտակար հատկություններ: Սակայն եթե շոկոլադային զանգվածին ավելացվում է ստանդարտ բաղադրագրերում չնշված որևէ բաղադրիչ, ապա պատրաստի

արտադրանքը չի կարելի անվանել շոկոլադ: Սովորաբար նման տեսականին կոչվում է շոկոլադային արտադրանք: Կակաոյի հատիկը կամ փոշին՝ շոկոլադի հիմնական բաղադրիչը, պարունակում է զգալի քանակությամբ ճարպ (կակաոյի յուղ), ինչպես նաև պոլիֆենոլներ (N. Easton, et al., D. Kelly, 1952, D. Rector, 2000), որոնք կազմում են կակաոյի հատիկի չոր զանգվածի մոտ 10 %-ը:

Շոկոլադը դասակարգվում է մուգ, կաթնային և սպիտակ տեսակների: Մուգ շոկոլադում կակաոյի պարունակությունը կազմում է 47-70 %, անգամ 90 %-ից բարձր (R.W. Hartel, et al., 2018):

Նյութը և մեթոդները

Հետազոտության նպատակով ընտրվել է ալրադաջային արտադրությունում որպես երկրորդային հումք ստացվող ցորենի սննդային թեփը: Թեփն այն թափոն է, այնուամենայնիվ պարունակում է արժեքավոր շատ բաղադրիչներ, այդ թվում՝ սննդային մանրաթելեր (A.Ф. Доронин, Б.А. Шендеров, 2002):

Codex Alimentarius-ում ընդունված սահմանման համաձայն՝ սննդային մանրաթելերը երեք կամ ավելի մոնոմերային միավորներով ուտելի ածխաջրային պոլիմերներ են: Դրանք կայուն են էնդոգեն մարսողական ֆերմենտների նկատմամբ, հետևաբար չեն հիդրոլիզվում և չեն յուրացվում բարակ աղիքում (Codex Alimentarius. Cereals, Pulses and Legumes, 2007):

Սննդային մանրաթելերը կազմում են բազմաշաքարների հետերոգեն մեծ խումբ: Դրանցից առավել հայտնի են թաղանթանյութը և բազմաթաղանթանյութը: Առաջինը գլյուկոզի չնուկլավորված պոլիմեր է, իսկ երկրորդը՝ գլյուկոզի, արաբինոզի, գլյուկուրոնաթթվի և դրա մեթիլ էսթերի պոլիմեր: Սննդային մանրաթելերը ոչ միայն հիմնանյութ են լակտո- և բիֆիդոբակտերիաների համար, այլև կարևոր ազդեցություն են գործում (G. Boehm, et al., 2003): Դրանք բարձր աղտորման և ջուր կապելու հատկությունների շնորհիվ նպաստում են աղիքային խոռոչում օսմոտիկ ճնշման բարձրացմանը և ստամոքսաղիքային համակարգի կենսագործունեության կարգավորմանը (С.В. Бельмер, Т.В. Гасилина, 2003, И.Я. Конь, 2005):

Հացահատիկի, այդ թվում՝ ցորենի, գարու, վարսակի, տարեկանի, հնդկաձավարի մաքրման և վերամշակման արդյունքում ստացվում է կողմնակի արտադրանք՝ թեփ, որը հացահատիկի պինդ թաղանթն է (B.A. Бутковский и др., 2006): Միայն ցորենի թեփն է փափուկ, հետևաբար կարելի է օգտագործել սննդում: Բացի այդ՝ այն պարունակում է անփոխարինելի և օգտակար սննդարար նյութեր, ինչի շնորհիվ էլ ցուցված է օգտագործել հիվանդությունների բուժման, օրգանիզմի վերականգնման նպատակով, ինչպես նաև որպես դիետիկ սնունդ (B.A. Бутковский и др., 1999):

ГОУС-7169-2017-ի համաձայն՝ ցորենի թեփը չպետք է պարունակի վնասակար խառնուրդներ, ռադիկալներ, վտանգավոր մետաղների՝ թույլատրելի նորման գերա-

զանցող չափաբաժիններ: Որպեսզի շուկա մուտք գործի միայն բարձրորակ ապրանք, ստուգվում են թեփի զույնը, համը, հոտը, խոնավությունը, վնասատուների և աղտոտվածության առկայությունը (ГОСТ 7169-2017. Межгосударственный стандарт. Отруби пшеничные. Технические условия / Wheat bran. Specifications):

Ցորենի թեփը պարունակում է զգալի քանակությամբ բջջանյութ (42,8 գ), վիտամիններ (*A, E, B₁, B₂, B₃, B₆, B₉*), տարբեր մակրո- և միկրոտարրեր (ֆոսֆոր, յոդ, մագնեզիում, կալցիում) (A. Zittermann, 2003):

Հացահատիկի արտաքին կեղևը գնահատվում է ըստ մանրաթելերի բարձր պարունակության: Հարկ է նշել, որ երկար ժամանակ սննդային մանրաթելերը չէին կարևորվում որպես մարդու առողջության համար օգտակար սննդային բաղադրիչ: Սակայն ներկայումս բազմաթիվ հետազոտություններով ապացուցվել է, որ դրանք բարելավում են մարսողությունը, նպաստում բազմաթիվ հիվանդությունների կանխարգելմանը: Ուստի անհրաժեշտ է սննդակարգում ներառել սննդային մանրաթելեր (B.A. Тютельян, 2006, М.Д. Ардатская, 2010):

Հետազոտության նյութ է ընտրվել դառը շոկոլադը, քանի որ պարունակում է օրգանիզմի համար օգտակար նյութեր և, ի տարբերություն կաթնային և սպիտակ շոկոլադի, ավելի քիչ քանակությամբ շաքար:

Հետազոտության նպատակն է երկրորդային հումքատեսակի և օգտակար բաղադրիչների կիրառմամբ ստանալ ֆունկցիոնալ սննդամթերք՝ շոկոլադի նոր արտադրատեսակ:

Խնդիր է դրվել՝

- որոշել ցորենի սննդային թեփի անհրաժեշտ քանակությունը,
- մշակել ցորենի թեփի կիրառման հնարավոր եղանակները և որոշել հումքի խոնավությունը,
- սահմանել տեխնոլոգիայի հաջորդական փուլերը և մշակել տեխնոլոգիական պարամետրերը,
- որոշել 100 գ պատրաստի մթերքում սննդային մանրաթելերի քանակությունը,
- ուսումնասիրել պատրաստի արտադրանքում վիտամինների քանակության հնարավոր ավելացումը, որակական և անվտանգության ցուցանիշները:

Հետազոտության մեթոդներն ընտրվել են ըստ գործող նորմատիվներով սահմանված պահանջների: Գիտափորձերի ընթացքում կիրառվել են գերճշգրիտ նոր սարքավորումներ: Սննդային մանրաթելերի պարունակությունը որոշվել է Կյուլշների և Գանեկի մեթոդով, որը հիմնված է տարբեր քիմիական միացությունների օքսիդացման, քայքայման և տարրալուծման վրա: Ընդ որում՝ մանրաթելերը գործնականում չեն լուծվում, ֆիլտրվում են և կշռվում:

Մինչև 0,0002 գ ճշգրտությամբ կշռված 1 գ մանրացված արտադրանքը լցվել է 120 սմ³ տարողությամբ փորձանոթի մեջ, ավելացվել են 40 սմ³ թթվածնի խառնուրդներ

(3,6 սմ³ ազոտական թթու, 36,4 սմ³ 80 %-անոց քացախաթթվի լուծույթ): Խցանով փակվելուց հետո փորձանոթը 1 ժամ տաքացվել է ավազի բաղնիքում: Այնուհետև պարունակությունը ֆիլտրվել է N2 ապակե ֆիլտրով: Էքստրակտի ներծծումից հետո նստվածքը նախ 1-2 անգամ լվացվել է նատրիումի հիդրօքսիդի 0,2 Մ սպիրտային տաք լուծույթով, ապա մի քանի անգամ, հաջորդաբար՝ թորած ջրի փոքր չափաբաժիններով և 10 սմ³ սպիրտի ու եթերի խառնուրդներով: Մաքուր սպիտակ նստվածքը 100-105 °C ջերմաստիճանում չորացվել է մինչև հաստատուն զանգված ստանալը, հովացվել և կշռվել անալիտիկ կշեռքով:

Հետազոտություններն իրականացվել են ՄՄ ՏԿ 021/2011 Նորմատիվային փաստաթղթի հիման վրա, ինչպես նաև ընտրվել են համընդհանուր ՉՕՍՏ-երով կանոնակարգված հետազոտման մեթոդներ (ГОСТ 31721-2012. Межгосударственный стандарт шоколад):

Զորենի սննդային թեփի և պատրաստի արտադրանքի խոնավությունը որոշվել է գրավիմետրական մեթոդով, ինչպես նաև 0,95 ճշգրտությամբ KERN անալիզատորով:

Հետազոտական աշխատանքները կատարվել են ԱՄՆ ՄՁԳ կողմից ֆինանսավորվող և Ազդոթիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի հիմնադրամի (ICARE) կողմից իրականացվող Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման և ուսուցման ճամբար (ԱԳԻԻ ԶԵՄՓ) ծրագրի շջակցությամբ:


Հոդվածի բովանդակությունը միմյանից հեղինակներին է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Գիտափորձերը միաժամանակ կատարվել են ՀԱԱՀ-ի «Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ-ի բուսական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիա» բաժնում, «Հացի, հրուշակեղենի և շոկոլադագործության» ուսումնափորձարարական, ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ Սննդամթերքի անվտանգության հետազոտությունների, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ և «ԷՖ ԴԻ ԷՅ» ՍՊԸ Սննդի և դեղերի փորձարկման լաբորատորիաներում:

Փորձնական նմուշները պատրաստվել են երեք տարբեր չափաբաժիններով՝ համապատասխանաբար 80, 85, 90 % շոկոլադ և 20, 15, 10 % ցորենի սննդային թեփ: Լաբորատոր հետազոտություններով և զգայաբանական բալային գնահատմամբ որպես օպտիմալ չափաբաժին է ընտրվել երրորդ տարբերակը: Մինչև հետազոտությունները բոլոր նմուշները մանրացվել են (միջինը 5-15 գ):

Արդյունքները և վերլուծությունը

Գիտափորձերի ընթացքում հետազոտության են ենթարկվել դառն շոկոլադի ստուգիչ նմուշը և փորձնական տարբերակները: Տեխնոլոգիական պրոցեսների հաջորդակա-
նությունը ներկայացված է գծապատկերում:



Գճ. Շոկոլադի պատրաստման տեխնոլոգիական պրոցեսների հաջորդականությունը (կազմվել է հեղինակների կողմից):

Հետազոտության նպատակով ընտրվել է 90 % դառն շոկոլադ և 10 % ցորենի սննդային թեփ չափաբաժնով երրորդ տարբերակը, քանի որ նման հարաբերակցությամբ հնարավոր է ապահովել պատրաստի արտադրանքում սննդային մանրաթելերի առկայություն և համապատասխան խոնավություն:

Աղյուսակ 1. Դառն շոկոլադի զգայաբանական գնահատումը*

Ցուցանիշներ	Բնութագիրը	
	դառն շոկոլադի ստուգիչ նմուշ	90 % շոկոլադ և 10 % ցորենի սննդային թեփ
Համը և հոտը	Տվյալ արտադրատեսակին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի	Թույլ արտահայտված թեփի համով, առանց կողմնակի հոտի
Արտաքին տեսքը	Սալիկի տեսք, առանց կտրվածքների և ծալքերի	
Համակազմությունը	Պինդ	
Կառուցվածքը	Համասեռ, ամբողջական և մանրացված գետնընկույզի, չամիչի, ցուկատների պարունակությամբ	Համասեռ, ցորենի սննդային թեփի պարունակությամբ
Զգայաբանական բալային գնահատականը	4,7	4,1

*Կազմվել է հեղինակների կողմից:

Նոր արտադրատեսակի զգայաբանական գնահատումը կատարվել է 2022 թ. հունվարի 27-ին կազմակերպված համաժողովի միջոցով (աղ. 1): Համատեսի բալային առավելագույն գնահատականը սահմանվել է 5 բալ: Արտադրանքն ընդհանուր գնահատվել է 4,1 բալ, ինչը բավական լավ ցուցանիշ է ֆունկցիոնալ նշանակության սննդամթերքի համար, քանի որ համային հատկանիշներով տարբերվում է ավանդական արտադրատեսակներից:

Աղյուսակ 2. Դառն շոկոլադի լաբորատոր հետազոտությունների արդյունքները*

Ցուցանիշներ	Ցուցանիշի արժեքը սահմանող Ն/Փ-ի նշագիրը	Փորձարկման մեթոդը սահմանող Ն/Փ-ի նշագիրը	Հալման փուլեր	Ցուցանիշի արժեքը		Եզրակացությունն ըստ փորձարկման արդյունքի
				ըստ Ն/Փ-ի	փաստացի ստացված	
Խոնավություն	--,--	-	%	1,5	1,7	----
Վիտամին A	--,--	ՉՕՍՏ Ռ 54635-2011	մգ/կգ	-	<0,05	----
Վիտամին B ₁	--,--	ՉՕՍՏ ԵՆ 14122-2013	մգ/կգ	-	0,95	----
Վիտամին B ₂	--,--	ՉՕՍՏ ԵՆ 14152-2013	մգ/կգ	-	0,5	----
Սննդային մանրաթելեր	--,--	ՉՕՍՏ 5903-51	%	-	4,36	----
ԱՑԽՄ	ՄՄ ՏԿ 021/2011	ՉՕՍՏ 31747-2012	գ	չ/թ 0,1	չ/հ	Համապատասխանում է
ՄԱՖԱՆՄ	ՄՄ ՏԿ 021/2011	ՉՕՍՏ 10444.15	գԱՄ/գ	1x104	1x103	Համապատասխանում է

*Կազմվել է հեղինակների կողմից:

Ծանոթություն. Ն/Փ - Նորմատիվային փաստաթուղթ:

Աղյուսակ 2-ում ամփոփված տվյալների համաձայն՝ ինչպես և նախատեսվում էր, պատրաստի արտադրանքում B₁, B₂ վիտամինների պարունակությունն ավելացել է: Սակայն վիտամին A-ի քանակությունը կազմել է նվազագույնը: Պահպանվել է նաև սննդային մանրաթելերի սահմանված քանակությունը՝ 4,36 գ/100 գ սալիկում:

Մանրեաբանական ցուցանիշների տեսանկյունից արտադրանքը Նույնպես համապատասխանել է սահմանված նորմատիվային պահանջներին:

Եզրակացություն

Այսպիսով, ըստ գիտափորձնական հետազոտությունների, ցորենի սննդային թեփը կարելի է որպես այլընտրանքային հումքատեսակ կիրառել շոկոլադագործությունում:

Մասնավորապես՝

- հիմնավորվել են ցորենի սննդային թեփի կիրառման հնարավոր եղանակը և օպտիմալ չափաբաժինը,
- լաբորատոր հետազոտությունների արդյունքում սահմանվել է սննդային մանրաթելերի պարունակությունը պատրաստի արտադրանքում,
- հաստատվել է, որ նման տեխնոլոգիայով և չափաբաժիններով պատրաստված արտադրատեսակում հնարավոր է ավելացնել B₁, B₂ վիտամինների պարունակությունը, այն հարստացնել սննդային մանրաթելերով,
- որոշվել է պատրաստի արտադրանքում ԱՑԽՄ և ՄԱՖԱՆՄ քանակությունները, որոնք համապատասխանել են թույլատրելի նորմաներին:

Որպես ֆունկցիոնալ և առավել էժան բաղադրիչ՝ ցորենի սննդային թեփի կիրառումը շոկոլադի արտադրությունում

արդյունավետ տեխնոլոգիա է, որն ապահովում է օգտակար Նոր արտադրատեսակի ստացում:

Գրականություն

1. Ардатская М.Д. Клиническое применение пищевых волокон: Метод. пособие. - М.: 4ТЕ Арт, 2010. - 48 с.
2. Бельмер С.В., Гасилина Т.В. Рациональное питание и состав кишечной микрофлоры // Вопросы детской диетологии. - Т. 1. - N 5. - 2003. - С. 17-20.
3. Бутковский В.А., Мерко А.И., Мельников Е.М. Технологии зерноперерабатывающих производств. - М.: Интерграф сервис, 1999. - 472 с.
4. Бутковский В.А., Галкина Л.С., Птушкина Г.Е. Современная техника и технология производства муки. - М.: ДеЛи принт, 2006. - 319 с.
5. ГОСТ 7169-2017. Межгосударственный стандарт. Отруби пшеничные. Технические условия / Wheat bran. Specifications. <https://internet-law.ru/gosts/gost/65703/>.
6. ГОСТ 31721-2012. Межгосударственный стандарт: шоколад. Общие технические условия. <https://internet-law.ru/gosts/gost/52415/>.
7. Доронин А.Ф., Шендеров Б.А. Функциональное питание. - М.: ГРАНТЪ, 2002. - 296 с.
8. Колодязная В.С. Пищевая химия: Учеб. пособие. - СПб.: СПбГАХПТ, 1999. - 140 с.
9. Конь И.Я. Углеводы: новые взгляды на их физиологические функции и роль в питании // Вопросы детской диетологии. - Т. 3. - N 1. - 2005. - С. 18-25.

10. Матюхина З.П. Товароведение пищевых продуктов: Учебник для студ. учреждений сред. проф. образования. - 7-е изд., стер. - М.: Академия, 2017. - 336 с.
11. Тутельян В.А. Нутрициология как основа современной диетологии / Материалы Съезда диетологов и нутрициологов «Диетология: проблемы и горизонты». - М., 2006.
12. Afoakwa, E. O. (2016). Chocolate Science and Technology / Editorial Offices 9600 Garsington Road, Oxford, OX4 2DQ, United Kingdom, - 550 p.
13. Boehm, G., Fanaro, S., Jelinek, J., Stahl, B., Marini, A. (2003). Prebiotic Concept for Infant Nutrition//Acta Paediatr Suppl; 91: 441, - pp. 64-67.
14. "Codex Alimentarius. Cereals, Pulses and Legumes", 2007.
15. Geoff Talbot. (2009). Science and Technology of Enrobed and Filled Chocolate, Confectionery and Bakery Products // First Published 2009, Wood Head Publishing Limited and CRC Press LLC, - pp. 29-52.
16. Easton, N., Kelly, D., Bartron, L., Cross, S., Griffin, W. (1952). The Use of Modifiers in Chocolate to Retard Fat Bloom. Food Technol; 6:21-5.
17. Zittermann, A. (2003). Encyclopedia of Food Sciences and Nutrition - 2nd Edition (10 Volume Set).
18. Hartel, R., H. von Elbe, J., Hofberger, R. (2018). Confectionery Science and Technology // Springer International Publishing AG, - pp. 423-482.
19. Rector, D. (2000). Chocolate – Controlling the Flow: Benefits of Polyglycerol Polyricinoleic Acid. Manuf Confectioner; 80(5):63-70.
20. Wells, M.A. (2009). Chocolate Crumb. In: Beckett ST, Editor. Industrial Chocolate Manufacturing and Use. 4th Ed. Oxford: Wiley-Blackwell, - pp. 101-120.

Обогащение горького шоколада пищевыми волокнами

Н.Г. Ованнисян, И.С. Хачатрян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: горький шоколад, пищевые пшеничные отруби, пищевые волокна, функциональные продукты, функциональный ингредиент

Аннотация. Разработка технологий в производстве новых видов шоколада обусловлена рыночным спросом. Цель данной работы – получение горького шоколада, обогащенного пищевыми волокнами. В качестве функционального ингредиента были использованы пищевые пшеничные отруби, которые содержат большое количество ценных веществ и пищевых волокон, имеющих важное значение для нормальной жизнедеятельности организма человека.

Enrichment of Dark Chocolate with Dietary Fibers

N.G. Hovhannisyan, I.S. Khachatryan

Armenian National Agrarian University

Keywords: dark chocolate, wheat bran, dietary fiber, functional products, functional ingredient

Abstract. Development of the technologies for manufacturing new product ranges in chocolate production industry is related to the market demand. An objective has been set to produce dark chocolate rich in food fibers. Wheat bran has been used as a functional ingredient, which contains large amount of valuable substances and dietary fibers. The latter are highly significant for the regular functioning of a human organism.

Շնորհակալ եմ 15.07.22 թ.
Գրախոսակն է՝ 19.08.22 թ.

ՀՏԴ 664:632.79T:635,21

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄՇԱԿՎՈՂ ԿԱՐՏՈՖԻԼԻ ՍՊԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԹՈՒՆԱՎՈՐ ՏԱՐՐԵՐԻ ՆԵՐՔՈՐԾՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Դ.Ա. Պիպոյան *ան.գ.թ.*, Մ.Ռ. Բեգլարյան *տեխ.գ.թ.*, Գ.Յ. Տեփանոսյան *կենս.գ.թ.*, Լ.Վ. Սահակյան *աշխ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսոֆերային հետազոտությունների կենտրոն

david.pipoyan@cens.am, meline.beglaryan@cens.am, gevorg.tepanosyan@cens.am, lilit.sahakyan@cens.am

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝
*սննդամթերքի
անվտանգություն,
սպառում,
աղտոտում,
թունավոր տարր,
ռիսկ*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հետազոտության նպատակն է որոշել Հայաստանում մշակվող կարտոֆիլի պալարներում թունավոր տարրերի (*Pb*, *As*, *Cd*, *Hg*) պարունակությունը, հողից դրանց կլանման առանձնահատկությունները, ինչպես նաև գնահատել չափահաս բնակչության կողմից կարտոֆիլի սպառման արդյունքում առողջության համար հնարավոր ռիսկերը:

Հողից կարտոֆիլ թունավոր տարրերի փոխանցման գործակիցը հաշվարկելիս գրանցվել են բավական փոքր արժեքներ ($TF < 1$), ինչը փաստում է, որ տարբեր մարզերում մշակված կարտոֆիլը հետազոտված թունավոր տարրերի կենսակուտակիչ չէ: Բացի այդ՝ հաշվարկվել է թունավոր տարրերի օրական ընդունումը, և հիմնավորվել, որ կարտոֆիլի սպառմամբ պայմանավորված հնարավոր ռիսկը թույլատրելի տիրույթում է:

Նախաբան

Կարտոֆիլը տարբեր կլիմայական և հողային պայմաններին հարմարվելու շնորհիվ մշակվում է տարբեր մայրցամաքներում՝ ավելի քան հարյուր երկրում: Աշխարհում մեկ միլիարդից ավելի մարդ օգտագործում է կարտոֆիլ: Ընդ որում՝ կարտոֆիլի ցանքատարածությունների ավելացումը պայմանավորված է բնակչության աճով և վերամշակող արդյունաբերության զարգացմամբ (H. Campos, O. Ortiz, 2020, M. Caliskan, et al., 2022):

Հայաստանում վերջին տարիներին գրանցվել է կարտոֆիլի մշակության և բերքատվության անկում: Մասնավորապես 2017 թվականի համեմատությամբ 2021-ին ցանքատարածությունները նվազել են 20,5, իսկ համախառն բերքը՝ 33,4 %-ով (ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2021): Սակայն պետք է նշել, որ Հայաստանում կարտոֆիլի ինք-


նաբավության ցուցանիշը դեռևս բարձր է. կազմում է 101,1 % (ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2020):

Գրեթե բոլոր երկրներում կարտոֆիլը բնակչության սննդակարգի կարևոր բաղադրիչներից է: Այն ավանդական մշակաբույս է և բրնձից, ցորենից ու եգիպտացորենից հետո ամենաշատ սպառվող մթերքն է աշխարհում (M. Pillana, et al., 2018):

Պալարների Էներգետիկ և սննդային արժեքը կարող է տատանվել ըստ կարտոֆիլի տեսակի, ինչպես նաև բերքահավաքից առաջ (շրջակա միջավայր, մշակություն, հասունություն և այլն) և հետո (վերամշակում, պահպանում, տեղափոխում և այլն) առկա պայմանների ու գործոնների: Ընդհանուր առմամբ 100 գ թարմ կարտոֆիլի Էներգետիկ արժեքը տատանվում է 96-ից մինչև 123 կկալ. հիմնական սննդանյութերից օսլան կազմում է 16-20, սպիտակուցը՝

1,76-2,95, ճարպերը՝ 0,1-0,5, սննդային մանրաթելերը՝ 1,8-2,1 գ: Աշխարհում օրական մեկ շնչի հաշվով միջինը սպառվում է 93 գ կարտոֆիլ: Սակայն տարբեր երկրներում այդ ցուցանիշը կարող է տատանվել 50-800 գ սահմանում (H. Campos, O. Ortiz, 2020):

Հայաստանում ամսական մեկ շնչի հաշվով միջինը սպառվում է 3,22 կգ կարտոֆիլ: Հարկ է նշել, որ տարբեր մարզերում բնակչության որոշ մասի սննդակարգի 70 %-ից ավելին կազմում են հացամթերքը և կարտոֆիլը (գծ. 1): Ուստի վերջինիս անվտանգության շարունակական մոնիտորինգը հանրային առողջապահության տեսանկյունից կարևոր է և առաջնահերթ:



Գծ. 1. Բնակչության մասնաբաժինը, որի սննդակարգի 70 %-ից ավելին բաժին է ընկնում հացամթերքին և կարտոֆիլին (կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի 2021 թ. տվյալների):

Սննդամթերքի անվտանգության հետազոտությունների շարքում կարևորվում է ծանր մետաղներով աղտոտված սննդի սպառման արդյունքում առաջացող ռիսկերի գնահատումը: Հարկ է նշել, որ սննդի ընդունումը սահմանվում է որպես մարդկանց վրա շրջակա միջավայրի աղտոտիչների ներգործության կարևոր ուղի: Մշակաբույսերի, մասնավորապես կարտոֆիլի՝ թունավոր տարրերով աղտոտման և սպառողների առողջության համար ռիսկերի գնահատման ուղղությամբ կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ (M. Cheraghi, et al., 2013, Z.I. Khan, et al., 2017, Y. Peng, et al., 2018): Տարբեր երկրներում (C.Y. Chang, et al., 2014, N. Gupta, et al., 2021, D. Raj, S.K. Maiti, 2020), ինչպես նաև Հայաստանում (D. Pipoyan, et al., 2018, 2019) կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ մի շարք բուսատեսակներ աղտոտված են թունավոր տարրերով՝ կապարով (*Pb*), կադմիումով (*Cd*), արսենով (*As*) և սնդիկով (*Hg*): Ընդ որում՝ դրանց անգամ չնչին քանակությունը կարող է առողջական խնդիրներ առաջացնել (J.L.C.M. Dorne, et al., 2011, D. Raj, S.K. Maiti, 2020):

Խնդիր է դրվել որոշել Հայաստանում մշակվող կարտոֆիլի պալարներում թունավոր տարրերի (*Pb*, *As*, *Cd*, *Hg*) պարունակությունը, հողից դրանց կլանման առանձնահատկությունները, ինչպես նաև գնահատել չափահաս բնակչության կողմից կարտոֆիլի սպառման արդյունքում առաջացող ռիսկերը:

Նյութը և մեթոդները

Նմուշառումը և թունավոր տարրերի տարրալուծումը: Կարտոֆիլի նմուշառումն իրականացվել է բուսական ծագման մթերքներում պեստիցիդների, նիտրատների, ծանր մետաղների մնացորդների, գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մոնիտորինգի շրջանակում (ՀՀ Կառավարություն, 2018): Նմուշառումն իրականացվել է ՀՀ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից՝ համաձայն ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնում (Էկոկենտրոն) մշակված ստանդարտ օպերացիոն ընթացակարգերի (CAC, 1993, ISO, 2017): Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի 10 գյուղական համայնքների հողահանդակներից հավաքվել են կարտոֆիլի նմուշներ: Ընդհանուր առմամբ խմբավորվել է 15 միասնական նմուշ: Կարտոֆիլի նմուշներում պարունակվող թունավոր տարրերի տարրալուծումը կատարվել է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ԻՍՕ 17025 ստանդարտին համապատասխան միջազգային հավատարմագրում ստացած լաբորատորիայում: Նմուշներում *Pb*, *Cd*, *Hg*, *As*-ի պարունակությունը որոշվել է ատոմային արտոբման սպեկտրաչափի կիրառմամբ (AAS, Thermo Fisher iCE-3500):

Փոխանցման գործակից (Transfer factor, TF): Հողից բույսի ուտելի հատվածներ թունավոր տարրերի անցումը բնութագրվում է փոխանցման գործակցով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով (R.S. Tasrina, et al., 2015).

$$TF = C_{\text{կարտոֆիլ}} / C_{\text{հող}}, \quad (1)$$

որտեղ $C_{\text{կարտոֆիլ}}$ -ը և $C_{\text{հող}}$ -ը թունավոր տարրերի պարունակություններն են՝ համապատասխանաբար բույսի և հողի նմուշներում:

Հողի նմուշները վերցվել են այն նույն հողահանդակներից, որտեղից նմուշառվել է կարտոֆիլը: Հողի նմուշներում թունավոր տարրերի պարունակությունը (աղ. 1) որոշվել է Էկոկենտրոնի շրջակա միջավայրի երկրաբաժնի բաժնում՝ ըստ US EPA 6200 ստանդարտի (US EPA, 2007), Innov X-5000 X-ray fluorescence spectrometer սարքի օգնությամբ:

Աղյուսակ 1. Թունավոր տարրերի պարունակությունը հողի նմուշներում, մգ/կգ*

Մարզեր	Նմուշի կոդը	Pb	As	Cd
Կոտայք	254/1	26,6	12,3	<LOD
	254/2	26,6	12,3	<LOD
	254/3	26,6	12,3	<LOD
Արմավիր	109	14,7	14,2	<LOD
	110	12,7	14,9	<LOD
	115	14,5	13,2	<LOD
Արագածոտն	31	22,5	45,9	<LOD
Վայոց ձոր	406	29,2	52,6	<LOD
	408	11,9	17,4	<LOD
	409	30,3	17,9	<LOD
Շիրակ	301	12,4	12,4	<LOD
	302	12,1	13,3	<LOD
	303	12,9	18	<LOD
Գեղարքունիք	182	10,2	14	<LOD
	183	10,4	14,8	<LOD

*Կազմվել է հեղինակների կողմից:


Ճանաչություն. LOD - հայտնաբերման սահմանաչափ:

Թունավոր տարրերի օրական ընդունումը (EDI): Կարտոֆիլի սպառման արդյունքում թունավոր տարրերի ներգործությամբ պայմանավորված հնարավոր առողջական ռիսկի գնահատման նպատակով հաշվարկվել է տարրերի օրական ընդունումը (WHO/FAO, 2008).

$$EDI = (C \cdot IR) / (BW), \quad (2)$$

որտեղ EDI-ն թունավոր տարրի օրական ընդունման հաշվարկված չափաբանակն է, մգ/կգ/օր, C-ն՝ կարտոֆիլի պալարներում յուրաքանչյուր տարրի միջին պարունակությունը, մգ/կգ, BW-ն՝ մարմնի միջին զանգվածը, 70 կգ, IR-ը՝ կարտոֆիլի օրական սպառումը:

Հաշվարկներ կատարելիս IR-ի որոշման համար կիրառվել է Էկոկենոտոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնում իրականացվող «Պարենային անվտանգության և սննդանյութերի գնահատման գիտամեթոդական կարողությունների հզորացում» ծրագրի (20TTCG-4A001) տվյալների բազան (գծ. 2): Կարտոֆիլի սպառման վերաբերյալ տվյալները հավաքագրվել են 24-ժամյա հարցախույզի մեթոդով (FAO, 2018) և վիճակագրական վերլուծության ենթարկվել SPSS (IBM SPSS Statistics V22.0) ծրագրի միջոցով (G. Ares, 2014): Առաջին խմբում (կլաստեր 1) ներառվել է սպառողների մեծամասնությունը (321 մարդ), կարտոֆիլի սպառման առավել ցածր ցուցանիշ է գրանցվել երկրորդ խմբում (կլաստեր 2)՝ 95 սպառող, իսկ առավել բարձր ցուցանիշ գրանցած երրորդ խմբում (կլաստեր 3)՝ ավելի քիչ թվով սպառող (27 մարդ):



Գծ. 2. Կարտոֆիլի սպառման կլաստերները (կազմվել է հեղինակների կողմից):

Արդյունքները և վերլուծությունը

Թունավոր տարրերի պարունակությունը կարտոֆիլի նմուշներում: Հայաստանի տարբեր մարզերում մշակվող կարտոֆիլի պալարներում Hg չի հայտնաբերվել, իսկ As-ի պարունակությունը քանակավորման սահմանաչափից (LOQ) ցածր է եղել (<0,01): Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալների համաձայն՝ հետազոտված կարտոֆիլի նմուշներում թունավոր տարրերի փաստացի պարունակությունը չի գերազանցում սննդամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգով (TP TC 021/2011) սահմանված թույլատրելի մակարդակը:

Աղյուսակ 2. Թունավոր տարրերի պարունակությունը կարտոֆիլի նմուշներում*

Մարզեր	Նմուշի կոդը	Pb	As	Cd
		սահմանային թույլատրելի մակարդակը, մգ/կգ		
		0,5	0,2	0,03
Կոտայք	154	<0,02	<0,01	0,013
	155	<0,02	<0,01	<0,01
	156	<0,02	<0,01	<0,01
Արմավիր	62	0,01	<0,01	0,02
	63	0,029	<0,01	<0,01
	71	0,021	<0,01	0,04
Արագածոտն	221	0,04	<0,01	<0,01
Վայոց ձոր	53	0,036	<0,01	<0,01
	54	0,046	<0,01	0,015
	55	0,045	<0,01	<0,01
Շիրակ	84	0,032	<0,01	0,011
	85	0,033	<0,01	<0,01
	86	0,032	<0,01	<0,01
Գեղարքունիք	103	0,024	<0,01	<0,01
	104	0,042	<0,01	<0,01

*Կազմվել է հեղինակների կողմից:

Թունավոր տարրերի փոխանցման գործակիցը (TF): Յոդի և կարտոֆիլի նմուշներում պարունակվող թունավոր տարրերի քանակության փաստացի տվյալների համադրմամբ հաշվարկվել է հողից բույս փոխանցման գործակիցը: *Hg*, *Cd* և *As* տարրերի փոխանցման գործակիցը չի հաշվարկվել, քանի որ հողի նմուշներում չեն հայտնաբերվել *Hg* և *Cd*, իսկ կարտոֆիլի նմուշներում *As*: *Pb* փոխանցման գործակիցը կազմել է 0,0004-0,004: Ըստ $TF < 1$ ցուցանիշի՝ բույսը կլանում (աքսորբում), սակայն չի կուտակում (կուտակացիա) մետաղը (S. Rai, et al., 2015, P. Vrhovnik, et al., 2016): Հաշվարկված փոխանցման գործակցի արժեքները 1-ից փոքր են, ինչը նշանակում է՝ ուսումնասիրված բուսատեսակի կողմից թունավոր տարրերի կենսակուտակում տեղի չի ունենում:

Թունավոր տարրերի օրական ընդունման հաշվարկված չափաքանակը (EDI): Ըստ աղյուսակ 3-ում ներկայացված կլաստերային խմբերի՝ կարտոֆիլի սպառման արդյունքում թունավոր տարրերի (*Pb*, *Cd*) օրական ընդունման հաշվարկված չափաքանակները չեն գերազանցում միջազգային առողջապահական ուղեցուցային արժեքները՝ տանելի չափաքանակները (EFSA, 2010, US EPA, 1989):

Կարտոֆիլի օրական միջին սպառման դեպքում (0,198 կգ/օր) *Pb* և *Cd* տարրերի EDI արժեքներն ըստ օրական տանելի չափաքանակների կազմում են փոքր մասնաբաժին (2,6 և 3,7 %):

Աղյուսակ 3. Կարտոֆիլի պալարներում պարունակվող *Pb* և *Cd* տարրերի օրական ընդունման հաշվարկված չափաքանակը*

Կարտոֆիլի սպառման կլաստերներ	EDI	
	օրական տանելի չափաքանակները, մգ/կգ/օր	
	<i>Pb</i> 3,5E-03 (PTWI/7)	<i>Cd</i> 1,0E-03 (RfD)
Կլաստեր 1	9,51E-05	3,86E-05
Կլաստեր 2	4,89E-05	1,99E-05
Կլաստեր 3	1,81E-04	7,37E-05
Միջին	9,05E-05	3,68E-05

Ծանոթություն. PTWI - շաբաթական ընդունման՝ պայմանականորեն տանելի չափաքանակ, որը մեկ օրվա հաշվարկով բաժանվել է 7-ի (EFSA, 2010), RfD - օրվա ռեֆերենս չափաքանակ (US EPA, 1989):

*Կազմվել է հեղինակների կողմից:

Եզրակացություն

Ըստ հետազոտությունների արդյունքների՝ կարտոֆիլի պալարներում պարունակվող թունավոր տարրերի փաստացի քանակությունը սահմանային թույլատրելի մակարդակից բավական ցածր է: Յոդից բույս թունավոր տարրերի փոխանցման գործակիցը հաշվարկելիս գրանցվել են բավական փոքր արժեքներ ($TF < 1$), ինչը փաստում է, որ տարբեր մարգերում մշակվող կարտոֆիլը հետազոտված թունավոր տարրերի կենսակուտակիչ է: Միաժամանակ տարբեր կլաստերային խմբերի ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ կարտոֆիլի սպառման արդյունքում թունավոր տարրերի օրական ընդունման հաշվարկված չափաքանակները զգալիորեն փոքր են, հետևաբար առողջության համար հնարավոր ռիսկը թույլատրելի տիրույթում է:

Գրականություն

- ՀՀ Կառավարություն, 2018. Ռազմավարական ծրագիր բուսական ծազման մթերքներում պեստիցիդների, նիտրատների, ծանր մետաղների մնացորդների և գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մոնիթորինգի իրականացման 2018-2020 թվականների. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=93810> (ղիտվել է՝ 24.03.2022 թ.):
- ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2020. ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռներն ըստ պարենային ապրանքատեսակների, ցուցանիշների և տարիների. https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_7%20Food%20Security/FS-1-2020.px/?rxid=c0d45a6b-1a2c-4d1c-bace-d3f4096b4de9 (ղիտվել է՝ 24.03.2022 թ.):
- ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2021. Պարենային ապահովություն և աղբատություն, 2021 թ. հունվար-դեկտեմբեր. <https://armstat.am/am/?nid=82&id=2461> (ղիտվել է՝ 24.03.2022 թ.):
- TP TC 021/2011. Технический регламент Таможенного союза “О безопасности пищевой продукции”. <https://docs.cntd.ru/document/902320560> (ղիտվել է՝ 24.03.2022 թ.):
- Ares, G. (2014). Cluster Analysis: Application in Food Science and Technology, in: Mathematical and Statistical Methods in Food Science and Technology. <https://doi.org/10.1002/9781118434635.ch07>.
- CAC, 1993. Portion of Commodities to which Codex Maximum Residue Limits Apply and which is Analyzed: CAC/GL 41-1993.
- Caliskan, M., Bakhsh, A., Jabran, Kh., (2022). Potato Production Worldwide. 1st Edition. Elsevier, Academic Press, – p. 512.

8. Campos, H., Ortiz, O. (2020). The Potato Crop: its Agricultural, Nutritional and Social Contribution to Humankind. Springer Nature, - p. 518. <https://doi.org/10.1007/978-3-030-28683-5>.
9. Chang, C.Y., Yu, H.Y., Chen, J.J., Li, F.B., Zhang, H.H., Liu, C.P. (2014). Accumulation of Heavy Metals in Leaf Vegetables from Agricultural Soils and Associated Potential Health Risks in the Pearl River Delta, South China. *Environ. Monit. Assess.* 186, 1547-1560. <https://doi.org/10.1007/s10661-013-3472-0>.
10. Cheraghi, M., Lorestani, B., Merrikhpour, H., Rouniasi, N. (2013). Heavy Metal Risk Assessment for Potatoes Grown in Overused Phosphate-Fertilized Soils. *Environmental Monitoring and Assessment*, 185(2), 1825-1831. <https://doi.org/10.1007/s10661-012-2670-5>.
11. Dorne, J.L.C.M., Kass, G.E.N., Bordajandi, L.R., Amzal, B., Bertelsen, U., et al. (2011). Human Risk Assessment of Heavy Metals: Principles and Applications., *Metal Ions in Life Sciences*. <https://doi.org/10.1515/9783110436624-007>.
12. EFSA (2010). Scientific Opinion on Lead in Food. *EFSA Journal*, 8(4), 1570. <https://doi.org/10.2903/j.efsa.2010.1570>.
13. FAO (2018). Dietary Assessment. A Resource Guide to Method Selection and Application in Low Resource Settings. <https://www.fao.org/3/i9940en/i9940EN.pdf> (նիստվել է՝ 24.03.2022 թ.).
14. Gupta, N., Yadav, K.K., Kumar, V., Krishnan, S., Kumar, S., Nejad, Z.D., Majeed Khan, M.A., Alam, J. (2021). Evaluating Heavy Metals Contamination in Soil and Vegetables in the Region of North India: Levels, Transfer and Potential Human Health Risk Analysis. *Environ. Toxicol. Pharmacol.* 82:103563. <https://doi.org/10.1016/j.etap.2020.103563>.
15. ISO (2017). ISO 874-1980 - Fresh Fruits and Vegetables – Sampling. Last Reviewed and Confirmed in 2017.
16. Khan, Z.I., Ahmad, K., Yasmeen, S., Akram, N.A., Ashraf, M., Mehmood, N. (2017). Potential Health Risk Assessment of Potato (*Solanum tuberosum* L.) Grown on Metal Contaminated Soils in the Central Zone of Punjab, Pakistan. *Chem.*, 166, 157-162. <https://doi.org/10.1016/j.chemosphere.2016.09.064>.
17. Peng, Y., Yang, R., Jin, T., Chen, J., Zhang, J. (2018). Risk Assessment for Potentially Toxic Metal (Ioid) in Potatoes in the Indigenous Zinc Smelting Area of Northwestern Guizhou Province, China. *Food and Chemical Toxicology*, 120, 328-339. <https://doi.org/10.1016/j.fct.2018.07.026>.
18. Pipoyan, D., Beglaryan, M., Sireyan, L., Merendino, N. (2018). Exposure Assessment of Potentially Toxic Trace Elements via Consumption of Fruits and Vegetables Grown under the Impact of Alaverdi's Mining Complex. *Hum. Ecol. Risk Assess. An Int. J.* 25(4), 819-834. <https://doi.org/10.1080/10807039.2018.1452604>.
19. Pipoyan, D., Stepanyan, S., Stepanyan, S., Beglaryan, M., Merendino, N. (2019). Health Risk Assessment of Potentially Toxic Trace Elements in Vegetables Grown Under the Impact of Kajaran Mining Complex. *Biol. Trace Elem. Res.* 192(2), 336-344. <https://doi.org/10.1007/s12011-019-01675-w>.
20. Pllana, M., Merovci, N., Jashari, M., Tmava, A., Shaqiri, F. (2018). Potato Market and Consumption. *International Journal of Sustainable Economies Management (IJSEM)*, 7(3), 19-29. <https://doi.org/10.4018/ijsem.2018070102>.
21. Rai, S., Gupta, S., Mittal, P.C. (2015). Dietary Intakes and Health Risk of Toxic and Essential Heavy Metals through the Food Chain in Agricultural, Industrial, and Coal Mining Areas of Northern India. *Hum. Ecol. Risk Assess.* 21, 913-933. <https://doi.org/10.1080/10807039.2014.946337>.
22. Raj, D., Maiti, S.K. (2020). Risk Assessment of Potentially Toxic Elements in Soils and Vegetables around Coal-Fired Thermal Power Plant: a Case Study of Dhanbad, India. *Environ. Monit. Assess.* 192, 1-18. <https://doi.org/10.1007/s10661-020-08643-1>.
23. Tasrina, R.C., Rowshon, A., Mustafizur, A.M.R., Rafiqul, I., Ali, M.P. (2015). Heavy Metals Contamination in Vegetables and its Growing Soil. *J. Environ. Anal. Chem.* 02. <https://doi.org/10.4172/2380-2391.1000142>.
24. US EPA (1989). Cadmium (CASRN 7440-43-9). U.S. Environmental Protection Agency, Integrated Risk Information System. https://cfpub.epa.gov/ncea/iris2/chemicallanding.cfm?substance_nmbr=141 (նիստվել է՝ 24.03.2022 թ.).
25. US EPA (2007). Field Portable X-Ray Fluorescence Spectrometry for the Determination of Elemental Concentrations in Soil and Sediment. Method 6200.
26. Vrhovnik, P., Dolenc, M., Serafimovski, T., Tasev, G., Arrebola, J.P. (2016). Assessment of Essential and Nonessential Dietary Exposure to Trace Elements from Homegrown Foodstuffs in a Polluted Area in Makedonska Kamenica and the Kočani Region (FYRM). *Sci. Total Environ.* 559, 204-211. <https://doi.org/10.1016/j.scitotenv.2016.03.197>.
27. WHO/FAO (2008). Dietary Exposure Assessment of Chemicals in Food. Report of a Joint FAO/WHO Consultation. https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/44027/9789241597470_eng.pdf?sequence=1&isAllowed=y (նիստվել է՝ 24.03.2022 թ.).

Оценка риска воздействия токсичных элементов при потреблении производимого в Армении картофеля

Д.А. Пипоян, М.Р. Бегларян, Г.О. Тепаносян, Л.В. Саакян

Центр эколого-ноосферных исследований НАН РА

Ключевые слова: безопасность пищевых продуктов, потребление, загрязнение, токсичный элемент, риск

Аннотация. Целью исследования является определение содержания токсичных элементов (*Pb, As, Cd, Hg*) в культивируемом в РА картофеле, особенностей их поглощения из почвы, а также оценка возможных рисков для здоровья при потреблении картофеля взрослым населением.

При расчете коэффициента переноса токсичных элементов из почвы в картофель были получены достаточно малые значения ($TF < 1$). Эти показатели свидетельствуют, что картофель, выращенный в разных регионах, не является биоаккумулятором указанных токсичных элементов. Рассчитано также суточное поступление этих элементов в организм и обосновано, что возможный риск, связанный с потреблением картофеля, находится в пределах допустимого.

Risk Assessment of Toxic Elements Contamination via Consumption of Potato Cultivated in Armenia

D.A. Pipoyan, M.R. Beglaryan, G.H. Tepanosyan, L.V. Sahakyan

Center for Ecological-Noosphere Studies, NAS RA

Keywords: food safety, consumption, pollution, toxic element, risk

Abstract. The purpose of the study is to assess the content of toxic elements (*Pb, As, Cd, Hg*) in potatoes produced in Armenia, the peculiarities of uptake from the soil, as well as possible health risks associated with the consumption of potatoes by the adult population.

When calculating the transfer factor of toxic elements from soil to potato, rather low values have been recorded ($TF < 1$), which testifies that the potato crops cultivated in different regions aren't bioaccumulators of researched toxic elements. Besides, the daily intake of the mentioned elements has been estimated and it has been pointed out that the potential risk associated with potato consumption is within the acceptable level.

Հետազոտություններն իրականացվել են ՀՀ ԿԳՄՍՆ «Փորձագիտական երկրաբանական քարտեզների մշակում կայուն գյուղատնտեսության զարգացման և սննդի անվտանգության ապահովման համար» թեմայով նպատակային ծրագրի շրջանակում:

Ընդունվել է՝ 11.04.2022 թ.
Գրախոսվել է՝ 25.04.2022 թ.



ՀՏԴ 637.5.03

ԳԱՐԵՁԱՎԱՐԻ ԱԼՅՈՒՐԻ ՀԱՎԵԼՈՒՄՈՎ ՆՈՐ ՄԱՍԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Է.Լ. Սահակյան *տ.գ.թ.*, Ա.Լ. Դաշտոյան *տ.գ.թ.*, Մ.Վ. Պետրոսյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

emmass@list.ru, annad-1976@mail.ru, malina86.@inbox.ru

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

*մսային կիսապատրաստվածք,
հիմնական հումք,
բջջանյութ,
գարեծավարի ալյուր,
սննդային արժեք*

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Մանրարդյունաբերության զարգացման կարևորագույն նախադրյալ է բարձր-արժեք հումքի օգտագործմամբ սննդամթերքի արտադրության նորագույն տեխնոլոգիաների մշակումը:

Համաշխարհային պրակտիկայում սննդամթերքի բաղադրության բալանսավորման լավագույն տարբերակը բուսական և կենդանական ծագման բաղադրիչների համադրումն է, ինչը հնարավորություն է տալիս կայունացնել հումքի ֆունկցիոնալ և տեխնոլոգիական հատկությունները, բարձրացնել կենսաբանական արժեքն ու բարելավել պատրաստի արտադրանքի զգայաբանական հատկությունները: Ուստի առաջարկվում է գարեծավարի ալյուրի հավելումով նոր տեսակի կիսապատրաստվածքի արտադրության տեխնոլոգիան կիրառել մսարդյունաբերությունում:

Նախաբան

Մսային կիսապատրաստվածքներն արագ պատրաստվող, երկարատև պահպանվող և լայնորեն սպառվող մսամթերք են: Հայաստանում օրեցօր ընդլայնվում է դրանց տեսականին, մշակվում են նոր բաղադրագրեր, կատարելագործվում են տեխնոլոգիական պրոցեսները:

Կիսապատրաստվածքների արտադրությունում օգտագործվող մսային հումքը, որպես կենդանական սպիտակուցի և ճարպի աղբյուր, նպաստում է պատրաստի մթերքի էներգետիկ արժեքի բարձրացմանը (Վ.Մ. Հովհաննիսյան, 2009):

Մսային հումքից բացի մսարդյունաբերությունում լայնորեն կիրառվում են նաև բուսական ծագման հավելանյութեր, որոնց շնորհիվ պատրաստի մթերքը հագեցնում է ածխաջրերով, իջնում է դրա ինքնարժեքը, տնտեսվում է մսային բարձրարժեք հումքի օգտագործումը: Բուսական ծագման հավելանյութերի կիրառումը միաժամանակ բարելավում է պատրաստի մթերքի համը, կաջողականություն-

ընդ, ապրանքային տեսքը և սննդային արժեքը (Վ.Մ. Հովհաննիսյան, 2009, И.М. Амбражеёв, 2011):

Հետազոտության նպատակն է բուսական ծագման հավելանյութերի կիրառմամբ կատարելագործել մսարդյունաբերությունում արտադրվող կիսապատրաստվածքների տեսականին:

Նյութը և մեթոդները

Հետազոտությունները կատարվել են տավարի և խոզի մսից նոր կիսապատրաստվածքի արտադրության տեխնոլոգիա մշակելու, այն է՝ միսը գարեծավարի ալյուրով մասնակի փոխարինելու նպատակով:

Խնդիր է դրվել՝

- ուսումնասիրել տավարի և խոզի մսի, գարեծավարի քիմիական կազմը,
- գնահատել գարեծավարի հատկությունները,

- վերլուծել և հիմնավորել հումքի փոփոխությունները մթերքի արտադրության տեխնոլոգիական բոլոր փուլերում,
- որոշել գարեձավարի այլուրի ավելացման օպտիմալ չափաքանակները,
- կազմակերպել համաժողով,
- հաշվարկել պատրաստի մթերքի մենդապիտ արժեքը:

Մսի որակական գնահատումը կատարվում է ըստ մկանային, ճարպային, շարակցական և ոսկրային հյուսվածքների քանակական հարաբերակցության: Մարդու օրգանիզմի համար միսը լիարժեք սպիտակուցների աղբյուր է. սպիտակուցները պարունակում են օրգանիզմի լիարժեք կենսագործունեության համար անհրաժեշտ բոլոր անփոխարինելի ամինաթթուները:

Գարեձավարը հարուստ է *B* խմբի և *A*, *E*, *PP* վիտամիններով, ինչպես նաև հանքային տարրերով՝ ֆոսֆոր, ֆտոր, քրոմ, ցինկ, բոր: Գարեհատիկը պարունակում է զգալի քանակությամբ կալցիում, պղինձ, երկաթ, մագնեզիում, նիկել, յոդ, մի շարք այլ օգտակար հանքային նյութեր, բարդ ածխաջրեր, օսլա, բավարար քանակությամբ սպիտակուց, ճարպ, հազեցած ճարպաթթուներ (<https://vestnik.susu.ru>, www.cyberleninka.ru):

Գարեձավարում պարունակվող բջջանյութը նպաստում է մարսողական համակարգի Նորմալ կենսագործունեությանը, օրգանիզմից սննդի մնացորդների և տոքսինների դուրս բերմանը: Ուստի այս հատիկաձավարն օգտակար է բոլոր տարիքի մարդկանց համար:

Նոր տեսակի կիսապատրաստվածքի արտադրության համար նախ մշակվել է բաղադրագիր, և որոշվել են գարեձավարի այլուրի ավելացման օպտիմալ չափաքանակները: Որպես ստուգիչ նմուշ է ընտրվել Նույն մսային հումքից, միևնույն տեխնոլոգիայով, սակայն առանց գարեձավարի այլուրի հավելման պատրաստված կոտլետը (В.А. Боравский, 2002):

Ըստ գրականության տարբեր աղբյուրների՝ մսամթերքի արտադրությունում բուսական ծագման հավելանյութերի

Աղյուսակ 1. Գարեձավարի այլուրի ազդեցությունը խճուղակի զգայաբանական և pH ցուցանիշների վրա*

Ավելացվող գարեձավարի այլուրի չափաքանակը, %	pH	Զգայաբանական ցուցանիշներ
10	6,92	Լցոնը համասեռ է, կաշուն, համը և հոտը՝ լավ արտահայտված, գույնը՝ կարմրավուն
20	7,05	Լցոնը համասեռ է, կաշուն, համը և հոտը՝ լավ արտահայտված, գույնը՝ բաց վարդագույն
30	7,15	Լցոնը համասեռ է, համը և հոտը՝ թույլ արտահայտված, գույնը՝ ոչ ապրանքային

* Կազմվել է հեղինակների կողմից:

ավելացման օպտիմալ չափաքանակը կազմում է 10-25 % (И.А. Рогов и др., 2000):

100 կգ խճուղակ պատրաստելիս որպես բնական հավելում օգտագործվող գարեձավարն ավելացվել է նախ 10 %, ապա 20 և 30 % չափաքանակներով՝ մանրացված այլուրի ձևով, կուտոտերացման ընթացքում: Ընդ որում՝ ավելացվող օպտիմալ չափաքանակը որոշվել է խճուղակի զգայաբանական և միջավայրի pH ցուցանիշների հիման վրա:

Աղյուսակ 1-ում ամփոփված տվյալների համաձայն՝ լցոնին ավելացվող գարեձավարի այլուրի օպտիմալ չափաքանակն ընդունվել է 20 %, քանի որ համապատասխան տարբերակում լցոնը համասեռ է, կաշուն, համը և հոտը՝ լավ արտահայտված, գույնը՝ բաց վարդագույն, իսկ pH-ը կազմում է 7,05:

Գարեձավարի այլուրի հավելումով կիսապատրաստվածքի բաղադրագիրը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Պատրաստի մթերքի ելքը կազմել է 130 %:

Աղյուսակ 2. Գարեձավարի այլուրի հավելումով կիսապատրաստվածքի բաղադրագիր (100 կգ խճուղակի հաշվով)*

Բաղադրիչներ	Չափաքանակը, կգ
Տավարի միս՝ ջլազատված, 1-ին տեսակի	40
Խոզի միս՝ ջլազատված, կիսայուղալի	27
Գարեձավարի այլուր	20
Ձու կամ մեղանժ	3
Պաքսիմատ	4
Բուրավետ պղպեղ՝ աղացած	0,15
Թարմ սոխ	6
Կերակրի աղ	1,1

* Կազմվել է հեղինակների կողմից:

Արդյունքները և վերլուծությունը

Տավարի և խոզի մսից, գարեձավարի հավելումով կոտլետի արտադրական փորձարկումները կատարվել են «Բեկոն Պրոդուկտ» ՍՊԸ-ի կիսապատրաստվածքների արտադրամասում: Լաբորատոր հետազոտություններն իրականացվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի անասնաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի լաբորատորիայում՝ երեք կրկնողությամբ (Н.К. Журавская и др., 1985, В.М. Позняковский, 2002): Միջին թվաքանակական արժեքը (Է.Լ. Սահակյան և ուրիշ., 2016) հաշվարկելուց հետո որոշվել են զգայաբանական և ֆիզիկաքիմիական ցուցանիշները (աղ. 3): Որպես ստուգիչ նմուշ է ընտրվել ТУ 9214-403-23476484-01-ով, առանց գարեձավարի այլուրի հավելման կիսապատրաստվածքը:

Աղյուսակ 3. Ստուգիչ և փորձնական կիսապատրաստվածքների զգայաբանական և ֆիզիկաքիմիական ցուցանիշները*

Ցուցանիշներ	Կիսապատրաստվածքի բնութագիրը	
	կոտլետ դասական ТУ 9 214-403-23476484-01	գարեձավարի այլուրի հավելումով կոտլետ (փորձնական)
Ապրանքային տեսքը	Մակերեսը հավասարաչափ պաքսիմապատված, առանց ճաքերի ու պատռվածքների	
Ձևը	Օվալաձև	
Համը և հոտը տապակած վիճակում	Տապակած մթերքին բնորոշ, առանց կողմակի համի և հոտի	
Սպիտակուց, %	16,28	18,15
Ճարպ, %	14,52	13,7
Կերակրի աղ, %	1,8	1,9

Աղյուսակ 4. Գարեձավարի այլուրի հավելումով կիսապատրաստվածքի էներգետիկ արժեքը*

Խոնավություն, %	50,23
Ճարպ, %	13,7
Սպիտակուց, %	18,15
Հանքային նյութեր (այդ թվում՝ կերակրի աղ), %	5,8
Ածխաջուր, %	12,12
Էներգետիկ արժեքը, կկալ	244,38

* Կազմվել են հեղինակների կողմից:

Ըստ աղյուսակ 3-ի՝ գարեձավարի այլուրի հավելումը նպաստում է պատրաստի մթերքում սպիտակուցների քանակության ավելացմանը և ճարպի նվազեցմանը: Հատկանշական է, որ նման մթերքն առավել դյուրամարս է և օգտակար սրտանոթային հիվանդների համար:

Հաշվի առնելով, որ սննդամթերքն օրգանիզմում վերածվում է էներգիայի և ապահովում է մարդու առողջ ապրելակերպն ու ակտիվ կենսագործունեությունը, կատարվել է նաև պատրաստի արտադրանքի էներգետիկ արժեքի հաշվարկ (աղ. 4):

Եզրակացություն

Հետազոտությունների և փորձերի միջոցով հիմնավորվել ու հաստատվել է, որ գարեձավարի կիրառումը նոր տեսակի կոտլետների արտադրությունում թույլ է տալիս բարելավել պատրաստի մթերքի զգայաբանական ցուցանիշները և կատարել թանկարժեք մսային հումքի խնայողություն:

Մշակվել և փորձնականորեն հաստատվել են նաև գարեձավարի այլուրի հավելումով նոր տեսակի կիսապատրաստվածքի արտադրության տեխնոլոգիական պրոցեսներն ու բաղադրագրերը:

Ըստ փորձերի արդյունքների՝ արտադրության ընթացքում հումքի ֆիզիկաքիմիական փոփոխությունները նպաստում են պատրաստի մթերքի որակական ցուցանիշների բարելավմանը: Առաջարկվող ֆունկցիոնալ սնունդն օգտակար է բոլոր տարիքի մարդկանց համար:

Գարեձավարի այլուրի հավելումով կիսապատրաստվածքի էներգետիկ արժեքը կազմել է 244,38, իսկ ստուգիչ նմուշինը՝ 238,7 կկալ: Ընդ որում՝ այս հատկաձավարի բարձր ջրակլանելիության շնորհիվ պատրաստի մթերքի ելքը կազմել է 130 % (100 կգ անալի մսային հումքի հաշվով), այն դեպքում, երբ ստուգիչ տարբերակում, ըստ ТУ 9214-403-23476484-01-ի, այն կազմում է 100 %:

Առաջարկում ենք նոր տեսակի կիսապատրաստվածքի արտադրության տեխնոլոգիան կիրառել մսարդյունաբերությունում:

Գրականություն

1. Հովհաննիսյան Վ.Մ. Մսի և մսամթերքի տեխնոլոգիա. - Եր., 2009. - 270 էջ:
2. Սահակյան Է.Լ. և ուրիշ. Մսի և մսամթերքի տեխնոլոգիա-1. Մեթոդական ցուցումներ լաբորատոր պարապմունքների համար. - Եր.: ՀԱԱՀ, 2016. - 28 էջ:
3. Амбражей И.М. Технология производства мясных полуфабрикатов: Учебное пособие. - Минск, 2011. - 136 с.
4. Боровский В.А. Энциклопедия по переработке мяса в фермерских хозяйствах и на малых предприятиях. - М.: Солон-Пресс, 2002. - 575 с.

5. Журавская Н.К. и др. Исследование и контроль качества мяса и мясопродуктов. - М.: Агропромиздат, 1985. - 294 с.
6. Позняковский В.М. Экспертиза мяса и мясопродуктов. - Н.: Сибирское университетское издательство, 2002. - 518 с.
7. Рогов И.А. и др. Общая технология мяса и мясопродуктов. - М.: Колос, 2000. - 367 с.
8. ТУ 9214-403-23476484-01. Мясные полуфабрикаты.
9. <https://cyberleninka.ru/article/c/agricultural-biotechnology>. Агроботехнологии (դիտվել է՝ 23.05.2022 թ.).
10. <https://vestnik.susu.ru/food/article/view/2994/2817>. Новый вид сырья из перловой крупы для применения в технологии кондитерских изделий (դիտվել է՝ 23.05.2022 թ.).

Технология производства нового мясного продукта с добавлением перловой муки

Э.Л. Саакян, А.Л. Даштоян, М.В. Петросян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: мясные полуфабрикаты, основное сырье, клетчатка, перловая мука, пищевая ценность

Аннотация. Важнейшей предпосылкой развития пищевой промышленности является разработка новейших технологий производства продуктов питания с использованием ценного сырья.

В мировой практике оптимальным способом сбалансирования состава пищевых продуктов является комбинирование растительных и животных ингредиентов, что позволяет стабилизировать функционально-технологические свойства сырья, повысить биологическую ценность и улучшить органолептические свойства готового продукта. Для этого рекомендуется использовать технологию производства нового полуфабриката с добавлением перловой муки в мясной промышленности.

New Meat Product Manufacturing Technology through Supplementing Pearl Barley Flour

E.L. Sahakyan, A.L. Dashtoyan, M.V. Petrosyan

Armenian National Agrarian University

Keywords: semi-finished meat product, main raw material, cellulose, pearl barley flour, nutritional value

Abstract. Development of new food production technologies using high nutrient value raw material is an important prerequisite for the food industry improvement.

The world practice has shown that the best option for balancing food components is the combination of plant- and animal-based food components which enables to stabilize the functional and technological properties of a raw material, increase its biological value and improve the organoleptic properties of the finished product. Thus, it is recommended to apply the new semi-finished production technology in the meat industry upon the supplementation of pearl barley flour.

Ընդունվել է՝ 01.07.2022 թ.
Գրախոսվել է՝ 11.07.2022 թ.



ՀՏԴ 663.36

ՎԱՅՐԻ ՉԻՉԽԱՆԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՏԱՊՏՂԱՅԻՆ ԱԼԿՈՅՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՄԵ

Մ.Ռ. Վարդանյան, Յ.Ժ. Տեր-Մովսեսյան *կ.գ.թ.*

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

marydevard@mail.ru, termovsesyan@gmail.com

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝

վայրի չիչխան,
գինեկոլթ,
պտղային ալկոհոլային խմիչք,
չիչխանի ալկոհոլային խմիչք,
ֆիզիկական և քիմիական
ցուցանիշներ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ուսումնասիրվել է Սևանի ավազանում աճող վայրի չիչխանի պտուղների (պտղամիս, սերմ, կեղև) քիմիական կազմը: Չիչխանի պտուղներից պատրաստվել է հատապտղային ալկոհոլային խմիչք: Որոշվել են ստացված գինեկոլթի և հատապտղային ալկոհոլային խմիչքի ֆիզիկաքիմիական ու զգայաբանական ցուցանիշները:

Վայրի չիչխանի պտուղներից ստացված խմիչքը պարունակում է բնական կենսաբանական ակտիվ նյութեր, ուստի մշակված տեխնոլոգիայի կիրառմամբ կարելի է ապահովել հատապտղային ալկոհոլային արժեքավոր խմիչքների արտադրություն:

Նախաբան

Հատապտղային ալկոհոլային խմիչքներն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ՀՀ սպառողական շուկայում: Որպես գյուղատնտեսական արտադրության ճյուղ՝ ալկոհոլային խմիչքների արտադրությունը զգալի տեսակարար կշիռ է կազմում ՀՀ համախառն ներքին արդյունքում (Ն.Բ. Կազումով և ուրիշ., 2013):

Ըստ վիճակագրական տվյալների՝ տարեցտարի Հայաստանում արտադրվում են ավելի որակյալ ալկոհոլային խմիչքներ:

Հատապտղային ալկոհոլային արտադրանքի հիմնական հումքը մշակովի և վայրի բույսերի պտուղներն են: Հայկական հատապտղային ալկոհոլային խմիչքները որակով և համային փնջի հարստությամբ չեն զիջում խաղողի դասական խմիչքներին:

Բացի ավանդական գինու խաղողի տեսակներից՝ Հայաստանում զարգացած է նաև խնձորի, տանձի, ծիրանի և

այլ մրգերի, հատկապես հատապտուղների մշակությունը: Մրգային և հատապտղային գինիները պարունակում են մեծ քանակությամբ վիտամիններ՝ B_1 , B_2 , B_{12} , PP , C , պանտոթենիկ թթու և ֆոլաթթու, ինչով և պայմանավորվում են տարածաշրջանային հումքից դրանց արտադրության հեռանկարները (Ա.Ա. Տալմին, Յ.Վ. Սիմոնով, 2007):

Ներկայումս զգալի հետաքրքրություն ներկայացնող հատապտղային ալկոհոլային խմիչքների արտադրությունը ենթադրում է ինչպես ավանդական տեխնոլոգիաների կատարելագործում, այնպես էլ նորարարությունների կիրառում: Թեև հայրենական գինի արտադրողները լիովին ապահովում են խաղողի գինիների պահանջարկը շուկայում, այնուամենայնիվ առկա է մրգային և հատապտղային գինիների պակաս:

Հայաստանի տարածքում աճում են արժեքավոր վայրի հատապտուղներ, այդ թվում՝ չիչխան: Հարկ է նշել, որ վայրի չիչխանի ընդարձակ թավուտներով հարուստ է հատկապես Սևանի ավազանը:

Չիչխանը (լատ.՝ *Hippophae*) դասվում է փշատազգիների ընտանիքի տերևաթափ ծառերի կամ թփերի ցեղին (www.econews.am): Այն հայտնի է նաև փշարմավ, ձիափշատ, ձիափուշ, ձորի փուշ անուններով: Գոյություն ունի չիչխանի երեք տեսակ: Հայաստանում տարածված է միայն չիչխան դժնիկանմանը (*Hippophae rhamnoides*), որը երկտուն է, արական ծաղիկները խմբված են կարճ հասկերում, իգականները՝ տերևանոթներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին: Պտուղը հյութալի է, նարնջագույն-կարմրավուն, գնդաձև կամ էլիպսոձև, ճյուղերին կապած, պարունակում է *C, E, P, K, B₁, B₂, B₆* վիտամիններ, կարոտին (*A*-նախավիտամին), թթուներ (խնձորաթթու, գինեթթու, ֆոլաթթու), շաքար, իսկ սերմերը՝ յուղ, տոկոֆերոլ, կարոտին (*A.Я. Земцова и др., 2019*): Տարածված է հատկապես Սյունիքի, Վայոց ձորի մարզերում, Սևանի ավազանում: Աճում է գետահովիտներում, ճահճուտներում և այլ խոնավ վայրերում: Չիչխանի ծառի բարձրությունը կարող է հասնել մինչև 10 մ, ճյուղերը փշոտ են, մատղաշ ընձուղները՝ արծաթագույն: Տերևները մանր են, հերթադիր, պարզ, գծանշտարած, վերևից՝ կանաչ, ներքևից՝ սպիտակ, արծաթավուն:

Նյութը և մեթոդները

Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի տարածքում աճող վայրի չիչխանի պտուղներից հատապտղային ալկոհոլային խմիչքի արտադրության տեխնոլոգիան հիմնավորելու նպատակով:

Խնդիր է դրվել՝

- բացահայտել Սևանի ավազանում աճող վայրի չիչխանի՝ հատապտղային ալկոհոլային խմիչք ստանալու նպատակով որպես հումք օգտագործումը,
- ուսումնասիրել վայրի չիչխանի պտուղների (պտղամիս, սերմ, կեղև) քիմիական կազմը,
- փորձարկել չիչխանի պտուղներից ալկոհոլային խմիչքի արտադրության տեխնոլոգիան,
- որոշել գինեյուրի և պատրաստի արտադրանքի ֆիզիկաքիմիական ու զգայաբանական ցուցանիշները:

Փորձարարական ուսումնասիրության են ենթարկվել 2021 թ. սեպտեմբերին Սևանի ավազանից հավաքված վայրի չիչխանի պտուղները: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծական և փորձարարական մեթոդներ: Որոշվել է չիչխանի, ինչպես նաև գինեյուրի քիմիական կազմը:

Տիտրվող թթվությունը գնահատվել է ըստ ՊՕՍ ISO 750-2013-ի, ակտիվ թթվությունը՝ pH-150Ml մակնիշի pH-մետրով: Ճարպի, խոնավության, չոր նյութերի, սպիտակուցի, մոխրի, ածխաջրերի, թաղանթանյութի, սպիրտի պարունակությունը և գինեյուրի շաքարայնությունը որոշվել են համապատասխան ՊՕՍ-երի (ՊՕՍ 8756.21-89, ՊՕՍ 33977-2016, ՊՕՍ 25011-2017, ՊՕՍ 25555.4-91, ՊՕՍ 26176-91, ՊՕՍ 31675-2012, ՊՕՍ 13192-73, ՊՕՍ 32095-2013, ՊՕՍ 10846-91) հիման վրա:

Արդյունքները և վերլուծությունը

Սևանի ավազանում աճող վայրի չիչխանի պտուղների տեխնոլոգիական ցուցանիշների գնահատման նպատակով որոշվել է պտուղների քիմիական կազմը (աղ. 1):

Հետազոտության արդյունքների համաձայն՝ չիչխանի պտուղները պարունակում են օրգանիզմին անհրաժեշտ հիմնական օրգանական նյութերը (սպիտակուցներ, լիպիդներ, ածխաջրեր, հանքային նյութեր, օրգանական թթուներ), իսկ դրանց pH-ը մոտ է մարդու ստամոքսաղիակի ակտիվ թթվայնության ցուցանիշին:

Չիչխանի պտուղներից ալկոհոլային խմիչք ստանալու համար պատրաստվել է բաղցու (Յ.Խ. Кишковский, А.А. Мерзжаниан, 1984):

Չիչխանի պտուղները նախ խնամքով մաքրվել են աղբից և ճյուղերից: Ուշադրություն է դարձվել, որ հնարավորինս պահպանվեն կեղևի մակերեսին գտնվող ծաղկափուշի և բնական խմորանկերը: Մաքրած 9 կգ պտուղները տրորվել են մինչև հյութի անջատումը: Այնուհետև տրորված զանգվածը լցվել է խմորման համար նախատեսված 20 լիտրանոց պահամանի մեջ, ապա անընդհատ խառնելով ավելացվել է 3 լ 23-25 °C ջեմաստիճանի ջուր, իսկ վերջում աստիճանաբար, չդադարեցնելով խառնումը՝ 3 կգ շաքարավազ (1-ական կիլոգրամ մասնաբաժիններով):

Աղյուսակ 1. Սևանի ավազանում աճող չիչխանի պտուղների քիմիական կազմը*

Հետազոտման օբյեկտը	pH	Թթվություն ըստ խնձորաթթվի	Մասնաբաժինը, %					
			ածխաջրեր	սպիտակուցներ	ճարպեր	խոնավություն	մոխիր	թաղանթանյութ
Կեղև	3,42	2,4	18,9	11,9	34,8	9,3	5,6	15,8
Պտղամիս	3,60	3,12	6,6	4,2	10,8	67,9	1,2	6,8
Սերմեր	6,32	0,83	9,7	25,8	38,9	5,8	11,6	9,9
Զուսպ	5,32	1,08	17,8	18,9	36,3	7,9	9,2	10,8

*Կազմվել է հեղինակների կողմից:

Ստացված զանգվածը հերմետիկորեն փակվել է հիդրոփակակա միջոցով ապահովվել է գազերի հեռացումը: Խմորումն ընթացել է 18-25 °C ջերմաստիճանի պայմաններում:

Չիչխանի պտուղներում լիպիդների բարձր պարունակությամբ պայմանավորված՝ առաջին մի քանի շաբաթների ընթացքում գոյացել է յուղային ֆրակցիա (թաղանթի տեսքով), որը հեռացվել է չմանգոտվող պողպատից պատրաստված թիթեղի օգնությամբ: Խմորումն անընդհատ ակտիվ վիճակում պահելու համար խմորվող զանգվածն օրվա ընթացքում մի քանի անգամ խառնվել է: Դիտարկումները կատարվել են հինգ ամիս: Այդ ընթացքում որոշվել են չիչխանից պատրաստված գինեկուրի ֆիզիկաքիմիական ցուցանիշները (աղ. 2):

Խմորման ավարտին չիչխանի քաղցուն անջատվել է նստվածքից և ֆիլտրվել: Այնուհետև որոշվել են չիչխանի պտուղներից պատրաստված ալկոհոլային խմիչքի ֆիզիկաքիմիական և զգայաբանական ցուցանիշները (աղ. 3):

Աղյուսակ 2. Սևանի ավազանում աճող վայրի չիչխանի պտուղներից ստացված գինեկուրի բնութագիրը*

Հետազոտման օբյեկտը	Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ				
	շաբաթի զանգվածային բաժինը, գ/դմ ³	տիտրվող թթուների զանգվածային կոնցենտրացիան, գ/դմ ³	ցնդող թթուների զանգվածային կոնցենտրացիան, գ/դմ ³	մնացորդային էքստրակտի զանգվածային կոնցենտրացիան, գ/դմ ³	սպիրտի ծավալային մասնաբաժինը, ծավ., %
Չիչխանի գինեկուր	2,6	7,9	0,42	12,8	11,8

Աղյուսակ 3. Սևանի ավազանում աճող վայրի չիչխանի պտուղներից ստացված ալկոհոլային խմիչքի բնութագիրը*

Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ	Նյութի պարունակությունը 100 մլ-ի հաշվով
Ջուր, %	88,2
Սպիրտակուց, %	1,2
Ճարպ, %	5,2
Շաքար, %	4,2
Թաղանթանյութ, %	0,2
Չզայաբանական գնահատականը	Ըմպելիբին բնորոշ հաճելի համով և յուրահատուկ բուրմունքով, միասեռ, բաց դեղին գունավորմամբ

* Կազմվել են հեղինակների կողմից:

Ըստ աղյուսակ 3-ում ամփոփված տվյալների՝ չիչխանի պտուղներից պատրաստված ալկոհոլային խմիչքում չոր նյութերի պարունակությունը կազմում է 10,8 %, ինչը վկայում է սննդային բարձր հագեցվածության մասին:

Հատկապես ուշագրավ է, որ վայրի չիչխանի պտուղներից պատրաստված ալկոհոլային խմիչքի քաղցուն լավ է խմորվում վայրի խմորասնկերով, իսկ պատրաստի խմիչքն ունի բարձր սննդային արժեք:

Չիչխանի պտուղներից ստացված գինեկուրը հատապտղային ալկոհոլային խմիչքի արտադրության տեխնոլոգիայում կիրառելը պայմանավորված է վիտամինների (C, P, B₁, B₂, B₃, B₆, B₉, E, K), օրգանական թթուների (խնձորաթթու, գինեթթու, բենզոյական թթու), կարոտինոիդների, ֆենոլային նյութերի և դաբաղանյութերի, ինչպես նաև մակրո- և միկրոտարրերի արժեքավոր բաղադրությամբ: Բացի այդ՝ նման հումքի օգտագործումն ապահովում է բարձր կենսաբանական արժեք ունեցող խմիչքների արտադրություն (H.A. Мехуэла, А.Л. Панасюк, 1984):

Եզրակացություն

Հիմք ընդունելով, որ բնական հումքից ստացված խմիչքները պարունակում են մեծ քանակությամբ սննդարար և համային նյութեր՝ ուսումնասիրվել է վայրի չիչխանի պտուղներից հատապտղային ալկոհոլային խմիչքի արտադրության տեխնոլոգիան: Մասնավորապես որոշվել են Սևանի ավազանում աճող վայրի չիչխանի պտուղների քիմիական կազմը, ստացված գինեկուրի և պատրաստի արտադրանքի ֆիզիկաքիմիական ու զգայաբանական ցուցանիշները:

Հետազոտությամբ հիմնավորվել է, որ բնական կենսաբանական ակտիվ նյութերի պարունակության շնորհիվ վայրի չիչխանի պտուղներից ստացված խմիչքի տեխնոլոգիայի կիրառումը կարող է ապահովել հատապտղային ալկոհոլային արժեքավոր խմիչքների արտադրություն:

Գրականություն

1. Կազումով Ն.Բ., Կազումյան Կ.Ն., Սուքոյան Մ.Ռ. Հայաստանի խաղողի և պտղահատապտղային գինիների տեխնոլոգիա. - Եր., 2013. - 340 էջ:
2. Земцова А.Я. и др. Токоферолы плодовой мякоти четырех подвидов облепихи (*Hippophae rhamnoides* L.) в лесостепи Алтaysкого края // Химия растительного сырья; пер. с англ. - Барнаул, 2019. - N 1. - С. 147-153. <http://journal.asu.ru/cw/article/view/4256>.
3. Кишковский З.Н., Мерджаниан А.А. Технология вина. - М., 1984. - 503 с.
4. Мехуэла Н.А., Панасюк А.Л. Плодово-ягодные вина. - М.: Легкая и пищевая промышленность, 1984. - 240 с.

5. Салмин А.А., Приходько Ю.В. Новые аспекты технологии производства плодово-ягодных вин с повышенным содержанием аскорбиновой кислоты // Вестник ТГЭУ. - 2007. - N 3. - С. 37-45.
6. ГОСТ 32095-2013. Продукция алкогольная и сырье для ее производства. Метод определения объемной доли этилового спирта. <https://internet-law.ru/gosts/gost/54855/>.
7. ГОСТ 10846-91. Зерно и продукты его переработки. Метод определения белка. <https://internet-law.ru/gosts/gost/28268/>.
8. ГОСТ 25011-2017. Мясо и мясные продукты. Методы определения белка. <https://internet-law.ru/gosts/gost/65113/>.
9. ГОСТ ISO 750-2013. Продукты переработки плодов и овощей. Методы определения титруемой кислотности. <https://internet-law.ru/gosts/gost/55653/>.
10. ГОСТ 13192-73. Вина, виноматериалы и коньяки. Метод определения сахаров. <https://internet-law.ru/gosts/gost/1573/>.
11. ГОСТ 8756.21-89. Продукты переработки плодов и овощей. Методы определения жира. <https://internet-law.ru/gosts/gost/28537/>.
12. ГОСТ 33977-2016. Продукты переработки фруктов и овощей. Методы определения общего содержания сухих веществ. <https://internet-law.ru/gosts/gost/64328/>.
13. ГОСТ 25555.4-91. Продукты переработки плодов и овощей. Методы определения золы и щелочности общей и водорастворимой золы. <https://internet-law.ru/gosts/gost/10506/>.
14. ГОСТ 26176-91. Корма, комбикорма. Методы определения растворимых и легкогидролизуемых углеводов. <https://internet-law.ru/gosts/gost/19087/>.
15. ГОСТ 31675-2012. Корма. Методы определения содержания сырой клетчатки с применением промежуточной фильтрации. <https://internet-law.ru/gosts/gost/52702/>.
16. <https://econews.am/?p=7609&l=am>. Չիշխան. ՀՀ րոպ-ետր (դիտվել է՝ 01.07.2022 թ.):

Использование плодов дикорастущей облепихи в качестве сырья для производства плодово-ягодного алкогольного напитка

М.Р. Варданян, А.Ж. Тер-Мовсисян

Национальный аграрный университет Армении

Ключевые слова: дикорастущая облепиха, виноматериал, плодово-ягодный алкогольный напиток, облепиховый алкогольный напиток, физико-химические показатели

Аннотация. Исследован химический состав плодов (мякоти, семян, кожуры) дикой облепихи, произрастающей в бассейне озера Севан. Из ягод облепихи был получен плодово-ягодный алкогольный напиток. Определены физико-химические и органолептические показатели полученного виноматериала и готового продукта.

Напиток, изготовленный из плодов дикорастущей облепихи, содержит натуральные биологически активные вещества, поэтому благодаря разработанной технологии можно обеспечить производство ценного плодово-ягодного алкогольного напитка.

The Use of Wild Sea Buckthorn Berries as a Raw Material for the Production of Fruit and Berry Alcoholic Drink

M.R. Vardanyan, H.Zh. Ter-Movsesyan

Armenian National Agrarian University

Keywords: wild sea buckthorn, wine material, fruit and berry alcoholic beverage, sea buckthorn alcoholic drink, physical and chemical parameters

Abstract. The chemical composition of wild buckthorn berries (fruit pulp, seed, shell) grown at the Sevan basin has been investigated. Fruit and berry alcoholic beverage has been produced from the buckthorn berries. The physicochemical and organoleptic indices of the produced wine material and fruit and berry alcoholic beverage has been determined.

The beverage produced from the wild buckthorn contains natural bioactive substances, and hence, due to the developed technology the production of high-value fruit and berry alcoholic drinks can be ensured.

Շնորհակալ եմ 04.07.2022 թ.
Գրախոսվել է՝ 20.07.2022 թ.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ ՆԵՐԱՌՎԱԾ Է ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱԿԱՆ ՉԱՍԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԻՆԱԿԻՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ:

ИЗДАНИЕ ВКЛЮЧЕНО В ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ ВАК МНОКС РА, В КОТОРЫХ ДОЛЖНЫ БЫТЬ ОПУБЛИКОВАНЫ ОСНОВНЫЕ РЕЗУЛЬТАТЫ И ПОЛОЖЕНИЯ ДИССЕРТАЦИЙ НА СОИСКАНИЕ УЧЕНОЙ СТЕПЕНИ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК.

THE JOURNAL IS INVOLVED IN THE LIST OF SCIENTIFIC PERIODICALS RELEVANT FOR PUBLICATIONS OF THE RESULTS AND PROVISIONS OF DOCTORAL AND PHD THESES AND APPROVED BY THE HIGHER EDUCATION QUALIFICATION COMMITTEE OF THE RA MoESCS.

ՀՈԴԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

- Հոդվածներն ընդունվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:
 - Հոդվածի առավելագույն ծավալը չպետք է գերազանցի 10 համակարգչային էջը (ներառյալ ամփոփագրերը):
 - Հեղինակների թիվը չպետք է գերազանցի չորսը:
 - Հեղինակների տվյալներում պետք է ներառվեն հեղինակ(ներ)ի անունը, ազգանունը, հայրանունը, գիտական աստիճանը, աշխատավայրը, էլ. հասցեն:
 - Հոդվածը ներկայացվում է տպագիր և էլեկտրոնային (WORD ձևաչափով) տարբերակներով:
 - Հոդվածը շարադրվում է հետևյալ կառուցվածքով.** վերնագիր, 5 բանալի բառ, «Նախաբան», «Նյութը և մեթոդները», «Արդյունքները և վերլուծությունը», «Եզրակացություն», «Գրականություն»:
 - Գրականության հղումները կատարվում են տեքստում՝ փակագծում նշվում են հեղինակը և հրատարակման տարեթիվը:
 - Հոդվածները պետք է ունենան ամփոփագրեր. հայերենով և ռուսերենով ներկայացված հոդվածների դեպքում՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, անգլերենի դեպքում՝ անգլերեն լեզվով:
 - Յուրաքանչյուր լեզվով ներկայացված ամփոփագրի ծավալը չպետք է գերազանցի 600 նիշը (առանց բացատրերի):
 - Հայերեն և ռուսերեն հոդվածների վերնագրերը, հեղինակ(ներ)ի տվյալները և բանալի բառերը ներկայացվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:
 - Գրականության ցանկը ներկայացվում է այբբենական կարգով:
 - Էլեկտրոնային հղումը որպես աղբյուր մեջբերելիս գրականության ցանկում նշվում է դիտման ամսաթիվը:
- Հոդվածներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.** անգլերեն և ռուսերեն հոդվածների տառատեսակը՝ Times New Roman, հայերեն հոդվածներինը՝ GHEA Grapalat, տառաչափը՝ 12, միջտողային տարածությունը՝ 1.5, վերնագիրը՝ մեծատառերով, գծապատկերները՝ Word, Excel ծրագրերով, աղյուսակները՝ ուղղահայաց դիրքով (Portrait), բանաձևերը՝ Microsoft Equation 3.0 ձևաչափով:

Կարգին չհամապատասխանող հոդվածները չեն ընդունվում: Հոդվածներն ուղարկվում են գրախոսման: Մերժված հոդվածները չեն վերադարձվում հեղինակին: Հոդվածները չեն հրատարակվի, եթե ամբողջությամբ կամ համառոտ տպագրված լինեն այլ պարբերականում:

ПОРЯДОК ПРИЁМА СТАТЕЙ

- Статьи принимаются на армянском, русском и английском языках.
- Объём статьи не должен превышать 10 компьютерных страниц (включая аннотации).
- Число авторов не должно превышать четырёх.
- В сведениях об авторах должны быть включены имя (имена), фамилия, отчество, научная степень, место работы, эл.адрес.
- Статья представляется в печатном и электронном (в формате WORD) вариантах.
- Статья должна быть изложена следующим образом:** заглавие, 5 ключевых слов, «Введение», «Материал и методы», «Результаты и анализ», «Заключение», «Литература».
- Ссылки на литературу производятся в тексте с указанием в скобках автора и год издания.
- Статьи, написанные на русском и армянском языках, должны содержать аннотацию на армянском, русском и английском языках, в статье на английском аннотация пишется на английском языке.
- Объём представленных аннотаций на каждом языке не должен превышать 600 знаков (без пробелов).
- Заглавия, данные автора (авторов) и ключевые слова статей на армянском и русском языках представляются на армянском, русском и английском языках.
- Список литературы представляется в алфавитном порядке, сначала на языке статьи, затем на иностранном языке.
- При ссылке в статье на интернет-ресурс как источник информации, в списке литературы необходимо отметить дату просмотра.

Технические требования к статьям: для статей на английском и русском языках - шрифт Times New Roman, для армянского - GHEA Grapalat; размер букв - 12; межстрочное расстояние - 1.5; заголовки - прописными буквами; графические изображения - программой Word, Excel; таблицы - вертикально (Portrait); формулы - в формате Microsoft Equation 3.0;

Статьи, не отвечающие требованиям, не будут приняты. Статьи передаются на рецензирование. Статьи, не принятые к печати, не возвращаются автору. Статьи не будут опубликованы, если ранее были полностью или частично опубликованы в других периодических изданиях.

THE STANDARDS FOR SUBMITTING ARTICLES

- The articles are accepted in Armenian, Russian and English languages.
- The size of the article shouldn't exceed 10 PC pages (including summaries).
- The number of authors should not exceed four.
- Full name, academic degree, workplace and e-mail of the author (s) should be included in the information about the authors.
- The article is submitted in a hard copy and electronically (WORD format).
- The article should have the following structure:** title, 5 keywords, "Introduction", "Materials and Methods", "Results and Discussions", "Conclusion", "References".
- References to the literature should be indicated in the text (the author and the date of publication in the parentheses).
- Articles should have abstracts; for Armenian and Russian articles they should be in Armenian, Russian and English languages, for English articles only abstracts in English language are required.
- The volume of the abstracts presented in each language should not exceed 600 characters (no spaces).
- The titles, information about the author(s) and keywords should be presented in Armenian, Russian and English languages.
- The list of references should be arranged in alphabetical order.
- When citing internet links as a literature source the date of access should be mentioned.

Technical requirements for articles: font for English and Russian articles: Times New Roman, for Armenian articles: GHEA Grapalat, font size: 12, interstitial spacing: 1.5, title: with capital letters, charts: with Word, Excel, tables: vertical (Portrait), formulas: in Microsoft Equation 3.0 format.

Articles that do not meet the requirements are not accepted. Articles are sent for review. Refused articles are not returned to the authors. The articles which are already published in other scientific journals (completely or partially) can't be valid for publication in our journal.

☎ (+374 12) 56-07-12, (+374 12) 58-79-82

✉ agriscience@anau.am

URL: <https://anau.am/scientific-journal>

Հասցե՝ Երևան 0009, Տերյան 74, IV հարկ, 421 սենյակ

Адрес: Ереван 0009, Терян 74, IV этаж, 421 кабинет

Address: 74 Teryan, Yerevan 0009, IV floor, room 421